

negative
of 8 prints No. .

85
U-23

Խորհրդային Մշատանի Խոսմողկոմատի Սոց. Դաս. Գլխ. Շատեր գրական-
գեղարվեստական սեկցիայի

85
5-23

ՄԱՅԻՍ

ԻՄ ԳԻՐՔԸ № 2

ՄԱՅԻՍՄԵԿԱՆ ՏՈՒԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴՐՈՅՆԵՐԻ ՅԵՎ
ՊԻՌՆԵՐԱԿ. ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՅՈՒՅՆ

33466-63

Վ. Խ. Ա. Հ. ՊԵՏԶՐԱՏ
ԹԻՖԼԻՍ - 1927

85
5-23


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1) Մայիս. — բանաստ. Գեորգ Գրիգ	1
2) «Որուխովո». — պիյեսա Վ.	2
3) Մայիսի մեկը. — բանաստ., թարգմ. Հո. Պ.	10
4) Փառաբանեցեք. — յերաժշտ. Ազատ Մանուկյան	11
5) Մայիսը վառ. — բանաստ. Գիտակ	12
6) Յերկու փախստականները. — պատմվ. Արազի	13
7) Մայիսյան արձագանք (մայսմեկյան ցույցերի համար). — թարգ. Գրիգ	19
8) Մայիսմեկյան ցույցեր. նկար. Գ. Շարբարչյան	21
9) Դեպի հյուսիս. — պիյեսա Առևուելդեր, թարգմ. Գ. Մեսյան	22
10) Մայիսի մեկին. — բանաստ. Գ. Գ.	41
11) Հարամ փողեր. — պատմ. Նար-Դոս	42
12) Մայիսի մեկը. — խոսք Հ. Հակոբյանի, յերաժշտ. Այվաղյանի	49
13) Բանվորական Մայիսը. — բեմադրություն մանկապարտեզի համար իմբական արտասանությամբ և ձայնագրված յերգով Հո. Պ. յերաժշտ. Ա. Տիգրանյան	50
14) Տանգ-Հոնգ դյուզում. — պատմվ., Զանկ-Բու (չին դրող)	55
15) Մայիսմեկյան զբոսանք. նկար. Ի. Ստարոսելսկյայ	61
16) Մայիսմեկյան. — բանաստ. թարգմ. Մ. Ի.	62
17) Հնարագետ քեռին. — պատմ. Մ. Պետրոսյան	63
18) Մայիսմեկյան կանչ. — բանաստ. Մարտիկ	70
19) Աղուն պահող Արութը. — պատմ. Մ. Դարբինյան	71
20) Մեր նավը. — բանաստ. Գ. Գրիգորյան	73
21) Մայիս. խոսք Մատինյանի, յերաժշտ. Ումր-Շատ	77
22) Մայիսի մեկը. (պատմական ակնարկ) Արդանո	83
23) Մայիսի մեկը դպրոցում. — Վ. Մամուլյան	91
24) Մայիսմեկյան խաղեր. *	94



ՄԱՅԻՍ

Ծաղկանց հոտով,
 Պայծառ ժապով
 Սիրուն մայիսն ե գալիս,
 Սար ու ձորին,
 Լայն գաշտերին
 Հնչուն վողջույն ե տալիս...
 Ի՞նչքան թոշուն,
 Ի՞նչքան մրջուն,
 Ի՞նչքան թիթեռ ե բերում.
 Գույն-գույն ծաղկով,
 Կանաչ գորգով
 Սար ու անտառ զարդարում...
 Հեռու հանգում,
 Կանաչ գաշտում
 Յերգն ե հնչում մաճկալի,
 Ուրախ սրտով,
 Բարի ժպտով,
 Վառ հույսերով լի ու լի...
 Կանաչ վոտով,
 Ծաղկանց հոտով
 Նախշուն մայիսն ե գալիս,
 Սար ու ձորին,
 Ծով գաշտերին
 Հնչուն վողջույն ե տալիս...



“Ո Բ Ո Ւ Խ Ո Վ Ո”

Ա. Ա. Զ Ե Ր Ա Ն Գ Ո Ր Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Բեմը ներկայացնում է Ոբուխովյան գործարանի արհեստանոցներից մեկը: Մեքենաներ: Մի մեծ վանդակավոր պատուհան: Բանվորների մի մեծ խումբ:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Դու, յեղբայր, լսեցի՞ր վազվա մասին, հը՝:

Զ Ա Խ Ա Բ Ո Վ. — Լսեցի, ինարկե լսեցի: Ինչպես չենք լսի մենք, բանվորներս... վաղը հայտնի որ և:

Սենկին. — Հայտնի ասեցիր ու պրծար: Իսկ դու կողմնակից ես, կողնես:

Զ Ա Խ Ա Բ Ո Վ. — Վոնց վոր ընկերներս, ենպես ել յիս: Ինձ ինչ, յեթե ամբողջ խմբով կը լինենք... այն ժամանակ, ինարկե...

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Ամբողջ խմբով: Իսկ ումնից և կազմված այդ խումբը, յեթե վոչ առանձին մարդկանցից: Ահա դու, ասենք. միավոր ես—մի մարդ—վաշնչություն, թքել ու տրորել, իսկ և յիս և Սենկինը—ահա քեզ կորիզը. մեզ կհետեւն և ուրիշները:

Սենկին. — Ի՞նչ ես համառում. գործադուլ կանես

Զ Ա Խ Ա Բ Ո Վ. — Դե, լավ:

Ք Ե Տ Բ Ո Վ. — (Մոտենալով և ծխախոտը փաթաթելով): Դե, առենենք, վոնց են ճանապարհ գնում:

Սենկին. — Հիմար ես դու. թող ճանապարհ գնեն: Մեծ բան է: Եստեղ բանը նրանում չի, վոր մի որ զբոսնես և գործից դադար տաս: Գործը մեծ է, հսկայական, պետք ե համերաշխություն ցույց տալ, ընդհանուր բանվորական գործի համար պետք ե գլուխ բարձրացնել:

ՍՈՅԻԻՆ. — Միթե կյանք ե սա, եյ, յեղբայրներ, թշվառությունն և մեր բաժինը:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Զգիր, ընկեր, թե վոր ծանր և կյանքը—պետք ե ուրեմն գործադուլ անել: Դուրս յելիր Մայիսի մեկին: Բանը տասնութեկ ժամի մեջ չե: Դե, ասա, միթե դու իրավունքներ ունես: Ամեն մի վոստիկան, ամեն մի վարպետ աշխատում ե աստմանիրիդ տալ: Զհամարձակվես խոսել

չհամարձակվես ծպտուն հանել (Ներս ե գալիս Ցվետկովը, մեքանիկական ցեխի արհեստանոցի բանվոր): Ցվետկով, դու ձեր տղաների կողմից ես գալիս:

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — Պարզ է: Չեզ մոտ եմ ուղարկված: Դե, ինչպես են գործերը ձեղ մոտ, տղաներ:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Կա ելի, իսկ ձեզ մոտ:

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — Ինչ կա վոր ավելի լավ, քան պետք է:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Համաձայն են, թե չե:

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — Պարզ է, համաձայն են, ընկերը: Բոլորը ինչպես մի մարդ են կանգնած մեր արհեստանոցում: Չենք աշխատի ու վերջացավ:

Պ Ե Ց Ր Ո Վ. — Մենք ել չենք աշխատի, յեղբայր: Այսինքն բոլորի համար չեմ կարող խոսք տալ, այլ նրանց համար, վորոնք արհեստանոցում են հիմք (ցույց ե տալիս ձեռքով): Չենք, այ մենք գործադուլ ենք անում:

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — (Ռուս թոթվելով): Շնորհակալ եմ, Պետրով, բարի լուրիդ համար: Նշանակում է, միասին ենք: Շիլաֆլավը կեփենք: Ահա թե ինչ, տղաներ: Հավաքվեցեք միասին և ելի կանչեք: Գործը շատ ե կարեռ: Այս բոպեյին այստեղ կզա մի ընկեր, մի քանի բաներ կկարգա ու կբացատրի: Միայն լուս պիտի մնաք, լսում եք: Իսկ յեթե վարպետ կամ ինժիներ, կամ ուրիշ սրիկա կզա այստեղ, դուք նրան կթագցնեք: Հավաքվեցեք և ընկերոջը գուրս թողեք ահա այն դռնով: Հասկանում եք:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Հասկանում ենք: Առաջին անգամ չե, վոր ազիտատոր ենք ընդունում: Բեր այստեղ ընկերոջը:

Պ Ե Ց Ր Ո Վ. — Թող կարգա: Բեր նրան այստեղ:

Ս Ի Դ Ո Ր Ե Ն Կ Ո. — Պարզ է, կթագցնենք նրան:

Ո Ո Ֆ Ի Ի Ն. — Բայց վորակից ե նա, այն ընկերը:

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — Սոցիալ-գեմոկրատական կուսակցությունից ե ուղարկված այն ընկերը, վորին ուղարկել ե բանվորական կամքը:

Պ Ե Ց Ր Ո Վ. — Բեր նրան այստեղ (բարձր) եյ, աղերք, մի հավաքվեցեք այստեղ: Եյ, աղերք, յեկեք այստեղ, մի զրոցենք: (Սիդորենկոյին) Հայտնիր նրանց եր այստեղ: (Մանում են մի քանի բանվորներ):

Ց Վ Ե Ց Կ Ո Վ. — Դե, իսկույն: (Դուքս ե գնում և վերադառնում ե միջին տարիքի մի բանվորի հետ).

Բ Ա Ն Վ Ո Ր. — (Վերաբերուի ծոցից զգուշությունը հանում ե մի կապոց թռուցիներ): Բարե ձեզ, ընկերներ:

Զ Ա Յ Ն Ե Ր. — Բարե, խոսիր ինչ ունես ասելու:

Ա. Ա. Ք Ե Ր Ա Ն Դ Ր Ո Վ. — Տգերք, նա կբացատրի վաղվան Մորվա այսինքն մատին: Լսեցեք, աղերք: (Լարված ուշադրություն):

Բ Ա Ն Վ Ո Ր. — Եյ, ընկերներ, ամենից առաջ, վերցրեք այս թերթիկները և թագրեք, տանը կկարգաք: (Բաժանում է): Իսկ հիմի բացեք: (Կարդում է): Մուսասամանի Սոցիալ Դեմոկրատական Բանվորական կուսակցություն: Բանվորներ բոլոր յերկրների, միացեք: «Մայիսի 1-ը»: Վողջույն ձեզ, ընկերներ, ուստական ամբողջ պրոլետարիատին, մեր մեծ սոցիալ զիմոնիր-



տական գործի բոլոր մարտիկներին—վողջույն, և շնորհավորում ենք մեր
պայծառ, մեր համաշխարհային, մեր բարսպարական տոնի գալուստը:

Բացգեցին մեր աչքերը, և մենք չենք ուզում, չենք կարող, չպեսք և լի-
բացգեցին մեր աչքերը, և մենք չուզնենք, վոր մեր ձեռքից բոնած ման ածեն,
նենք կույր: Մենք պետք չուզնենք, վոր մեր ձեռքից բոնած ման ածեն,
մենք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-
մանք իւշներս կպանենք մեր ճանապահները: Մեր վարիչները պետք ե ընտ-

մանականի ամբողջ պրոլետարիատի անունից—թող կորչի միապե-
տությունը: Կորչի ցարը: Կորչեն ինքնիշխան մինիստրները, վորոնք Ռու-
սաստանի ժողովրդի կուրծքն են քայլայում իրենց առուրքերով, իրենց բեր-
դերով, սվինիերով, մարակներով:

Մենք պրոլետարներս, ասում ենք ձեզ—տվեք մեզ քաղաքական ազա-
տություն, տվեք մեզ ժաման բանվորական որ և մենք ցույց կտանք,
թե ինչքան յիշանիկ կլինի կյանքը յերկրի վրա:

Վողջույն ձեզ, ընկերներ: Թող լուսավորի ձեզ մայիսյան պայծառ արել:

Կեցցի Ռուսաստանի, կեցցի միջազգային Սոցիալ Դեմոկրատիան Կոմիտե:

Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական կենտրոնական Կոմիտե:

Ըսկերներ, հասկացաք բոլորդ:

ԲՈԼՈՐԸ.—Հասկացանք, այդանդ ինչ կոր: Պարզ ե ասված ամեն

ԲԱՆՎՈՐ.—Այսպիս, ուրեմն, ընկերներ, վաղը աշխատանքի միք գուրու-

թա: Տոնեցեք բոլոր աշխատավորների մեջ տոնը:

ԲՈԼՈՐԸ.—Վոչ չի գուրու գութան գութան կամանիքը: Շնորհակալ ենք,

ընկեր: ԱԵՆԿԻՆԻ.՝ Ե՞ս, տվերք, մեկը գալիս ե: Հավաքեցեք:

ՊԵԽ.՝ Այս այսպիս, այն գոնովը գնա: Շուտ արեք, ընկերներ: (Բոլորը հա-
զեցրով.՝ Այ, այն գոնովը գնա: Շուտ արեք, ընկերներ: Բոլորը հա-

վաքվում են, ծածկում են բանվորին, վորը ձկիվում ե գոնով: Սրանից ան-

միջազգան հետո մանում են գործարանի վարիչ—գնդապետը, վոստիկանա-

պետը, մի քանի ինժեներներ: Բոլոր բանվորները կանգնում են իրենց տե-

ղերը, զաղգյաների մաս: (Լություն):

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՎԱՐԻՉԸ.՝ Ո՞վ ե այսուեկ: Պատասխանեցեք:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.՝ Զերք գերազանցություն, վոչ փոք չկար այսուեկ, բա-

ցի մեր գարպետ Պերֆիլիից:

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ Մառամ եք, շան լակուներ, դեմքերիցդ յերեսում ե,

վոշ ստում եք: Այստեղ բոլոր արհեստանոցները մի սրիկա յեր արջում: Ինչ

վոր անպիտան թղթեր եք բաժանում: Զեզ մոտ յեկան նա: Պատասխան
տվեք: Լսում եք, պատասխան ավեք, թէ չե վատ կլինի:

ԶԱԽԱՐՈՎՊ.՝ Պարսն վոստիկանապետ, վոչ փոք չի յեղել մեզ մոտ: Իս-
չու եք նեղություն կրում, Ո՞վ կարող է մեզ մոտ իրներ, բացի բանվորնե-
րից ու իշխանակորներից:

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ Կիտեմ յես ձեզ: Սուտ եք տառմ, սրիկաներ: (Պետ-
րովին): Ո՞ւր գնաց այն թխաղեմ մարդը: Հը:

ՊԵՏՐՈՎՊ.՝ Յես վոչին չեմ տեսել պարսն վոստիկանապետ: Գուցե
ձեր աչքին յերեաց: Իսկ մեզ մոտ եյին միայն մեր վարպետները:

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ (Մոտենում է Պետրովին և ապտակում է նրան): Պատասխան տուր, անիծյալ սրիկա:

ՊԵՏՐՈՎՊ.՝ Ինչու յեք գարկում: Իրավունք չունեք բանվորին իփելու: Ինչու համար:

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ Յես քեզ իրավունք ցույց կը տամ, սրիկա: Ազա-
տություն ուզեց սիրտ: Տես մի սրան:

ԶՈՅՆԵՐ.՝ Ի՞նչ ե կովում: Ինչու յե մարդուն ծաղրում իզուր: Ի՞նչ ե
պատահել:

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ Դե, միք խոսի—ձեզ ավելի վատ կլինի: (Գործարա-
նի վարիչին): Զերդ գերազանցություն (Ցածր), գուցե և այն անձը չի յե-
կել այստեղ: Համենայն գեպս բարի յեղեք ասելու նրանց...

ԳՈՐԾ.՝ ՎԱՐԻՉԸ.՝ Ահա ինչ, տղերք, վաղը զանազան բունտովշները
ու զյաղաներ կառաջարկեն ձեզ զորձագուլ անել և զանազան անկարգ գոր-
ծեր որենքի ու կարգերի գեմ: Այդ բունտովշները զնում են ցարի, իշխա-
նության գեմ: Զգուշացնում եմ ձեզ, վոր յուրաքանչյուր բանվոր, վորը
վաղը, այդ մայիսի մեկի որը, չի գա աշխատանքի անմիջապես կարձակվի
և զուրս կարվի գործարանից: Ահա իմ գերջին խոսքը: Լսում եք... (Լու-
թյուն):

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.՝ Կարձակվի աշխատանքից, այդ ճիշտ ե: Իսկ բացի
այս, նա կընկնի վոստիկանատուն: Երան այնտեղ այդպիսի մի վկայական
կտան, վոր նա չկարգանա վոչ մի գործարանում աշխատանք գտնել: Բո-
լորը կգիտենան, վոր նա ծույլ ե ու բունտովշնեկ: Հասկանում եք: (Լու-
թյուն): Գնանք, ձերդ գերազանցություն: Սրանք չեն համարձակվի:

ՎԱՐԻՉԸ.՝ Գնանք փականգործական արհեստանոցը: (Քնում են):
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՊ.՝ Տղերք, վախեցաք:

ԶՈՅՆԵՐ.՝ Բան չունես... խկի յել չվախեցանք: Պրծած ե: Նրանք
վաղը կտեսնեն գեմ:

ԶՈՅՆԵՐ.՝ Ճիշտ ե, ընկերներ, բոլորս գործագուլ կանենք: Միք վա-
խենա: Ամբողջ գործարանը խո չեն կարող գուրս անել: Մենք միլիոն ենք,
մեզ չեն կարող զուրս շպրտել: Իսկ յեթե բոլոր բանվորներին կրշեն, ինքը
ցարը առանց վարտիքի կմա նստած: Մենք, յեղբայրներ, յերկրի աղն ենք:
Առանց մեզ վոչինչ չի շինվի: Իսկ մենք ինքներս ամեն ինչ շինում ենք
մեր կոշտացած ձեռքերով: Ճիշտ ե:

ԶՈՅՆԵՐ.՝ Ճիշտ ե:
(Վարագույր)

ՅԵՐԱԲՈՐԻ ԳՈՐԾՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Որուխովյան գործարանի բակը: Մայիսի 2-ի առավոտն է: Բանվորների բազմություն: Աղաղակ, աղմուկ: Ընդհանուր շարժում: Հուզված գեմքեր:

ՊԵՏՐՈՎ. — Ընկերներ, միթե սա կարելի բան է, միթե այսպիս կարելի յէ, փոր մեր բանվորներին դուրս անեն գործից, յեթե մենք բոլորս եյինք գործադուլ անում:

ԶԵՅՆԵՐ. — Զի կարելի: Լավ ե բոլորիս արձակեն: Ի՞նչ են մեզ ծաղրում:

ՏՐՈՒԽՆԵԿ. — Քսանուվեց բանվոր ճանապարհ դրին, իսկ գործադուլ եյինք արել հազար ու կես բանվոր: Յես հարցնում եմ, ինչու նրանց ճանապարհ դրին միայն: Վհրանեղ և արդարությունը: Ի՞նչու պետք ե ընկերները մեզ համար տանջվեն:

ՊԵՏՐՈՎ. — Ամոթ մեզ, ընկերներ, փոր չկարողացանք նրանց ողնել:

ԶԵՅԱՐՈՎ. — Ծների պես դուրս քշեցին: Տղերը առանց մի զրոշի մասցին:

ՊԵՅԿԻՆ. — Մենք բոլորս, ամբողջ խմբով պատասխանառու յենք նրանց համար: Թող ավելի լավ ե բոլորիս քշեն: Անիծյալ հոգաներ: Արյունաբռուներ:

ԶԵՅՆԵՐ. — Ավելի լավ ե բոլորիս արձակեն: Ճիշտ է: Գնանք վարիչի մոտ, վորպեսզի բոլորիս արձակեն:

ՇԶԵՐԲԱԿՈՎ. — Իսկ մյուս արհեստանոցներին ամոթ: Ավելի լավ կլիներ, յեթե ամբողջ գործարանը գործադուլ աներ, այն ժամանակ բանը բանի նման կլիներ, թե չե միայն յերեք արհեստանոց... Ամոթ է, ընկերներ: Խարբեցին իրենց ընկերներին: Բոլորիս պետք եր Մայիսի մեկը տոնել:

ԶԵՅՆԵՐ. — Հիմարներ եյին: Ճիշտ է: Բոլորս պետք ե գործադուլ անելինք: Պարզ է, գնանք վարիչի մոտ: Թող դուրս անեն: Բոլորս գնանք:

ՇԶԵՐԲԱԿՈՎ. — Զի տղերք, թողեք կատակները: Վոչ թե բոլորս պետք ե թողնենք աշխատանքը, այլ պահանջենք, պահանջենք, փոր բոլոր դուրս արված ընկերներին հետ ընդունեն:

(Շարժումը մեծանում է: Գալիս և Ալեքսանդրովը):

ԶԵՅԱՐՈՎ. — Այ, տղերք, սրան քշեցին, ընկերը տուժեց:

ԶԵՅՆԵՐ. — Անիծյալ հոգաներ: Արյուն խմողներ: Ե՞մ, Ալեքսանդրով:

ՇԶԵՐԲԱԿՈՎ. — Քանի՞ հոգի յեն դուրս արել: Ճիշտ է, փոր քսանութեցն էն:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ. — Քսանուվեց մարդ: Առանց հաշիվը տալու, ստոր կերպով, գյաղայի պես դուրս շպրտեցին:

ՇԶԵՐԲԱԿՈՎ. — Տղերք, պահանջեցիք, փոր նրանց հետ ընդունեն: Շատ էն մեզ ծաղրելու: Գնանք զրասենյակը, գնանք բոլորս:

ԶԵՅՆԵՐ. — Քրասենյակը... զրասենյակը... պահանջենք, փոր ընդունեն... գնանքը...

ՍԵՐՈՅԵՆԿՈ. — Ընդունեն դուրս արվածներին: Կեցե՛ ութմամյա բանվորական որը: Կեցե՛ Մայիսի մեկը: (Շարժումը բեմի յետեր: Բանվորները

գնում են: Բեմի վրա մնում են մի քանի հոգի, վորոնք ուշադիր դիտում են: Մրանց թվում յերկու աղջիկ-բանվորուհիներ):

ՆՅՈՒԻՐԱ. — Նայիր, ինքը վարիչ իվանովը դուրս յեկավ: Տես, փորը դուրս պրծցը: Խոսում է: (Բազմությունը աղմկում ե բեմի յետեր: Ախ, անասուն: Չեմ ընդունի, ասում է: Տես ինչքան վոստիկաններ են հավաքվում: (Աղմուկ և աղաղակ. «Ընդունել բոլորին ընդունել, ումն եք դուրս արել: Լսում ես, դու»):

ՊԵՏՐՈՎ. — (Մտնում է արագ): Ահա ինչ, ընկերներ, նայեցեք ուշադիր, հիմի այստեղ վոստիկաններ ու ժանդարմներ կվաղեն, կզան: Կարող ե պատահել և կողակներն ել գան, փորձանքի ժամ է: Հենց փոր տեսնեք, գուացեք: Հասկացմաք:

ՆՅՈՒԻՐԱ. — Հասկացա, հիմար չեմ: Ի՞նչ ե կատարվում, պատմիք:

ՊԵՏՐՈՎ. — Պարզ է, թե ինչ ե կատարվում: Վարիչը արձակվածներին հետ չի ընդունում: Իսկ մենք մերը կը պահանջենք: Փողոց դուրս կը գանք դրոշակներով: Կը պահանջենք: (Բազմությունն աղմկում է: «Վոչվոք չի աշխատի»: «Ճամամյա բանվորական որ»: «Կորչեն գործարանատերերը»): Դե, այստեղ նորից խառնվում ե ամեն ինչ: Մեծ բաներ կարող են պատահել: Ամբողջ Ռուսիոն կանգնել: Յես վաղեցի: Տես, լսում ես, աղջիկ:

ՆՅՈՒԻՐԱ. — (Կավդիային). Համար թե գոսում է նա: Ամբողջ գործարանը հավաքվեց: Մի հինգ հազար կը լինի: Սարսափելի յե, վորքն մարդ կա:

ԿԱՎԴԻԻԱ. — Տես, նայիր, փարաններն են գալիս: Արգեն յեկան:

ՆՅՈՒԻՐԱ. — Բակը չթողնես: Ավագ հավաքիր, կը խցկին, ավազը ածային կերին:

ԿԱՎԴԻԻԱ. — Ե՞ս, ընկերներ, վոստիկանները գալիս են: Ե՞ս ով կա այցտեղ կանգնած, վագեք հայտնելու: (Բազմությունն աղմկում է: Մի քանի բանվորներ բեմից վազում են կուլիսների յետեր): Փարանները, լսում են, փարանները գալիս են: (Մտնում են մի քանի վոստիկաններ և վոստիկանակետներ):

ՎՈՍՏԻԿԱՆԱՎԵՅՏ. — Դու ինչու յես այստեղ գոսում: Կորիք այստեղից:

ԿԱՎԴԻԻԱ. — Իսկ դուք այստեղ ի՞նչ ունեք: Յես չեմ գնա:

ՎՈՍՏԻԿԱՆԱՎԵՅՏ. — Ախ, ուզում ես կոսիս լինել ինձ հետ: Ե՞ս քարշ տուր այստեղից սրան մազերից բռնած: Տես, անզգամը, ինչպիսի գոսոզոց գցեց:

ՆՅՈՒԻՐԱ. — Փարաններ, վարափոններ:

ՎՈՍՏԻԿԱՆԱՎԵՅՏ. — (Վոստիկաններին). Քարշ ավեք յերկուսին ել: (Աղջիկներին բռնում են, նրանք ավագ են վերցնում): Ախ, անպատկուններ... (Աղջիկները աղատվում են նրանց ձեռքից ու փախչում: Բեմի հետեր աղմուկ): Բռնիք, բռնիք նրանց: (Վոստիկանները արորում են աչքերը, միքանի քայլ առաջ են գնում, յերկուսի փախչում են): Քոսոտ շներ: Աչքերդ կարող են կուրացնել (տրորում ե աչքերը և թքում):

ՎՈՍՏԻԿԱՆԱՎԵՅՏ. — Զերգ բարձրություն, բանվորներ են գալիս այստեղ:

ՎՈՍՏԻԿԱՆԱՎԵՅՏ. — Զենքերը պատրաստ: Եղթա կազմեք: (Վոստիկան-

ները կանգնում են: Ներս են վազում մի քանի բանվորներ: Կանգնեցեք, կանգնեցեք, ասում եմ ձեզ: (Ներս ե խոժում բանվորների մի մեծ խումբ):

1 ԲԱՅՆՎՈՐ.—Ի՞նչ եք նրանց նայում: Յեղբայրներ, շղթան քանդեցեք, դուրս յեկեք փողոց:

ՉԱՅՆԵՐ.—Տուր փարավորներին, ջարդեք նրանց, տղերք: Փողոց, փո-

ղոց... ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.—Կարձակենք ձեզ վրա, բուհովշիկներ:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.—Դուրս կորիր այստեղից: Կորչեն փարավորները: Կորչի միապետությունը: (Բանվորները վերցնում են քարեր, փայտեր):

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.—(Ցածր). Արձակեք ողի մեջ առաջին հերթին: (Հրա-

ցանաձություն, աղմուկ): Յրվեք: (Բարերը թոշում են): Յրվեք: Արձակեք ամբոխի վրա: (Հրացանաձզություն):

ԱՂՄԱՒԿԱՆԵՐ.—Տրորիր նրանց: Տուր վոստիկաններին: Փողոց, դեպի փողոց: (Ամբոխը վրա յե տալիք աղմուկ. վոստիկանների մի մասը փախ- չում ե: Մի քանիսը, սրանց թվում և վոստիկաննապետը, Ենկնում են):

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.—Ազատեցեք, միք սպանի, ի սեր աստծու:

1 ԲԱՅՆՎՈՐ.—Ի՞նչ վոչ վոք սպանել չե ուզում, գարշելիք: (Վոստիկանա-

պետը քաշվում ե մի կողմ, վախեցած նայելով չորս կողմը): Դուրս յեկեք

բոլորդ: Ամբողջ գործարանը դուրս կը գա:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.—Զախարով, գուրս բեր կարմիր դրոշակը: Ով համար-

ձակ ե և ուժեղ՝ հավաքվեցեք ու կովող խումբ կազմեք դրոշակի շուրջը, վոր-

պեսզի հետ քշենք: Բարերը դուրս բերեք: Բարերը բանվորի առաջին գենքն են:

ՉԱՅՆԵՐ.—Դուրս բերեք քարերը և վորքան ծանր, այնքան լավ:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.—Ամբողջ Ռուսիովյան գործարանն ե գալիս: Ահա թե ինչ ե նշանակում բանվորների միությունը: Բախտավորություն ե, ընկեր-

ներ, վոր ինձ ու մյուսներին արձակեցին գործից և այս գործով ամբողջ ներ, վոր ինձ ու մյուսներին արձակեցին գործից և այս գործով ամբողջ

ներ, վոր կովում և ժանդարմաների հետ: Ա՛խ, յեթե հրա- ծարանն ե առաջինը, վոր կովում և ժանդարմաների հետ: Դե, դուրս յեկեք:

Կը գա ժամանակ, յերբ հրացաններ ել կունենաք: Վորտեղ ե դրոշակը:

ՉԱՅՆԵՐ.—(Դուրս գալով և բաց անելով դրոշակը). Ահա դրոշակը:

(Գլխարկ են հանում բոլորը): Դուրս յեկեք:

ՉԱՅՆԵՐ.—Դուրս յեկեք, դուրս յեկեք: Ռուսիովյան գործարանն ե գալիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.—(Յերգում ե). Թշնամի փոթորիկները... (Մյուսները ձայնակցում են: Վոաների գոփյուն, բանվորները դուրս են գնում):

ՆՅՈՒԻՐԱ.—(Ներս վազելով), Գնացին: Դե, յես ել նրանց հետ: Ե՞լ, կավ-

դիս, արի այստեղ: (Բեմի հետեւ հրացանաձզություն և աղմուկ: «Ճնշը նրանց, միք թուլանա, աղերք»): Միթե կողակներն ել արգեն: Վաչ, ժանդարմաներն են: Համա թե կոփէ ե: Քարերը թոշում են ուղղակի: Կլավդիա, զե, արի այստեղ: Ահա ժանդարմաները հետ են նահանջում... ժանդարմաները փախչում են: Դե, համա թե քաջ են մեր Ռուսովցիները: Նորից են հարձակում: Մի տես, մի տես: Թրերով են կովում: (Հրացանաձզությունն ուժեղանում ե): Կանգնեցը կոնկեն վոստիկաններով լի: (Բեմի հետեւ աղմուկ: «Ռւսա, տուր վոստիկաններին»): Վաչ, չեմ կարող այստեղ կանգնել: Ահա քարը կը հանեմ հողից (քար և բարձրացնում) և կը վազեմ նրանց մոտ (վազում ե):

(Վարագույր)



Կեցցե Մայիսի մելլ—պայմանի ու հաղբանակի տոնը:



ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

բանվոր Ն. Կուբանսկի

Վառ ե որը մեկմայիսյան,
Զինջ արեն ե, տես, փայլվլում...
Տոն ե այսոր բանվորական,.
Ամենուրեք յերգ ե հնչում:

Մենք ազատ յենք և բախտավոր.
Փշոտ ճամփեն կորավ, անցավ...
Մենք քայլում ենք շարքով հզոր
Մեզ հետ դրոշներ ալեծածան...

Մեր քայլվածքը պղղպատ զընգուն,
Կամքը ամուր, ինչպես մի լեռ.
Են հին կյանքի հիմքն ե փթում,
Կոմունիզմը՝ իդյալը մեր:

Դե, վորոտա դու, մեծ քաղաք,
Հաղթանակդ ուրախ տոնիր,
Պահակ կանգնեք, մուրճ ու մանգաղ,
Մեկմայիսյան որ, դե, փայլիր:

Թուս. Հո. Պ.

Համաշխարհային նեղափոխությունը վոչ միայն բանվաների,
այլ յեվ նրանց զավակների զործն ե:



ՓԱՌԱԲԱՆԵՑԵ Ք

Խոսք *

Շնուհօտորության ԱԶՈՒ ՄԱՆՆՈՒՅՆԱՐ

փա-ռա-ռա-նե - յեք թե - կը մա-յի - սի
վերդն ե կա-պան - քի, գոնն աշ-իա-քան-քի.
փա-ռա-քա-նե - յեք թե - կը մա-յի - սի
փո - նը գա-րուն - քի ա-զադի կամ քի.
գոր-ճա-րան-նե - րի, ճը - խոր վաշ-րե - րի յե-
կեք ա - մը - քը գո - նա - իրմ - բութ-յան,
բա - փո - րիր յեկ - րի մ - ա - զոր դու գեր,
դու աշ-նիկ մար - քիկ պրո-լո - փա - րա - կան.

Իիժի լավագոյն արձանը միլիոն պատանի լենինյանների
բանակն ե:



ՄԱՅԻՍԸ ՎԱՐ

Մայիսը վառ,
 Մայիսն անմար,—
 Կյանք ե բերում աշխարհին.
 Յեկեք ցնծանք,
 Չեռք-ձեռքի տանք
 Մեկմայիսյան մեծ տոնին:
 * * *

Մայիսը հուր,
 Մայիսն ամուր
 Կոփում ե մեր կուռ շղթան.
 Յեկեք, մենք ել
 Հանդես բերենք
 Մեր ուժերը մանկական:
 * *

Մայիսը սեզ,
 Մայիսը—Մեկ,
 Աշխատանքի հզոր կանչ,
 Նա Միության
 Մեծ հաղթականչ
 «Պողետարներ, միշտ առաջ»:

ԳԻՍԱԿԻ



ՅԵՐԿՈՒԻ ՓԱԽՍՏԱԿԱՆԵՐԸ

ՅԵՐԵ ուզում եք տեսնել մեր յերկու փախստականներին, պիտի գնաք Վարդաշեն գյուղը: Դեռ առաջ կհասնեք Զախչախ գյուղը, ենտեղից կզնաք քչքչան գետակի ափով, մինչև շրմկը շրմկան ջրադացը: Հենց եդ ջրաղացի գլխին է Վարդաշեն գյուղը, վորտեղ ապրում են մեր հայտնի Զալոն ու Գարոն:

Յերկուսն ել աշակերտ են. սովորում են իրենց գյուղի ուսումնարանում: Միշտ նստում են միասին մի նստարանի վրա, թեպետ Զալոն բարձրահասակ ե, իսկ Գարոն կարճ և սազում ե առաջին նստարանին: Զալոն միշտ յեղուզներն ե կոծում և դասերին անուշաղիք ե: Շատ անգամ ել հանում ե իր ծուռտիկ դանակը և տաշում նստարանը. Ի՞նչ ասես չի դուրս բերում իր դանակով՝ ել պոզավոր յեզսերը, ել պիպոզավոր մարդիկ: Իսկ Գարոն ել հայտնի յե նրանով, վոր շատ ե սիրում հաց ուտելլը: Նա միշտ հաց ե ուտում, նույն իսկ դասի ժամանակ: Նրա նստարանի մեջը լիքն ե լինում հացի փշրանքներով, և դրանից ե, վոր միշտ մկներ են գալիս ու շատ անդամ դուրս ընկնելով՝ վազում են դասարանի մեջ, մեծ ուրախություն պատճառելով աշակերտներին:

Նրանց ուսուցիչը շատ լավ բաներ ե պատմում աշխարհագրությունից: Մի անգամ նա շատ-շատ պատմեց Մոսկվայի մասին, պատկերներ ցույց տվեց: Այնքան հետաքրքիր եր պատմում, վոր Զալոն մոռացավ յեղուզները կոծելլ, և աչքերը պլշած նայում եր ուսուցչին, իսկ Գարոն մոռացել եր հաց ուտելլը: Ուսուցիչը մի սովորություն ուներ, յերբ մի քաղաքի մասին պատմում եր, միշտ հարցնում եր:

— Ապա ասեք, վ՞ր կողմը պիտի գնաք, վոր հասնեք ենտեղ: Եղպես հարցը ե Մոսկվայի մասին, և հետո աշակերտները ասացին, վոր պետք ե գնալ զեպի հյուսիս:

— Իսկ ի՞նչպես պիտի գտնեք հյուսիսային կողմը, հարցը նորից ուսուցիչը:

— Պետք ե յերեսը դարձնել դեպի արեվելք, ասաց Միմակը. Եղպես վոր նայենք՝ աջ կողմը կլինի հարավ, իսկ ձախ կողմը՝ հյուսիս:

Եղ վոր լսեց Զալոն, աչքերը ավելի պսպղացին։
— Բա ի՞նչ տղա կլեմ, վոր Մոսկվա չգնամ, ասաց ինքն իրեն։
Պաի տեսնամ Լենինի գերեզմանը, են լավ-լավ շենքերը, են ելեկ-
տրական լույսերը։
Մյուլյա դասերին Զալոն ել ուշագրություն չեր դարձնում։ շա-
րունակ մտածում եր Մոսկվայի մասին ու յեղունգները ենպես եր
կռծոտում, վոր արյունոտեց մատները Յերբ նա ու Գարոն գնում
եյին տուն, Զալոն ասաց։
— Գարո, արի գնանք Մոսկվա։
— Բա վոնց գնանք։
— Յես քեզ կասեմ. տար գրքերդ տանը դիր ու յեկ մեր տուն։
Գարոն գնաց տուն, ու շտապ-շտապ հացի մի մեծ կտոր ձեռ-
քին ուտելով յեկավ Զալոյի մոտ։
— Գարո, յես ու գու կգնանք Մոսկվա. հիմի արի խոսենք, թե
վոնց անենք։ Առաջ գուրս կգանք գաշտը, կգտնենք հյուսիսը, ու
են կողմը կգարձնենք յերեսներս ու կերթանք մինչև վոր կհասնենք։
Հետներս հաց կտանենք, ճամբին ել մշակություն կանենք, կապրենք.
բան չկա, շուտ կհասնենք։ Մի բան ել կա, Գարո, Մոսկվայում
ուռւներ են ապրում, պետք ամի քիչ ել ուռւներն իմանանք. յես մի
թղթի վրա գրել եմ. վարժապետից հարցրի. այ գրածս. „Լենին,
могила, где“, Մթամ հարցնում են՝ «Լենինի գերեզմանը վորտեղ
ա», գու յել սովորի։
— Յես ել կասեմ. խլեբ, вода, кушай, մթամ թե հաց տուր,
ուտեմ, ջուր տուր խմեմ։
— Դե եղ ա լավ ա, եգուց կգնանք. վաղ վեր կաց, վոր շուտ
հասնենք։ Համ ել ոչ ովի չասես, իմացար։
— Չեմ տօիլ, իսկի մեր Ամլիկին ել չեմ տօիլ։
Եսպես վճռեցին Զալոն ու Գարոն, ու յերկար խոսեցին Մոս-
կվայի մասին։ Յերբ Զալոն բոլորը պատմեց, ինչ վոր լսել եր Մոս-
կվայի մասին, Գարոն հարցրեց։
— Բա Մոսկվայում ուտելու բաներ շատ կան։
— Հըմ, ենպես բաներ կան վոր... բա իմացել չես, վոր բոլոր
կանփետները ենտեղից ա գալիս...

Մեկ ել առավոտը կիրակի յեր։ Զալոն լուսանալուն պես վեր
թռավ, գնաց հացատնից մի հաց վերցրեց ու ծոցը գրեց։ Շտա-

պում եր, շատ եր շտապում, բայց Գարոն դեռ չկար։ Գնաց Գա-
րոյանց տուն, տեսավ նրանց նանը գավթում փսփսում ա, ցորենը
դուրս ե բերում, վոր ընտրի։
— Նանի, ձեր Գարոյին մի վեր կացնես...
— Ա տղա, եսքան վաղ։
— Ե՞ն, ի՞նչ կա վոր, լավ որ ա...
Նանը գնաց, վեր կացրեց Գարոյին։ Մի քիչ ժամանակից հետո
Գարոն աչքերը տրորելով դուրս յեկավ, կոնատակին բոնած յերկու
հաց։
Ա տղա, եղ յերկու հացը ուր ես տանում։
Գարոն վոչինչ չպատասխանեց ու արագ քայլերով գնաց, հա-
ցերը ծոցը խրելով։
Դե, գնանք, ասաց Զալոն ու առաջ ընկավ. հետեւց գնում եր
Գարոն ավելի դանդաղ քայլերով։
Դուրս յեկան դաշտը։
— Դե եստեղ կանգնենք, մի տեսնանք՝ վոր կողմն ա հյուսիսը,
Զալոն, գու ասա, արևելքը վորն ա։
— Դե են կողմն ա, վորտեղից արևն ա դուրս գալիս։
— Դե եղ մեր գեղի կողմն ա. յերեսս վոր դենն անեմ, են ա
մը կողմը, հյուսիս կլի, չե։
— Իմ միտս ա, ձախ կողմն ասեցին։
— Զե, գու լավ չես իմանում, աջ կողմն ա, ուրեմն կերթանք
Հալի ձորի կողմը։
Գնացին գեղի աջ կողմը ճանապարհով։ Դեռ մի կես ժամ
չեյին գնացել, յերբ նրանց հանգիպեցին ձիավոր գյուղացիներ։
— Ես ուր եք գնում, հարցրին։
— Գնում ենք Հալի ձոր, մեր ապին ենտեղ ա։
Ասաց ու կարմրեց Զալոն, վորովհետեւ սուտ եր ասում. իրեն
ապին տանն եր։
— Գարո, արի ճամբովը չգնանք, թե չե ամեն պատահող
կհարցնի, թե եղ ուր եք գնում, հետո յել կիմանան մեր բանը, ու
ել զուխ չի գալ։
Դուրս յեկան ճանապարհոց ու ընկան արտերը, վորը ցանած եր,
վորը խամ։ Զարչարվում եյին, հոգնում, բայց կանգ չեյին առնում։
Վերջապես հասան անտառին։ Հենց անտառի ափին մի աղբյուր կալ։
Գարոն աղբյուրը տեսնելուն պես՝ նստեց։

— Ի՞նչի նստեցիր, Գարու:
 — Հոգնեցի. մի քիչ հաց ուտենք:
 Ու ծոցից հանեց հացը, լավ կերավ, ջուրն ել խմեց ու վեր
 կացավ: Զալոն արդեն կանգնած սպասում եր նրան:
 Անտառի մոտ նրանք ճամբեն ծոեցին գեղի աջ ու զնացին
 բրի վրայով. յերկուսն ել մոռացել ելին հյուսիսի մասին: Գարոն
 փորը տողած՝ չեր կարողանում լավ քայլել և հետ եր մնում: Իսկ
 Զալոն շարունակ սիրու եր տալիս ու վոգերում իր ընկերոջը:
 — Դե, Գարու, շուտ արի, ես ա ես բլուրն ել անցնենք՝ Մոս-
 կվա կհասնենք. մի քաջի նման վազիր ե...
 Մտան անտառը: Մի քիչ վոր առաջ զնացին՝ հանկարծ Գարոն
 Զալոյի փեշից քաշեց:
 — Զալո, սպասիր, ել մի զնալ ենտեղից գայլ ա գալիս:
 — Ուր ա գայլը... են հո շուն ա, չես տեսնում. եղ ինչ վախ-
 կոտն յես յեղեր:
 Գարոյի սիրու լքլըում եր. կարծես չեր հավատում Զալոյին.
 Վերջապես, յերբ շունը մոտեցավ, ու նրա հետ ել մի հովիվ, նոր
 հանգստացավ:
 Մի ժամի չափ գնալով՝ նրանք դուրս յեկան անտառից և իջան
 գեղի մեծ ձանապարհը: Եստեղ աղբյուրի մոտ նստեցին հանգստա-
 նալու: Գարոն իր հացը ձեռաց վերջացրեց ու աշքը տնկեց Զալոյի
 հացի վրա:
 — Բա ես վոնց պտի անենք առանց հաց, ասաց նա:
 — Հը, առ, իմ հացից կեր, մինչեւ մի տեղից կձարենք:
 Գարոն վերցրեց հացի կտորը, կերավ ու կոշտ ջուր խմեց:
 — Հիմի վոր կողմը պիտի գնանք, Գարո, զու գիտաս, հյու-
 սիսը վորն ա:
 — Յես ել չեմ իմանում:
 Յերկուսն ել կանգնեցին, սկսեցին գես ու գեն նայեր, բայց չե-
 յին կարողանում Արենիքը դանել:
 Հենց եղ ժամանակ մեծ ձանապարհով անցնում եր մի ֆուր-
 դոն, Յերբ մոտեցավ, Զալոն ասաց. — քեռի, չի ըմի, նստենք բու-
 ֆուրդոնի վրա:
 — Ի՞նչի չե, փեշեց ա, պատասխանեց կառապանը: Յերկում
 եր, լավ քեֆի յեր, իսկի չհարցրեց, թե ուր ես գնում: Նրանք նըս-
 տեցին կառքը ու զնացին: Յերկուսն ել ուրախ ելին: Զալոն կար-

ծում եր, թե եղ կառքով վոր զնան՝ յերկու որից հետո Մոսկա-
 կհասնեն. իսկ Գարոն ել մտածում եր, թե եսա կհասնեն մի զյուղ
 ու հաց կուտեն:

Զալոն ու Գարոն ուզում են իրար հետ խոսել, բայց կառքի
 դրդոցից վոչինչ չեր լսվում:

Սրգեն արեր մայր եր մտել, յերբ կառապանը դուրս յեկավ
 մեծ ձանապարհով ու կանգ առավ:

— Դե, տղերք, յես հիմի մեր գեղի վրա յեմ ծովում դուք ել
 ըտենց վոր զնաք, մի կես սհաթին տեղ կհասնեք:

Տղաները իջան ներքի ու քայլեցին մեծ ձանապարհով: Գնա-
 ցին, ու նոր մթնած՝ բլրի վերեկց տեսան շատ գեղեցիկ լույսեր:

— Ես Մոսկան կլի, Գարու:

— Եսպես շնուր:

— Բա չեյլի՛ր տեսնում, Փուրգոնը վրաց եր գոգուալով զալիս:
 Շուտ ենք հասել: Զե, ես ա. վարժապետն ասում եր—ենտեղ լավ
 լույսեր կան, ելեքտրական լույս: Դե շուտով զնանք տեսնանք:

Շտապ-շտապ քայլերով մտան ոռուսի գյուղը, վորը նրանց կար-
 ծիքով Մոսկան եր:

Նրանց դիմաց գալիս եր մի աղա, քաղաքի հագուստով:

— Զե, աս Մոսկան ե, մտածեց Զալոն ու մոտեցավ յեկողին:

— Լենին, մագլիս, գղե՞—հարցրեց նա իր անդիր արած ոռու-
 սերենով:

— Կակմյա մագիլա, (ինչ գերեզման) հարցրեց տղան:

Եղ ժամանակ մեջ ընկավ Գարոն.

— Խլեր, վագա, կուշատ (հաց, ջուր, ուտել).

— Խլերա խոչեց, նու պայդյում (հաց ես ուզնում, գե զնանք),
 ասաց տղան ու ձեռքովն նշան արավ, վոր Գարոն ու Զալոն հետը զնան:

Տղան տարավ իրենց տուն: Յերբ ներս մտան, տեսան մի մի-
 լուքավոր մարդ նստած ե սեղանի մոտ: Զալոն զլուխ ավեց, և
 իսկույն հասկացավ, վոր Մոսկայումը չի. ես տեսակ ոռուներ միշտ
 զալիս են իրենց գյուղը. չե, պետք ե առավոտը անպատճառ շա-
 րունակել ձամբան:

Բերին իրիկնահաց տվին: Մի մեծ աման կերակուր եր, գգալ-
 ները մեծ—մեծ, հացն ել սկ ու հաստ: Բոլորը հետաքրքրությամբ
 նայում ելին Գարոյին ու Զալոյին:

Գարոն ենքան կերավ, վոր գիշերը չեր կարգադնում քնել: Իսկ



Զալոն մտածում եր, թե յէրք պետք է լուսանա, վոր ճամբեն շառունակեն:

Առավոտը վաղ մեր փախստականները վեր կացան, դուրս յեկան գավիթ, տեսան մեծ նանը կճուճ է լվանում: Զալոն գլուխ տվեց ու ձեռքով նշան արեց, թե գնում են: Ընկան մեծ փողոցը ու քայլեցին դեպի վերև: Հենց նոր եյին դուրս յեկել զյուղից, վոր դիմացից յերեացին յերկու ձիավոր:

— Գարո, ես մեր հայրերն են, ասաց Զալոն:

— Դուրդ...

Կանգ առան յերկուսն ել ու գլուխը քաշ, կարմրած՝ սպասում եյին:

— Արա, եստեղ ի՞նչ եք շինում, այ փախստական տղերք, ասաց Զալոյի հայրը, ծիծաղելով:

Դե յել ի՞նչ Մոսկվա: Բանը վերջացած եր: Հայրերը նստացրին նրանց գավակներին ու հետ տարան իրենց զյուղը:

Հետեւալ որը արդեն բոլոր աշակերտները գիտեյին Զալոյի ու Գարոյի փախչելու մասին:

Յերբ ուսուցիչը լսեց այդ պատմությունը, մոտեցավ մեր հեռուներին:

— Եղ վոնց դուք գնացիք Մոսկվա, մի պատմեք տեսնեմ:

— Գնացինք դաշտը, ասաց Զալոն, ենտեղ յերեսը դարձրինք դեպի արևելք. ու հետո, գնացինք դեպի հյուսիս, աջ կողմը—Հալի ձորի վրա...

— Ոհո, ասաց ուսուցիչը, յերեւմ ե լավ չեք իմանում աշխարհազրությունը. եղ հո դեպի հարավ եք գնացել...

Զալոն ավելի կարմրեց. իսկ Գարոն ել մեջ խառնվեց:

— Վարժապետ, են սուսի գեղում մի լավ կերանք: Հենց իմանում եյինք Մոսկվայում ենք,

Բոլորը ծիծաղեցին:

— Դե, սիրելի փախստականներ, ասաց ուսուցիչը, այժմ աշխատենք լավ սովորել, վոր ճամբեն չկորցնենք:

— Յես տղա չեմ ըլիլ, թե Մոսկվա չգնամ, ասաց Զալոն:

Ու մինչև որս ել յեղունգները կածելով մտածում ե, թե վոնց դնա Մոսկվա:

Իսկ Գարոն, քանի խոսք ե ընկնում Մոսկվայի մասին, միշտ ասում ե:

— Թե մեկ ել գնանք Մոսկվա, հետներս շատ հաց վերցնենք:

Առազի



ՄԱՅԻՍՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

(Մայիսյան ցույցերի համար)

Խումբ.—Մայիսի մեկին,

Վողջույն ամենքին...

Բարձրախոս.—Մայիսի մեկին՝ ծիծաղ, ուրախ կյանք,
Արևոտ որել, յերգեր ու զգվանք.

Արձագանիք.—Արձագանք! արձագանք! արձագանք!

Բարձրախոս.—Իրոշների ծով, խոսքեր վարվուուն,
Ամենքի սրտում արև ու զարուն.

Ծովացած մասսան գալիս ե, զալիս—

Արձագանիք.—Մայիս, Մայիս, Մայիս...

Բարձրախոս.—Աշխատանքի տոն—խնդում ենք անվիշտ.

Արձագանիք.—Ճիշտ, ճիշտ, ճիշտ...

Բարձրախոս.—Ո՞վ մեզ նետեց լույս ճաճանչ,
Հաղթ միության հղոր կանչ,

Տվեց թեկեր մեծաթուիչ,

Արձագանիք.—Իլիչ, իլիչ, իլիչ...

Բարձրախոս.—Խավարի դեմ թանձրացած
Կոմյերիտը կոիվ զնաց.

Թե կենդանի, թե մեռած

Յեկեղեցին սարսափեց
«Կոմյերիտ» խոսքի զիմաց՝

Արձագանիք.—Դողաց, դողաց, դողաց...

Բարձրախոս.—Հեյ, հեռավոր ընկերներ,

Եղ անազատ յերկրում ձեր
Ֆաշիստները ելի կան.

Արձագանիք.—Կան, կան, կան...

Բարձրախոս.—Չեզ հետ ի՞նչպես վարվեցին.

Արձագանիք.—Ծեծեցին, ծեծեցին...

Բարձրախոս.—Զեր կարիքը հոգացին.

- Արձագանի. — Մորթեցին, մորթեցին...
 Բարձրախոս. — Զեր ցավերը նրանք տեսան.
 Արձագանի. — Կերան, կերան, կերան...
 Բարձրախոս. — Նետիր շլթան դահիճի.
 Արձագանի. — Կորչի, կորչի, կորչի...
 Բարձրախոս. — Աշխատանք ու կապիտալ
 կը ուղում են միշտ իրար դեմ.
 Ումն է ժպտում գալիքն ալ,
 Ում է կանչում ժպտերես.
 Արձագանի. — Մեզ, մեզ, մեզ...
 Բարձրախոս. — Ու խավարից թանձրացած
 Աշխարհն նվ պիտ ազատի,
 Ով կստեղծի մի նոր կարգ
 Մի նոր աշխարհ ու որենք.
 Արձագանի. — Մենք, Մենք, Մենք...
 Բարձրախոս. — Դու կոմյերիտ, միշտ պատրաստ.
 Արձագանի. — Պատրաստ, պատրաստ, պատրաստ...
 Խումբ. — Կեցցե, կեցցե կոմյերիտ...


Թարգմ. Գ. Գ.



ԱՐԵՎՈՒԵԼԵՐ ՀԱՆՁԵՐ



ԴԵՊԻ ՀՅՈՒՍԻՍ



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Նավարիս,
Գիկը—նրա ոգնուկանը,
Յերիստարդ մարդ,
Կիբ,
Գեներալ,
Միլիորդեր

Խուս կոմս,
Նեգր, Զոն,
Նավալիս,
Ճամբորդներ,
Նավասիներ:

Լ Գ Ո Ր Շ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Լուիզա» շոգենավը բարձվում է: Դուրս է վաղում՝ գեղի ամրոխը մի նեղը տղա:

Նեֆիլը.—Հեյ, շտավեցեք, շտավեցեք, տոմսակներ առեք, «Լուիզա» նավը այսոր ճանապարհում է դեպի Ամերիկա: Ա-հ-հ-ն, Ամերիկա, վորտեղ փողոցները լիքն են դոլարներով, վորտեղ մեքենաները ազմկում են որ ու գիշեր: Շնուտ, տոմսակներ առեք, ուղիղ ժամը 12-ին ճամբար կընկնի «Լուիզան»: Մեր կայուտաները ամենալավերն են՝ փափուկ մտհճակալներ, լողարաններ, յերաժշություն, համեզ ճաշեր ու ընթրիքներ—ինարկի, բոլորը շատ փող ունեցողների համար: Քիչ ունեցողները՝ մի կերպ կըտեղավորվեն տրյումիներում, արկդների արանքներում: Շտավեցեք, շտավեցեք, մեր «Լուիզան» ամենալավ նավն է: Մեր նավապետը, ոհ-հ-հ, նմանը չունի: Խոսքը մեր մեջ—ինչ նավապետ, շնուռ է, խական, շնուռ: Նրա հետ գնացողները ան չունեն վաշ փոթորիկներից, վոչ ուրիշ պատահարներից: Նավասահները հո, մինը մյուսից քաջ: Սրանց նման նավաստիներ չկան—ուռաներ են, ախր, նրանք: Զարմանում, եք չե, թե ինչո՞ւ յեն ուռաներ: Ճիշտն ասած, յես ել լավ չեմ իմանում ուզու: Բայց զե, հո մեր նավն ել ուռանական եր: Ինչ վոր կոիվ եր պատահել նրանց մեջ սպիտակների ու կարմիրների: Թե ինչ բան եր, յես ել լավ չեմ իմանում, միայն վերջը այն սպիտակներ կոչողները՝ փախան իրանց կարմիրներից ու նավն ել ծախեցին մեր, Զոն-Բոկ և ընկեր, Փիրմային, վոր ամենահարուստ գիրման է: Նավի հետ միասին նավաստիներին

ել ծախեցին: Դե, թնդ փորձեն մի չհազարանգվել նավապետին ու կտեսնեն, թե վոնց կվարվի հետները: Ինչ են, «Լուիզան» բարձվել է, շտավեցեք, տոմսակների: Հրեն, ճամբորդները հավաքվում են, շտավեցեք տոմսակներ վերցնելու:

(Նավաստիները բարձրում են, լցնում են տրյումիները (նավախորշեր) տակառներով ու հակերով:)

ՅԵՐԳՈՒՄ Ե ՄԵԿԸ.—ԱԺՐՈՂՋ ՌԵՇ ԱԺՄԻ ԵՄՓԻՆՔ
Լուրուկի պիս արյուն, քրտինք:

ԽՄԲՈՎԴԻՆ.—ԴԵՇ,

Յեղայրներ,

Ի՞նչ եք

Կանգնել

Ույժ ույժի տանք

Յեկ իրար հետ:

Հապա ապրես, Ոհանես,

Մի շնորհք ցույց տուր մեզ,

Քաշիր, քաշիր... գնաց, տես...

ՅԵՐԳՈՒՄ Ե ՄԵԿԸ.—ԱԺՐՈՂՋ որը մենք անդադրում

Պրպտում ենք նավախորքում,

Նավապետը՝ գործի յե մեծ—

Հոգիներս տեղից հանեց,

ԴԵՆ, աղերք ջան, հո տակառն եղ

Մեկի բան չի, մի իրար հետ...

(Խմբովին յերգում են նախկինը):

ՅԵՐԳՈՒՄ Ե ՄԵԿԸ.—ՏԵՍԻՔ, ես հակն ԲԻՆ և տառւ,

Բանի փութ ե, կա քառասունեն.

Ով տղա յե, թող զա փորձի,

Ամեն անպետք մարդու գործ չի...

Հեյ, հապա մին ես կապոցը—

Քեզ հավաքիր,

Թե չե մարդ եղ բեռի տակին

Կըտրաքի:

ԽՄԲՈՎԴԻՆ.—Կըկնում են)

ՆԱՎԱՊԵՏԸ. —Են ինչ են ոռնում:

ԴԻԿԸ. —Յերգում են, նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸ. —Լավ, ես ե վոր ծով յելնենք, են ժամանակ ուրիշ կերպ կյերգեն: Ամեն ինչ կարգին է, Գիկ:

ԴԻԿԸ. —Հրաման քեզ, նավապետ, բարձվեց, պրծավ. համարյա բոլոր

ՃԱՄԲՈՐԳՆԵՐԸ. հավաքվել են:

ՆԱՎԱՊԵՏԸ. —Լավ պետք ե հոկեք այս ոռւս նավաստիներին:

ԴԻԿԸ. —Հրաման քեզ, նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Նրանց հետ այսպես պետք է խոսել այս, (բռունցքը Դիկի քիթն և կոխում):

Դիկը. — (Հետ հետ գնալով) Հրաման քեզ, նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Պետք է լավ իմանան նրանք, վոր իրենք գերիներ են, ստրուկներ:

Դիկը. — Հրաման քեզ նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Յեթե նրանք համարձակվեն յերկու խոսք ասել, յիս կկախեմ նրանց առաջաստակալից, կամ կոնդակահարեմ շան պես:

Դիկը. — Հրաման քեզ նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Բանվորներին իրենց յերեխաներով ու կահ-կարասիներով քշիր, արյումներն արա, թող չամարձակվեն այնտեղից շարժվելու: Այնպես կեզտու ու պատառոտած եյին նրանք, վոր մաքուր հաստրակության ախորժակները կփացնեն:

Դիկը. — Հրաման քեզ նավապետ. (յերկուսն ել զուրս են զնում):

ՆԱՎԱՊԵՏԸ. — (Բարձելը վերջացնելուց հետո՝ սրբում են քրտինքները):

1-ԻՆ ՆԱՎԱՊԵՏԸ. — Պրծանք, վերջացրինք:

2-ՐԴԸ. — Կարծում եյի եղ անտեր տակառները չեն վերջանալու:

3-ՐԴԸ. — Ո՞վ գիտե, հիմա ուր պիտի քշեն մեզ:

2-ՐԴԸ. — Ամերիկա:

3-ՐԴԸ. — Իսկ ենտեղից:

2-ՐԴԸ. — Զհանճամի ծերը:

1-ԻՆԸ. — Ել չենք տեսնի Ռուսաստանը, վոնց վոր յերեւում ե:

2-ՐԴԸ. — Ե՞ս, ընկանք, ու ենքան քաշ կամաք՝ մինչև վոր սատկենք:

3-ՐԴԸ. — Յեկ ինչու համար եր ես քամբաղգությունը.

2-ՐԴԸ. — Հիմար եյինք, հիմա ինելոքացանք, բայց, դե բնչ ողուտ,

ուշ եւ 1-ԻՆԸ. — Ես սատանա յեր մտել մեմ եջը, վոր հակառակվեցինք սպաներին ու զեներալներին: Նրանց ինչ, հիմա նստած կարակներում (զինեաներում) քեֆ են անում, իսկ մեզ ինչ որը զցեցին:

2-ՐԴԸ. — Փողի բնչ պակասություն նրանց համար. բոլ թալանեցին Սկսառապոլից փախչելիս, ու հիմա յել շոգենավը ծախեցին, կասես թե իրանցը լիներ:

3-ՐԴԸ. — Մեզ ել շոգենավի հետ:

2-ՐԴԸ. — Հիմա մենք ուր գնանք:

1-ԻՆԸ. — Սիրտս ճմլվում ե, վոր մտիկ եմ տալիս առաջվա մեր ոռւսերն առնելը գրած տեղին, իսկ հիմա, տես մին, վոնց են կեղտուել. «Լուիզ»: Եհ, նրանց...

2-ՐԴԸ. — Դու կամաց, բերանդ պահիր:

3-ՐԴԸ. — Ելի ճամբորգներ են բերում. (յերկու նավաստի բարձրացնում են ձեռների վրա մի հաստ կնոջ. մի քանիսը նրա իրերն են բերում, մեկը՝ նրա շնիկը):

ԿԻՆԸ. — Զգույշ, հեյ, ավանակներ, Միմիշկայիս վայր չգցեք:
Ե՞ս, ես ոռւսական արջերը:

1-ԻՆԸ. — Մի տես, վոնց բազմեց եղ քառասուն փթանոց տակառը:

2-ՐԴԸ. — Վերցնես ու իրա շանը հետ միասին ջուրը նետես. մուռտան:

3-ՐԴԸ. — Լսիր, դե լավ:

ՄԻ ՅԵՐԸՍԱՍԱՐԴԻ. — (Դառնում ե այն նավաստիներին, վորոնք ուզում են ոգնել նրան՝ տախտակամածը բարձրանալու): Վոչինչ, մենք ինքներս. (Նավաստիական համազգեստով զուգված տղան ու յերեխասարդը տախտակամածն են բարձրանում: Դուրս ե գալիս նավապետը.)

ՅԵՐԻԸՍԱՍԱՐԴԻ. — Պարոն նավապետ, թույլ տվեք խնդրելու Զեզ, վոր ուշաղրություն դարձնեք այս յերեխայի վրա: Սա ոռւս կոմս Սեմյոնովի վորդին ե, վորը տուժեց բոլշեկիներից: Զեզ հայտնի յի, յերեկի:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Ո՞, գիտեմ, գիտեմ եղ անիծած բոլշեկիներին:

ՅԵՐԻԸՍԱՍԱՐԴԻ. — Այս յերեխայի հայրը Ամերիկայումն ե, խնդրել ե, յերեխային ուղարկել իրան մոտ:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Լավ:

ՅԵՐԻԸՍԱՍԱՐԴԻ. — Թույլ տվեք բարի յերթ ցանկանալ (գլուխ տալով գնում ե զեպի գուռալ):

ՅԵՐԻԸՍԱՍԱՐԴԻ. — (Տղային), Դե, յես հուսով եմ, վոր դու վոչինչ չես մոռանա, և վոր գլխավորն ե, չես խառնվի ուրիշի գործերի մեջ: Տղան. — Լավ, մի անգամ կատեն:

ՅԵՐԻԸՍԱՍԱՐԴԻ. — Գնաս բարով, ուրեմն՝ Մոսկվայում:

Տղան. — (Դլխարկով շարժումներ ե անում, գանազ հեռանում ե) Մոսկվայում:

1-ԻՆԸ. — Տղան—ոռւս ե:

2-ՐԴԸ. — Աղնվականի ծուտ կլինի, փախստական ե:

3-ՐԴԸ. — Գոնե ոռւսերն խոսք ել ե լսենք:

2-ՐԴԸ. — Շատ ե մտածում մեզ համար. բուրժույլը—ուզում ե ոռւս լինի, ուզում ե՝ անզլիսցի—մի զանրումար ե մեզ նմանների համար:

4-ՐԴԸ. — Ե՞ս, յեթե կարողանայի մի անգամ ել տեսնել իմ փոքրիկ յերեխաներից մեկն ու մեկին—կոլյային կամ վանիային...

3-ՐԴԸ. — Են կյանքումը կտեսնես:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Տեղներդ. պատրաստվեցեք իսարիսիը քաշելու: Մերենան բան գցեք:

Դիկը. — Գնացեք հսկողության, հսկողության. մնացածները թող նստեն կուբբիկումը, անգործ թող վոչ վոր թրե չգա:

1-ԻՆԸ. — Խոկ շղթայած շուն:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Մեղմ յերթ. արագ... կանգ... յերթ... պահեցեք, ախ, ձեր են...

2-ՐԴԸ. — Ճամբար ընկանք:

3-ՐԴԸ. — Ե՞ս, ինչ լավ կլիներ, վոր նուսաստան գնայինք:

ՆԱՎԱՊԵՏԸ. — Լըիվ յերթ, 50 հանգույց, ցուուկը դեպի հարավ:

1-ինը. — Գնացինք:

(Մեքենաները աղմկում են. կուբիկում նավասարիները յերգում են):

I

Սոմի նման սիրտո բռնած կրակին,
Հեռու յերկրում մաշեց կարուն իմ հոգին, (կրկնել)
Միշտ մաքիս մեջ կին ու վորդի կաթողին:

ԽնիՄԲԸ ՅԵՐԳՈՒՄ Ե

Ոտար յերկիր, սկ' յերկիր, դառար մեզ մութ բանտ.
Ազատ մեր որն ենք ուզում մեր տունը դառնանք:

II

Ու թվում ե՞ ամեն գիշեր յերազիս,
Թե մերոնց հետ ու մեր տանն եմ ապրում յես, (կրկնել)
Մեծ շենքերն եմ տեսնում նորից Մոսկովիս:

ԽնիՄԲԸ ՅԵՐԳՈՒՄ Ե

Ոտար յերկիր, սկ' յերկիր, դառար մեզ մութ բանտ.
Ազատ մեր որն ենք ուզում մեր տունը դառնանք:

III

Այստեղ հիմա սասնամանիք, բուք ու ձյուն,
Վոր իջած են ինձ հարազատ զաշտերուն, (կրկնել)
Թե գիտենաք, ինչքան թանկ են իմ հոգուն:

ԽնիՄԲԸ ՅԵՐԳՈՒՄ Ե

Ոտար յերկիր, սկ' յերկիր, դառար մեզ մութ բանտ.
Ազատ մեր որն ենք ուզում, մեր տունը դառնանք:

IV

Ազատ հովեր, գուք խղճացեք զոնե ինձ,
Թռեք դեպի իմ յերկիրը հայրենի, (կրկնել)

Ու պատմեցեք իմ անազատ որերից:

ԽնիՄԲԸ ՅԵՐԳՈՒՄ Ե

Ոտար յերկիր, սկ' յերկիր, դառար մեզ մութ բանտ.
Ազատ մեր որն ենք ուզում մեր տունը դառնանք.

Առաջին գործողության վերօք:

II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ:

Առավոտ է: Առաջին կարգով գնացող ճամբորդները հավաքվում են
նախաճաշի:

1-ին. — ՃԱՄԲՈՐԴԻՔ. — Բարի լույս:

2-րդիք. — Լույսդ բարի:

3-րդիք. — Ի՞նչ հրաշալի ճանապարհորդություն է:

4-րդիք. — Ի՞նչ փառահեղ շոգենավ է:

1-ինը. — Գիտեք, մեզ հետ 11 միլլարդերներ են գնում:
ԲՈԼՈՐԸ. — (Հիացած) Ո՞՛՛:

2-րդիք. — Յեվ մի ոռւս կոմս:

ԲՈԼՈՐԸ. — Ռուս կոմս:

2-րդիք. — Այս կու ևս վորքիկ. այդ զզվելի բոլշևիկները յերեխանե-
րին ել են հալածում, նա ստիպված եր վախչել:

ԲՈԼՈՐԸ. — Սոսկալի յե, սոսկալի:

3-րդիք. — Հրես, գալիս ե ամենահարուստ միլիարդերը:
(միլիարդերը դուրս ե գալիս):

ՄԻԼԼԻԱՐԴԻՐԸ. — Զենոլմեններ, լեղիներ,

Պղնձի արքան և ձեր դեմ.

Հերցոգը՝ փալասի,

Պրինցը՝ հում նյութի,

«Կուկը,

Իր թոռն

Ու վորդին»:

Մեծն եմ յես Սիսդիկատի

«Չուկ Բամբակի».

Նախադանը՝ տրեստի նոր

«Բաղցը Խմոր».

Ունեցածս սուս չասեմ թե

Հարյուր միլիարդի կհասնե:

Յեվ հետո,

Ինչքան ակցիս,

Որդիգացիս,

Ռեպարացիս,

Լուցբիների պլանտացիս,

Անվերջ զաշտեր

Շաքարյեղեղ ու ճակնդեղ

Ճանելու տեղ,

Գործարաններ մեծ, յերկաթի,

Ֆաբրիկաներ՝ ծտի կաթի.

Ռետինե հանք

Յեկրոպտում, Ամերիկա.

Ի՞նչ պատվեր եւ ինչքան ասեն,

Կարճ միջոցում կպատրաստեմ.

80 ավել յերկաթուղի,

Գործարաններ՝ ամեն ցեղի,

Սոդա շինող,

Սիպտակեղեն,

Փթածեղեն,
Անպետք բաներ.
Ցիոնյան կալի,
Ուրիշ ելի,
Ուրիշ ելի,
Ուրիշ ելի:
Բըոդվեյ, № 4 և հասցես,
(Ամենաճռի պալատն աշխարհիս)
Խնդրում եմ գըեք—
Հեռախոս՝ 2—05.
Հասցես հեռագրի՝
«Կուկը,
Թոռը,
Ու Վորդի»:
ԲՈԼՈՐԸ. — (Ծափահարում են). Սքանչելի յե, անհուան:
1-ԻՆԸ. — Հըես, մի նշանավոր կին և գալիս, նա յել և շատ հարուստ:
(Յերեսում ե կինը):
Կինը. — Խեղճ շունս, վախում եմ, չկարա
Ես նավի ճոճմանը դիմանա.
Վախեցավ Միմիշկաս. հազիվ-հազ
Շնչում ե... ախ, ինչքան և նվազ:
Հետո ձեզ պիտ ասեմ, ցեղովին
Զեն սիրում, Միմիշկաս ատում և բանվորին,
Բոլշևիկի համար հո, ել շեմ ասում,
Սոսկում ենք յերկուսով, թե նրանցից են խոսում.
Ու գիտեք. դուրս գալուց գեռ առաջ յերեք որ,
Միմիս հետ միասին գնացի յես թատրոն.
Այս, Շեքսպիր,
Պաշտում ե շնիկս անհաշիվ:
Ու այնտեղ, մեր ոթյակի դեմ ու դեմ
Նստած եր մի ջենտլեմեն,
Լավ հազնված վոչ ենքան ծեր,
Դուրեկան տեսքով մի սեաներ:
Բայց չդիտեմ, ինչպես յեղավ,
Հանգիստ շունս ջղայնացավ
Մեր գեմ նստած եղ պարոնի շորի հոտից.
Ու միջոցին յես հարցըրի մի ծանոթից,
Թե չգիտես, ով ե արդյոք պարոնը ես.
Նրա տփած պատասխանը սարսափ ազգեց.
Սա, ասում ե, լսած կլինես սրա մասին,
Բոլշևիկյան կոմիսարն ե, ինքը իրասին,

Ես վոր լսեց իմ Միմիշկաս—ի՞նչ վոռնոց,
Հազիվ գրկած ընկա մի կերպ յես փողոց,
Նա դողում եր, յես ինձ կորցրած՝ սարսափում,
Հեյ, կառապան, շուտ, ասացի, դեպի տուն:
Ու վճռեցի Ամերիկա մեկնել շուտ.
Յեվ հենց մյուս առավոտ
Ուղարկեցի աղախնիս,
Վոր տոմս գնի, բերի ինձ:
Հալ չմնաց ել մեր սրտում,
Մինչեւ յես ու Միմիշկաս
Նավը մտանք ու նավը ընկավ իր ճամբան:
2-ՐԴ ՃԱՄԲՈՐԴԻԸ. — Գեներալը, գեներալը.
ԲՈԼՈՐԸ. — Կեցցե գեներալը, վիվատ, վիվատ.
(Գեներալը վողջունում ե)
ԳԵՆԵՐԱԼԸ. — Հին գեներալ եմ, պարոններ,
Յես իմ կյանքում շատ եմ կովել
Շատ եմ պատժել ու հանդարտել
Իմ 72 տարում,
24 կոփակնում
Հազար դաշտեր ներկել եմ յես արյունով
Թագավորի անվան համար ու փառքի,
Հայրենիքի կուլտուրայի բարիքին:
Զեն մոռացել մինչեւ հիմա Բուրերն ինձ,
Շատ յերկրներ դեռ գողում են սարսափից,
Վոր տվել եմ յես նրանց,
Ինչպես Աֆղան, Հենդստան:
Վերջերս ջարդել եմ Բոշերին,
Ելի մի քանի նման ուրիշին.
Յեվ հիմա, պատրաստ եմ պարոններ, ելի
Մոռանալ հաշիվը իմ տարիների,
Թե վոր հարկ լինի, նվիրվել նորեն
Իմ հայրենիքիս, կամ թագավորին:
Ու կովի համար ընդունակ ե ով,
Թող պատրաստվի, գա, գնանք դեպ Մոսկով,
Վոչնչացնենք, զլխովին հաղթենք
Են բոլշևիկյան սովկալի տիտին:
Այնտեղ, պարոններ սպասում ե մեղ նոր փառքեր,
նոր որ.
Յես վերջացրի. Կեցցե հավիտյան Գևորգ թագավոր:
ԲՈԼՈՐԸ. — Հիպ, հիպ, ուռուա...
ՆԱՎԱՊԵՏԸ. — Հարգելի լեզիներ ու պարոններ, ինդրեմ սեղանի շուրջը:
3-ՐԴԻԸ. — Ո՞ւր ե ոռու կոմսը.

ՆԱՎԱՊԵՏՐ. — Հա, մեր և յերեխան, դայակի գերում չեմ յեղած յերեք:
Զո, շուտ գտիր սուս կոմսին ու բեր նախաճաշի:

ՆԵԳԻԼ. — Հրաման քեզ պարոն նավապետ, յես կոմսին ներքե տևա,
այնուղ արույնում:

ՆԱՎԱՊԵՏՐ. — Ի՞նչ գործ ունի նա այնակը:

ՆԵԳԻԼ. — Նա ամեն ինչ տնտեսմ է, շատ հետաքրքիրն է:

ԿԻՆԸ. — Բայց չե վոր այստեղ նավաստիներն են, կեղառա բանվորները,
նրանք կոմսի համար ի՞նչ ընկերներ են:

ՆԱՎԱՊԵՏՐ. — Դե, շուտ, այս բոպեյիս այստեղ կը երես նրան:

ՆԵԳԻԼ. — Հրաման քեզ, պարօն նավապետ:

ԿԻՆԸ. — Խեղճ յերեխա, ինչեր և քաշել ով գիտե: Գիտեք, այն սոսկալի
Մոսկայում յերեխաներ են կոտորում:

ՆԱՎԱՊԵՏՐ. — Ու նրանցից կերակուր պատրաստում:

ԲՈԼՈՐԸ. — Ախ, ախ, ինչ սոսկալի բան է:

ԿԻՆԸ. — Շուտ և լինելու յերանի, այդ սոսկալի բոլշեիկների վերջու:

ԳԵՆԵՐԱԼԸ. — Միք անհանգստանա, տիկին, շուտով մենք այսպես հուզ
կտանք նրանց, վոր մոխիրներն ել չի մնա:

ԿԻՆԸ. — Ի՞նչ յերջանեկ բոպե կլինի այն բոպեն: (Ներս ե մտնում կոմսը
և նստում: Բոլորը ուշադիր գիտում են նրան):

1-ԻՆ ՃԱՄԲՈՐԴԸ. — Ի՞նչ գեղեցիկ և հագնված:

2-ՐԴԸ. — Ի՞նչ հպարտ տեսք ունի:

3-ՐԴԸ. — Իսկույն յերեռում է, վոր բնական արխատովը բատ է:

4-ՐԴԸ. — Բայց, են վոնց և բոնում գանակն ու պատառաքաղը:

2-ՐԴԸ. — Չեռքերն ել են կոշտացել. խեղճ, վոնց վոր յերեռում և աշխա-
տելիս և յեղել:

ԿԻՆԸ. — (Ուզում և գլուխը շոյել). խեղճ յերեխա:

(Կոմսը շարունակ անբավական, դիտում և իրենով հետաքրքրվողներին,
ցնցում և տիկնոջ ձեռքը և շրջում ափսեն):

ԿՈՄՍԸ. — Են, դուք եւ, կորեք գլխից (արագ դուրս և փախչում):

ԿԻՆԸ. — Ո՞չ, շորիս վրա թափեց արգանակը:

ԳԵՆԵՐԱԼԸ. — Յալքուններն ել քթիս դիպան:

1-ԻՆ ՃԱՄԲՈՐԴԸ. — Ի՞նչ սասց նա:

2-ՐԴԸ. — Կարծեմ սուսերեն աղոթք եր:

3-ՐԴԸ. — Իսկ ինձ թվաց, թե նա հայտնից:

1-ԻՆԸ. — Նա մի քիչ վայրենի յե,

ԿԻՆԸ. — Խեղճ յերեխա, վայրենացել և այն բարբարոսների աշխարհում:

ԳԵՆԵՐԱԼԸ. — Շատ ցավակի յե այս բոլորը:

ԿԻՆԸ. — Տրամադրությունս այնպես փչանում է, յերբ սկսում եմ մտա-
ծել այդ սոսկալի բոլշեիկների վրա:

4-ՐԴԸ. — Իսկ իմ վորս և սկսում ցավել ամեն անգամ:

2-ՐԴԸ. — Այո, նրանք ախորժակ են փչացնում:

3-ՐԴԸ. — Ե՞ս, այդքան շուտ-շուտ չխոսենք նրանց մասին:

ԿԻՆԸ. — Խնդրենք մեր թանկագին նավապետին, մի ծովային յերգի, վոր մուացցի նրանով բոլոր տիսուր մաքերը:

ՆԱՎԱՊԵՏՐ. — Իմ ճամբորդների համար պատրաստ եմ ամեն բան ա-
նելու յես:

ԲՈԼՈՐԸ. — Խսեցեք, լսեցեք:

ՆԱՎԱՊԵՏՐ. — (Յերգում և «Յունգա, տուր թրջեմ կոկորդ» յերգի յե-
ղանակով, նեղը ամեն անգամ մոտեցնում և բաժակը. նավապետը քանի
դնում զինովանում է, վերջը բոլորովին հարրում):

Նավապետ Դյուկը մի անգամ

Նյու-Կեստլից՝ հարավ ճամբար ընկավ.

Նրա «Մարիանան» դեպ ֆորդերըս

Անցնում եր արագ ու վազ:

ԽՄԲՈՎԻՆ. — Յունգա, տուր թրջեմ կոկորդ.

Ֆիք հրվանդանից վոչ ենքան հեռվում,
Առևտրանավ և ինչվոր յերեսում.

Ծեր Դյուկը հայտնի ու քաջ ոծվահեն,
Անչափ ուրափ և եղ պատահմունքին.

ԽՄԲՈՎԻՆ. — Յունգա, տուր թրջեմ կոկորդ.

Շարժկեց «Մարիանան» մրրկի նման,
Ավար զարձնելու այդ նավը ճամբորդ,
Իսկ Դյուկը հպարտ իր նոր հազթությամբ
Թերեց լծակը զեպի նորդ-Աստ-Նորդ.

ԽՄԲՈՎԻՆ. — Յունգա, տուր թրջեմ կոկորդ:

Ու գնում ե իր կայուտում նոր սնդուկ.
Ահա, այսպես քաջ և նավապետը Դյուկը:

ԽՄԲՈՎԻՆ. — Յունգա, տուր թրջեմ կոկորդ:

ԲՈԼՈՐԸ. — Բրամփ, բրամփ,

ՆԱՎԱՊԵՏՐ. — Ո՞վ և համարձակում «Բրավո» գոչել ինձ, յես լարա-
խաղաց եմ, թե ոպերային արախա: Վո՞չ, յես նավապետ եմ, ամեն ինչ
կարգագրողը այստեղ մենակ: Յեվ կարող եմ կախել նրան, ում ըսեխը դուր
չկա: Ի՞նձ:

1-ԻՆԸ. — Կասես թե նավապետ... մի քիչ ենպես...

2-ՐԴԸ. — (Շուրկով) Շան պես հարբել ե.

3-ՐԴԸ. — Վեր կենալու ժամանակը չի:

ՆԱՎԱՊԵՏՐ. — Զն, տար ինձ, ուզում եմ գնամ, քնեմ. ու կասես այդ
անդիտաններին, վոր նավապետ Դյուկը ամեն մեկի կաշին կարող է մաշկել:
ԿԻՆԸ. — Ի՞նչ խայտառակություն:

ԳԵՆԵՐԱԼԸ.—Զինվորական վոսկոր եւ եսպիսի բաները սովորական բաներ են նավասատիների համար:

ՆԱՎԱՊԵՏԸՆ.—Թքել եմ վրան։ իսկ բոլշևիկների պոչը կլոխեմ յես զեռ։ (Զո՞ն դուրս ետանում նավապետին, իսկ հասարակությունը ցրգում է):

1-ԻՆԸ.—Նախաձաշը խիստ աշխույժ վերջացավ։

2-ԻՐԸ.—Վոչինչ չի վոր ծովի վրա յենք. որանք ել իրանց սովորություններն ունեն։

ԳԵՆԵՐԱԼԸ.—(Տիկնոջը): Հարգելի տիկին, յերգվում եմ, վոր շատ շուտ վոչ մի բոլշևիկ չի մնալ։ (Նավասատիները ցածի տախտակամածի վրա աղմկում են, կաթսան քաշքառում):

1-ԻՆ ՆԱՎԱՍՏԻՆ.՝ Եսպիսի որենք չկա—ճիճուներով կերակրելու։

2-ԻՐԸ.—Թող, իրենք լափեն։

3-ԻՐԸ.—Պետք ետանել դունչը կաթսան կոխել վոր հոտ քաշի։

1-ԻՆԸ.—Խոհարարին պետք ետանել նավից։

2-ԻՐԸ.—Ի՞նչ անի խոհարարը, նա նրանց ասածն ետանարում։

3-ԻՐԸ.—Նրանք ամեն պիղծ բանի սովոր են. ճիճուներ ել են լափում։

1-ԻՆԸ.—Թափիր արգանակը. (թափում են ջուրը):

ԴԻԿԸ.—Այդ ի՞նչ շփոթեն, տեղներդ։

2-ԻՐԸ.—Աղած միսը վորդնած են։

ԴԻԿԸ.—Չայներդ, վոչինչ լսել չեմ ուզում։

ՆԱՎԱՍՏԱՆԵՐԸ.—(Աղմկում են): Շատ ենք լոել, անասուն չենք հո, մենք... միհնույն չի, պիսի սատկենք։

ԴԻԿԸ.—Լավ, լավ, կհիշեք հետո, կարձ արեք (անհետանում են):

1-ԻՆԸ.—Վաղեց նավապետին բողոքելու։

2-ԻՐԸ.—Մի վախիր, շնորհակալություն չի տեղ դրա համար նավապետ։

3-ԻՐԸ.—Մենք խոսվարարներ չենք։

1-ԻՆԸ.—Լավ բան չդառավ, տղերը։

2-ԻՐԸ.—Յեկեք կուրրիկը մտնենք, առանց աղմուկի յերեք պատպահը ընտրենք, թող գնան նավապետի մոտ։

3-ԻՐԸ.—Ներողություն խնդրել վլուխ խոնարհել։

2-ԻՐԸ.—Զենդ կարի, սարսաղ վլուխ. սա ներողություն չի, բայց պետք ետայտնենք, թե բանն եսպիս, եսպես, ամեն բանի համաձայն ենք, մեր գործը լավ դիտենք, միայն թե վորդնած միսը՝ որենք չի։

1-ԻՆԸ.—Դե, տղերք, հայդե, միայն հանգարտ... (զուրս են գնում։ Վերին տախտակամածին են կոմսն ու նեղը տղան։ Վերջինս նավաքում են եղանը):

ՆԵԳՐԸ.—Ի՞նչ տիուր եք, պարոն կոմս, տիս, եղ ի՞նչ տիուր։

ԿՈՄՄԸ.—Զե, վոչինչ։

ՆԵԳՐԸ.—Զեր աչքերիցն եմ ակնում, վոր տիուր եք... Հայրենիքդ հեռու յե։ Զո՞ն լավ դիտե, թե վոնց են հայրենիքի կարուր քաշում։

ԿՈՄՄԸ.—Դու կարուր ես քաշում։

ՆԵԳՐԸ.—Հա, սկին դժար ետարելը. բոլորը ծաղրում, ծեծում են, մարդատեղ չեն դնում. հա, յես մի բան եմ ուզում հարցնել ձեզ, պարոն կոմս, հո չեք բարկանալ։

ԿՈՄՄԸ.—Ասա.

ՆԵԳՐԸ.—Եյ, ասում են, թե ձեզ մոտ կարմիրներ կան, կարմիրներ, Նրանց մորթը կարմիր են, այ, ինչպես վոր իմը սե ե։

ԿՈՄՄԸ.—Դու մամնից ես իմացել։

ՆԵԳՐԸ.—Ո՞ո, վողջ աշխարհը թնդում ե. ուրեմն բոլորը կարմիր են, հա. (Ճիծաղում եւ վե վեր թնչում): Դնչները կարմիր, վոտները կարմիր, ձեռները կարմիր. մարդ մի տեսնի։

ԿՈՄՄԸ.—Կարելի յե ժամանակ գա, վոր տեսնես։

ՆԵԳՐԸ.—Սկերին վիրավորում են, ծեծում. իսկ կարմիրները, ասում են, թույլ չեն տալիս իրանց վիրավորելու և ուրիշներին ել են պաշտպանում։ իսկ վաճառականներին, նավապետներին և բոլոր այն տեսակներին, վորոնք վիրավորում են ուրիշներին, ասում են, խորովում են, ուտում։

ԿՈՄՄԸ.—Ի՞նչ ես կարծում, նրանք եղափիսի վատ բանը կուտեն։

ՆԵԳՐԸ.—Կարմիրներ, կարմիրներ, ախ, յերանի մի աչքով ել ե կարողանամարդ տեսնել։

ՆԵԳՐԸ.—(Ցերգում ե):

Իշխան ունեն սիպտակները,

Կոմս ու յանկի շիկաներ։

Իսկ նրանց տեղ մեր յերկիրը՝

Ընձուղա, ջայլամ, կապիկներ։

Զայլամները սիրում են մեզ,

Ընձուղան՝ ինչպես հարազատ,

Թեկ նրանց չեմ տեսել յես—

Մինենթումն եմ ծնված։

Ցերը մեծանամ, դառնամ անահ,

Զվախինամ ապտակից,

Ի՞նչ խիստ վրեժ պետք հանիմ

Յես ամեն մի սիպտակից։

Իսկ ամենից ավելի խիստ,

Պիտի պատժեմ նավապետիս

Պակնառուում վակեմ նրան,

Ու թոցնեմ գեղ Աֆրիկա.

Տեղ հացնեմ,

Հետո տեսմ,

«Բո կտցովզ,

Զայլամ քեռի»,

Հանիր աչքն ես
Մարդակերի»:

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Գործում թողած, ելի սկսեցիր վոռնալ, առ շնուն անպիտան: Նեֆրը. — Ել չեմ, ել չեմ... պարոն նավապետ:

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — (խփում ե մտրակով). Ել չես, ել չես անի... կսովորեց-նեմ յիս քեզ:

Նեֆրը. — Վայ, վայ, վայ...

ԿՈՄՄԸՆ. — (պաշտպանում ե առաջը փակելով). Հճամարձակլէք:

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Կորիր, շան լակոտ, թե չե քեզ ել կդա:

ԿՈՄՄԸՆ. — (համասելով) Դա ստորություն ե:

Դիկը. — (Դուրս վաղելով) պարոն նավապետ, նավի վրա խոռվություն և ծագել:

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Ինչպես:

Դիկը. — Նավաստիները խոռվություն են բարձրացրել: (Ճամբորդները դուրս են վագում սարսափած)

1-ԻՆ ՃԱՄԲՈՐԴԻՔ. — Լսեցիք դուք:

2-ԻՐԴԻՔ. — Ինչ սոսկալի յե:

Կինը. — Գեներալ, դուք պետք ե փրկեք մեզ:

ԳԵՆԵՐԱԼ. — Զեռք վերցրեք, տիկին, իմ բանս այստեղ ամենից վատ կլնելու:

3-ԻՐԴԻՔ. — Վախից փորս ցավեց:

(Դալիս են 3 պատգամավոր նավաստիներ, ճամբորդները սարսափած են):

1-ԻՆԸՆ. — Հրես, սրանք:

2-ԻՐԴԻՔ. — Մեզ կմորթեն, սրանք:

3-ԻՐԴԻՔ. — Ծովը կնետեն:

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — (Հանում ե ատրճանակը) Հապա...

1-ԻՆ ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Այնպես վոր, մեզ ընտրեցին:

2-ԻՐԴԻՔ ՆԱՎ. — Թույլ տվեք հայտնելու, պ. նավապետ...

ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Պատգամավորներ, ներկայացնեցիներ, ի՞նչ ե, կարծում եք, թե ձեր նպովյալ Մոսկվան է: Դիկ, շղթայել բոլորին, կես ժամ հետո — զինվորական դատարան. գնդակահարել:

ՃՈՂՈՐ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ. — Գնդակահարել, գնդակահարել կեցցե մեր փրկիչ քաջ նավապետ Դյուկը:

Յերկրորդ գործող, վերը

III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նավաստիները վհատ նստած են ցածի տախտակամածի վրա. կոմսը իջնում ե վերելից և ականջ դնում սրանց խոռվերին:

3-ԻՐԴԻ ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Բանհներս բուրդ ե:

4-ԻՐԴԻՔ. — » Հա, նավապետը չի ների:

5-ԻՐԴԻՔ. — » Իսկ մուսաստանը՝ հեռու յե, այստեղից այնտեղ յատկել չես կարող:

3-ԻՐԴԻ ՆԱՎԱՊԵՏԸՆ. — Մեր հաշիվը ել ցամաք դուրս գալուց հետո կվերջացնի:

4-ԻՐԴԻ (Կոմսին) Դու ի՞նչ ունես ետք, ինչ ես թրե զալիս:

5-ԻՐԴԻ. — Կարելի յե ուզարկված և ծածուկ նայելու և լսելու մեզ:

ԿՈՄՄԸՆ. — Վհի... ուզում եյի իմանալ թե ի՞նչ եք անելու:

3-ԻՐԴԻՔ. — Ի՞նչ ենք անելու, զիներս ողակի մեջ ենք կոխելու ու վասքերով քացի-քացի անենք:

ԿՈՄՄԸՆ. — Բայց չե գոր, ձեր են պատգամավորներին անպայման կը դնդակահարեն:

4-ԻՐԴԻՔ. — Ի՞նչ ես մեջը խառնվում, պակասը դու յիս:

ԿՈՄՄԸՆ. — Յես զիտեմ, ինչ պետք ե անել:

ՃՈՂՈՐԸՆ. — Տեսնում եք, ինչ խորհրդատու լույս ընկալ:

ԿՈՄՄԸՆ. — Այս թե ի՞նչ ե հարկավոր, ընկերներ:

4-ԻՐԴԻՔ. — Զենդ հա, տեսէք, ինչ խոսքեր ե...

5-ԻՐԴԻՔ. — Հա, եղպիսի խոռվերի համար սպաները մեր կաշիները կրաշկեն:

3-ԻՐԴԻ. — Խելքից յեզել ի:

ԿՈՄՄԸՆ. — Զե, իմ խելքս զիխիս ե, բայց ել ուրիշ ձանապարհ չկա, ընկերներ, պետք ե նավը ձեր ձեռքն առնեք և նավավարներին հարկադրեք, վոր քշեն զետի Արխանգելսկ — մուսաստան: Մինչեւ յերբ պետք ե համբերեք նրանց: Մինույն ե, ձեզ չեն ների, խոկ այստեղ՝ աղատություն ե, մուսաստանը: Վճռեցնեք, ընկերներ:

4-ԻՐԴԻՔ. — Տեսաք, ուր հասցրեց, մանչուկը:

5-ԻՐԴԻՔ. — Ի՞նչ կարստ տես նրան:

3-ԻՐԴԻՔ. Իսկ զու ով ես, պարսն լավ կոմս:

ԿՈՄՄԸՆ. — Լավ, թեե խոսք եմ տվել վոչ վոքի չպատմել, բայց զե, տես, թե ի՞նչ բան ե դուրս զալիս: Յես վոչ մի կոմս չեմ, վոչ ել թե պարսն, այլ Պիտիկ խարիսնավ, իմ բոլոր վկայականներս կեղծ են: Յեղել եմ Գերմանիայում: Խոկ հիմա Ամերիկա յեմ զնում, այստեղ աղերանց հետ կապ հաստատելու: Ել շատ խոսելու ժամանակը չի, վճռեցնեք, ընկերներ, պետք ե զործի անցնել: Միթե դուք թույլ կտաք, վոր ձեր ընկերներին գնդակահարեն:

3-ԻՐԴԻՔ. — Զենդ թողնի:

4-ԻՐԴԻՔ. — Ավելի լավի, թող բոլորիս պնդակահարեն:

5-ԻՐԴԻՔ. — Հաշիվը մեկ ե:

3-ԻՐԴԻ (Ի՞նչ ե, մենք նավաստիներ չենք) Եք Կրոնշտադտ մհաստապուլը:

ԿՈՄՄԸՆ. — Ամենից առաջ զենք պետք ե ձարել: Եղ բանը յիս կանեմ:

Անզլիացի նավաստիները քիչ են և շատ ել չեն դիմադրի. պետք ե գրավել սապիո-կայանը, վորպեսզի չկարողանան հայտնել. նաև վարդներին սպառ-նալ՝ նրանք ուր ուզեն, կտանեն նավը:

ԲՈԼՈՐԸ.—Ճիշտ ե, ճիշտ ե:

3-ՐԴԸ.—Ուրեմն, վճռեցինք, ընկերներ:

4-ՐԸ.—Միայն խելքով պետք ե շարժվել:

ԲՈԼՈՐԸ.—Մաթիկը թող լինի հրամանատար, նա կարգադրի մեզ:

3-ՐԸ.—Շատ լավ, չեմ հրաժարվում: Դե հիմա հանդիսատ, միք աղմկի, ցրվեցիք ամենքդ ձեր տեղը. հենց վոր սուլեմ, կսկսեք գործել:

(Կոմսը բարձրանում է վերին տախտակամածը, հանդիպում է հեղո Զոին):

ՆԵԳՐԸ.—Ո՞, պարսն կոմս, ինչ բարի մարդ եք, գուք խղճացիք թշշ-վառ Զոին: (Ուզում է համբուրել նրա ձեռքը):

ԿՈՄՍԸ.—(Խլելով իր ձեռք): Հարկավոր չի:

ՆԵԳՐԸ.—Հրամայեցիք, պարսն կոմս, ինչ վոր կամենում եք՝ Զոն կը-կատարի:

ԿՈՄՍԸ.—Լսիր ինձ: Դու ուզում ես ազատ լինել, վրեժ հանել նավա-պետից և ոգնել ինձ:

ՆԵԳՐԸ.—Այս, ոգնել ձեզ, վրեժ հանել նավապետից և լինել ազատ: Հրամայեք և Զոն ծովը կնեսավի գլխի վրա:

ԿՈՄՍԸ.—Դրանք պետք չեն: Նավապետի կայուտում մի արկղ կա տ-տրամակներով լիքը... հասկացմար:

ՆԵԳՐԸ.—Դուրս բերել... Թող սպանի ինձ նավապետը, բայց յես կա-նեմ այդ ձեզ համար:

ԿՈՄՍԸ.—Վոչ թե ինձ համար, այլ քեզ ու բոլորիդ համար:

ՆԵԳՐԸ.—Կանեմ, բոլորը կանեմ: (Դուրս ե վազում):

(Կոմսը ծածուկ մոտենում է թագուն նայում և դեպի նավապետի տեղը): (Նավաստիները ներքեում):

4-ՐԸ.—Այ, թե հրաշքը ինչումն ե:

5-ՐԸ.—Վոչ թե կոմս, այլ Պետքանի Խարիսոնով:

4-ՐԸ.—Ախր նայում ե՞ս կոմսի ըռեխ չի—իսկը մեղ նմաններից մեկը:

6-ՐԸ.—Եղ ինչ հրաշքներ են կատարվում Ռուսաստանում, յերբ գոր-ծի մեջ ես տեսակ յերեխաներ են:

5-ՐԸ.—Ո՞վ գիտե, գուցե մենք ել կտանենք:

4-ՐԸ.—Դուցե և կմենինք բոլորս իրար հետ:

6-ՐԸ.—Ե՞ս, ինչ մենակու ժամանակ ե, շատ հետաքրքիր ե տեսնել, մե ինչ տեսակ ե ես նոր բոլշևիկական Ռուսաստանը:

ԿՈՄՍԸ.—(Արագ մոտենում է արկղը ձեռքին, բոլոր նավաստիները հա-վաքվում են). Ահա ատրամանակները, ճիշտ ե, քիչ ե, բայց հետո կավի ըն-թացքում ելի ձեռք կրերենք: Պահապանները կանգնած են կամրջիկի, սան-դուիքի և սպակովայանի մոտ: Յես ամեն ինչ դիմեցի լավ:

3-ՐԸ.—Այ, քեզ տղա: Ուրեմն, ընկերներ, սկսում ենք: Կամ ազատու-

թյուն, Ռուսաստան, կամ մեռնել իրար հետ: Գնանք մինչև վերջ: (Սուլում ե: Նավաստիները ցրվում են ու սողում ամեն կողմ: Պահապանը կամրջիկի մոտ կանգնած ե յերեսը գենը, նրան մոտենում են 3-ը հետեւից, բռնում հանկարծ ու փակում բերանը):

3-ՐԸ.—Զայն չհանես, հա (խլում են հրացանը և ատրճանակը: Պա-հապանը զարմանում ե, հետո ձեռքը թափ տալիս ու ժպտում: Պայթյուն-ներ են լսվում):

3-ՐԸ.—Սկսվեց. Չեզ տեսնեմ, տղերք:

ԴԻԿԸ.—(Դուրս ե վազում): Խոսվություն ե, նովապետ. (կրակում ե, կրակում են և նրա վրա):

ԴԻԿԸ.—(Ճշում ե). Յես վիրավորված եմ, յես սպանված... (գալարվում ե, ընկնում սանդուղքի տակ):

3-ՐԸ.—Մեկին վերջացրիք, հիմա նավապետին:

ԿՈՄՍԸ.—(Դուրս ե վազում կարմիր փողկապով):

Ռադիո-կայանը գրավված ե:

ՆԱՎԱՍՏԻՆԵՐԸ.—Փնտրեցիք նավապետին. մահ այն շանը:

ՆԱՎԱՊԵՏԸ.—(Վազում ե գեղի կամրջիկը). Այս ինչ ե, խոսվություն, յես ձեզ ցույց կտամ, ուսւ խոզեր. (կրակում ե):

3-ՐԸ.—Կրակեցիք զրա վրա, զուր գնդակ չփչացնեք: (Կրակոց):

ԴԵՆԵՐԱԼԸ.—(Դուրս ե վազում): Այս ինչ ե, այս ինչ ե, կրակում են. յես կրակոցին չեմ կարող դիմանալ: (Թագնվում ե աթոռի տակ):

ՆԱՎԱՊԵՏԸ.—(Ընկնում ե, խըսուացնում): Դիկ ոգնիր, կախեցիք այս շներին:

3-ՐԸ.—Ուշ ե արդեն, ասա, քեզ չկախեն: Վերցրիք, տղերք. (բռնում են նավապետին, ուզում են ծովը նետեն): Քաշիր, քաշիր, գալիս ե հա... ՆԱՎԱՊԵՏԸ.

ՆԱՎԱՊԵՏԸ.—Խնայեցիք, խնայեցիք:

3-ՐԸ.—Վեր ցցեցիք, տղերք: Նա վտանգավոր չի ել մեզ համար, փա-կեցիք նրան առանձնաբանում:

ԿԻՆԸ.—Աղերսում եմ, խնայեցիք ինձ ու Միմիշկայիս: (Տեսնում ե կոմսին): Այս ինչ բան ե: Պաշտպանիր ինձ, պաշտպանիր ինձ. Կոմսը կար-միր փողկապով ե. խեղճ իմ Միմիշկա, կարմիր տեսնել չի կարող:

3-ՐԸ.—ՆԱՎԱՊԵՏԸ.—Նավապերին դեսը բերիք: Նավը մերն ե:

ԿԻՆԸ.—Միրսա գնում ե, ջնոր, ջնոր: Յեվ վոչ վոք բժշկական ոգնու-թյուն չի հասցնի. զազաններ:

4-ՐԸ.—Լավ, լավ:

ԿԻՆԸ.—Ախ, ախ, գեներալը այստեղ ե, աթոռի տակը:

ԴԵՆԵՐԱԼԸ.—(Դուրս ե հանում գլուխիը): Զայնդ կտրիր, հիմար պա-ռավ: Յես ինչ գեներալ եմ: Իմ պատս բանվոր եր, իսկ տասոս գյուղացի կին: Յես ել միշտ... են, են... ինչպես ե կոչվում... պըռլետարիստի կողմն եմ յեղել:

ԿԻՆԸ.—Ի՞նչ սոսկալի բան ե, գեներալը խելագարվել ե:

1-ԻՆ ՃԱՄԲՈՐԴԸ.—Ի՞նչ սոսկալի բան: Ահա բոլշևիկների մի նոր զոհ:

ԲՈԼՈՐ ՃԱՄԲԸ.—Լ. —Ի՞նչ սոսկալի յե, ի՞նչ պետք ե լինի մեր վերջը:

3-րդ ՆԱՎԱՐԱՏԻՒՆ.—Հանդարտ: Միք աղմկի: Զեզ վոչինչ չի լինի: Կը-
գնանք մինչև Արխանգելսկի խոկ այնտեղից ուր կուզեք՝ կորեք: Միայն պետք
է տեղներդ փոխեք հիմա: Կանանց ու յերեխանց տրյումիներից կտեղափո-
խնք ձեր կայուտաները, խոկ տղամարդիկ կարող են տրյումիներում մնալ:
Կինք. — Խեղճ Միմիշկա չի դիմանալ այս տեսակ հասարակության շըր-
ջանում:

ԳԵՆԵՐՈԼ. — Յես կիսեղեմ սրան իմ ձեռքերովս:
Կինք. — Վայ, վայ, յես վախենում եմ սրանից:

3-րդ ՆԱՎ. — Հանդարտ: Ըսեցեք: Հիմա մեր խոսելու ժամանակն է (բե-
րում են նավավարին): Ահա ընկեր նավավարը: Նավը մերն են: Յես նավա-
պետի տեղը կլինեմ: Պետք է ըսես ինձ, հասկացմար (ձեռքը տանում է առո-
ճանակին):

ՆԱՎԱՐԱՏԻՒՆ.—Գուտ, գուտ, իմ հասկացավ:

3-րդ. — Ըսթացքներս փոխում ենք, պետք է լողանք գեղի Արխան-
գելսկ այս կողմը գեղի Ռուսաստան (մատով ցույց է տալիս քարտեղի վրա):
ՆԱՎԱՐԱՏԻՒՆ.—Գուտ, գուտ, հասկացավ, բավենիկ, գուտ, գուտ:

ԿՈՄՍՈԼ. — Յես ասացի, փոր նրանք կհամաձայնեն, միայն շատ խիստ
պետք է հսկել:

3-րդ. — Աչքներու չենք փակի, մի վախենոր:

ՆԵԳԻՐ. — Պարոն կոմս, պարոն կոմս:

ԿՈՄՍՈԼ. — Հեյ, աղքեր, ել կոմս չեմ, խոեցին կոմսությունս: Այ, ուզում
եյիր կարմիրներին տեսնել, — տես:

ՆԵԳԻՐ. — Կարմիր, ոհանա: Յես տեսնում եմ կարմիրներին, խոկ յերես-
ները սպիտակ ե, կարմիր չե, ձեռքները կարմիր չեն:

ԿՈՄՍՈԼ. — Վոչինչ, բայց նո այստեղ կարմիր ե (խում ե կրծքին):

3-րդ. — Յեկ գորտեղից են այսպիսի ստանի ձուտերը:

ԿՈՄՍՈԼ. — Մենք շատ շատ ենք, յես մենակ չեմ, հազարներ ենք, այ, նո
զալիս եք, կտեսնեք:

4-րդ. — Իսկ գու, դու ով ես:

ԿՈՄՍՈԼ. — Պատկում:

ՄԻՆՔ անվեհեր

ՅԵՐԵՒԱՆԵՐ

ՈՒ հանդուգն ենք

Չափից վիր:

ՄԻՔ սրտերը՝

ՄՐԲԻԿ ու հուր.

ՄԻՔ հայացքը՝

Թափանցուն, սուր:

Ուր ել կուզես,

Վոր յերկըրում՝

ՄԻՔ համար միշտ

Գործ ենք վհարում:

Ամեն բոպե,

Ամեն մի ժամ:

Գործ կա պատրաստ

Գողջիս համար:

Գորտեղ իրզախ

Յերգ եք լուսում:

Գորտեղ ծիծաղ

Ուրախ, հնչուն:

Իմացեք վոր,

ՄԻՆՔ ենք յերգում

Եղակես յերգեր—

Ուրիշ—ոչով:

ՄԻՆՔ ստրուկ չենք,

Աղա՝ վոչ ել.

ՄԻՔ յեղբայրները՝

Կոմմունարներ:

Ունենք ուրախ

Յեղբայրություն,

Մուկոֆն ե մեր

Հայրենի տուն:

ՆԵԳԻՐ. — Յես ել եմ ուզում ձեզ պես լինել սրանք սև ետա-
լիս ձեռքերն ու գլուխը), այստեղ կարմիր ե (ցույց ե տալիս կուրծքը):

ԿՈՄՍՈԼ. — Բոլորն ել կարող են լինել—սիպտակներն ել, սեերն ել, դե-
ղիններն ել, ուրիշներն ել, բոլորը:

3-րդ ՆԱՎԱՐԱՏ. — (Բարձրանում է նավապետի տեղը և կարգադրում):
Ամենն իր տեղը, ամենասրագ ընթացք, Դեղի ՀՅՈՒՍԻՒՄ, դեպի Արխան-
գելսկ, գեղի Ռուսաստան:

ԲՈԼՈՐԸ. — (Յերգում են).

ԳԻԱՆՔ այնտեղ

ՄԻՆՔ միատեղ

Ուր աշխատանքն է տիրում,

Ուր կյանքն ուրախ ե ու պայծառ,

Ուր շղթաներն ըստրուկների

Չարդել են մեր մեծ յեղբայրը:

Կամքն ու ձեռքը

Բաղդ են կոռում

Հաշտ ու խաղաղ գործի մեջ.

Շիտակ ճամբան

ՄԻՔ ցույց կտան

ՄԻՔ ընկերները մինչև վերջ:

Ծանր կովում

Դեմքը ժպտուն

Ամեն մեկը փոխարինող կունենա.

Առաջ դիմենք

Նոր գործի մենք,

Պայծառ ե որն, արեկա:


(Վ. Ե Ր Հ)

ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Լավ ե, վոր այս պիյեսան դրվի մեծ դահլիճում կամ հենց բացողյա: Բայց մենք խաղացել ենք «Ազատ աշխատանք» մանկատանը (Կանոնովի ավանում) վոչ այնքան մեծ մի սենյակում: Կարիք չկա բոլորովին, նավային իրական պարագայք ստեղծելու, մանավանդ վոր դժվար ել կլինի զպրոցա-
կան ներկայացման համար: Մենք միացըինք մի քանի սեղաններ իրար

վոր դարձավ վերին տախտակամածը: Մի կողմում, մի փռքրիկ սեղան դրինք մի բարձրույթի վրա և դարձավ նավապետի տեղը, մյուս կողմում՝ կանգնեցրինք մի բարձրաձիգ սանդուղք, վորը և կայծի տպափորություն տվավ: Բացի սրանից, այս սանդուղքը հնարավորություն եր տալիս լավ դասավորել մասնակցողներին: Նավային մի քանի պարագաներ, շինված մանուկների ձեռքով ստվարաթղթից (փրկող շրջաններ, պլակատներ՝ մակագրված «Լուիզան այսոր՝ ճանապարհում ե», խոսելու խողովակներ՝ նավաշիտի ոթյակում) — տալիս են նաև բավարար տպավորություն: Հագուստների համար առանձին ցուցմունքներ հարկավոր չեն: Մենք բոլոր ճամբորդների, Դիկի և նավապետի համար սպիտակ շորեր սարքեցինք, իսկ նավաստիների համար մուզ գույնի: Այս ձեռվ ստացվում եր և տեսողական հետաքրքիր պատկեր և միաժամանակ իրարից աչքի ընկնող տարբերություն: Կոմսը ուներ կապույտ նավաստիական համազգեստ: Յերաժշտությունը I-ին գործողությանը պետք է ուստական յերգի բնույթ ունենա, II-ին՝ ամերիկական նոր պարերի ու յերգերի, իսկ III-ին՝ պատկոմական և հեղափոխական:

ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ



Թարգմ.՝ Գ. Մեսյան

Ի՞նչ արեցիր դու անապատան յիշեխաների համար:




ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻՆ

Մեկն ե Մայիս ամսի պայծառ, լուսեղ, զվարթ,
Հազար հույսեր ունենք, հազար յերգեր հպարտ...
Հեռու մոտիկ ընկեր, առած մուրճ ու մանգաղ,
Կազմեք գնդեր խրոխտ, յեկեք արագ անվախ.
Հեռու-հեռու յերկրում կապանք ու փուշ գեռ կա,
Են ել պիտի փշենք, են ել հնձենք անահ...
Տեսեք արեն եսոր ինչքան հուր ե վառել,
Ի՞նչքան ծաղիկ ու խոտ, ի՞նչքան տերե կանթել,
Առուները խոսուն, աղբյուրները գնզան
Կապանքները փշրած՝ սարից յելած կզան...
Յեկեք, յեկեք, յեկեք... Հեղեղների պես հորդ,
Կայծակների պես հաղթ, արեների պես բորբ.
Հրդեհ պիտի վառվի ձեր սրտերի հրից,
Կյանքը պիտի կերտվի՝ նորից, նորից, նորից...
Հեռու մոտիկ ընկեր, մուրճի, մոճի, հանդի,
Արագ, աշխույժ, արի, յեկեք հզոր մարտի...
Մեկն ե Մայիս ամսի պայծառ, լուսեղ, զվարթ,
Հազար հույսեր ունենք, հազար յերգեր հպարտ:

Գ. Գ.

Մայիսի մեկը միշտ մարդկության գարնան մեծ տնն է լինելու:



ՀԱՐԱՄ ՓՈՂԵՐ

(Հերիտթ)

Մի շատ բարի մարդ ինչքան վոր բարի յեր, այնքան ել աղքատ: Սա ամեն որ տեսնում եր փողոցում մի ծեր մուրացկան յերկու աչքով կույր: Չմեռը ձյունի մեջ, ամառն արևի տակ միշտ միհնույն տեղը ծալապատիկ նստած, ձեռնափայտը կողքին, կույր ծերունին վողորմություն եր խնդրում այնքան աղիողորմ ձայնով, վոր բարի մարդու սիրտը մղկառում եր: Բայց այդ բարի մարդը ինքն աղքատ եր, վոչինչ չուներ, վոր կույր ծերունուն վողորմություն տար:

Ու ամեն որ ծերունի մուրացկանի մոտով անցնելիս բարի մարդն առում եր իր մտքում: «Թե վոր մի քսակ վոսկի գտնեմ ե, արևս վկա, կեսն ես ծերունուն կտամ»:

Ու ճիշտ վոր նա մի քսակ վոսկի գտավ: Շատ զարմացավ, ի հարկե, շատ ել ուրախացավ, բայց չլացավ—խոսքին հաստատ մնաց: Վերցրեց վոսկին ուղիղ կես արագ, կեսն ածեց նույն քսակի մեջ, մյուս կեսը կապեց թաշկինակի մեջ ու գնաց կույր մուրացկանի մոտ:

— Առ, պապի,—ասաց ու քսակով վոսկին դրեց նրա գողը:

— Այս ի՞նչ ե, վորդի, —հարցրեց կույր ծերունին:
Վոսկի յե:

— Ի՞նչու յես տալիս ինձ այսքան վոսկին:

— Ասեմ ինչու: Քո խեղճ դրությունը վոր տեսնում եյի, առում եյի ինքս ինձ: «Երնեկ մի քսակ վոսկի գտնեմ, հալալ կես կանեմ, կեսն ես ծերունուն կտամ»: Հիմի գտել եմ, կես եմ արել ու քեզ եմ տալիս:

Ծերունին ել վոչ տարավ, վոչ բերեց—հարցրեց.

— Հետո հալալ ես կես արել:

Բարի մարդն յերդում կրակն ընկավ, վոր հալալ ե կես արել:

— Մինչև վոր քոն ու իմը ծանր ու թեթև չանեմ, չեմ հավատա, —ասաց կույր մուրացկանը:

Բարի մարդը տվեց նրան թաշկինակի մեջ կապած իր բաժինը:

Ծերունին անսաս վերցրեց և, ծանր ու թեթև անելու տեղ, ծոցը կոխեց թե իր և թե նրա բաժինը:

Բարի մարդը զարմացավ:

— Այդ ի՞նչ արիք, պապի, —հարցրեց:

— Իմ բաղդին գտել ես, բոլորն ել ինձ կհասնի, —հանգիստ կերպով պատասխանեց ծերունին ծոցը կոճկելով:

— Ճիշտ ե քո բաղդին եմ գտել, —ասաց բարի մարդը, —բայց խո չեմ ասել, թե բոլորը կտամ քեզ: Ի՞նչու ծոցդ կոխեցիր: Յետ տուր իմ կեսը:

Ծերունին, ընդհակառակը, ծոցն ավելի պինդ կոճկեց:

— Թե խելք ունես, սուս արտ և հեռացիր, —ասաց նա հանգիստ:

Բարի մարդը տեսավ, վոր ծերունին հանաք չի անում, վրա ընկավ, վոր յետ առնի իր բաժինը:

Բայց մուրացկանը պինդ բռնեց ծոցը, ընկավ յերեսի վրա և սկսեց բղավել:

— Ողնեցեք, ինձ կողոպտում են...

Փողոցի մարդիկ հավաքվեցին նրանց զիսին:

Բարի մարդը վոչ մի կերպ չկարողացավ համոզել նրանց, վոր կողոպտողն ինքը չէ, այլ ծերունին:

Նրան չհավատացին, մինչև անգամ ծիծաղեցին, վոր նա սկսեց տոպրակով վոսկու պատմությունն անել, ու մի լավ ել ծեծեցին:

— Զանել, աշխատանքի ընդունակ մարդ ես, ու չես ամաչում կույր ծեր մուրացկանի կոպեկ-կոպեկ հավաքած փողերն ես ու զում խլի: Կորի կորի, թե չեմ մեծ տեղդ ականջդ կմնա:

Այսպես վզակոթին տալով, դառ ու դատարկ քշեցին խեղճ բարի մարդուն:

||

Այս անարդարության վրա բարի մարդու սիրուլ լցվեց սոսկավ չարությամբ գեղի ապերախտ ծերունին: Ի՞նչքան վոր առաջ խըլ ձում եր նրան, այժմ նույնքան առում եր: «Բաս յես մարդ չեմ լինի, թե վոր ուտեցնեմ քեզ քո այդ վարմունքը»—ասաց նա մըտքումը և սկսեց—հեռու մոտից ման գալ այն փողոցում, ուր հստած եր կույր մուրացկանը:

— Հետո ճանաչում ես զողիդ, — հարցը եց նա: — Վարտեղից ճանաչեմ, վորդի, — պատասխանեց ծերունին. — Նրա վոչ մտնելու եմ իմացել, — քնած ելի, — վոչ ել աչք ունեմ, վոր տեսնեցի:

— Բայ ինչպես պետք ե բռնես: — Ինչպես... այն յես գիտեմ, — առաց ծերունին խորհրդավոր կերպով:

Հետո խնդրեց.

— Իմացել եմ բարի մարդ ես, աղքատներին կերակրում ես ձրի. քաղցած եմ, մի պատառ հաց տաս ուտեմ:

Բարի մարդը հրամայեց ծառաներին, վոր լավ կերակրեն ծերունուն: Ինքն ել նստած մնաց նրա կողքին և սկսեց ծառայել նրոն: Ռունուն:

Հենց աւաշին պատառը, վոր ծերունին բերանը դրեց և անտամ բերանով ծամծմելուց հետո ուզում եր կուլ տալ, մնաց կորդում, և նա քիչ մնաց խեղդվեր:

Իսկույն բարի մարդը պատառը համեց նրա բերանից և աղտաց նրան խեղդվելուց:

Հենց վոր ծերունին ուշի յեկավ, վրա ընկավ և պինդ բռնեց բարի մարդու ձեռքից:

— Յոնել եմ, գողիս բռնել եմ, — բղավեց նա այնպիսի մի ուժով, վոր ամբողջ ճաշարանը հավաքվեց նրանց գլխին:

Բարի մարդը թե վախից և թե զարմանքից քար կտրեց: — Ի՞նչ ես ասում, պապի, զժվել ես, — ասաց նա:

— Դու յես, դու յես գողս, չես կարող ուրանալ... Ճնոր, անոր այս բաղեցիս փողերս, թե չե զանգատ կդնամ, սաղ աշխարքում խայտառակ կանեմ քեզ, շարունակում եր բղավել ծերունին և այն պիստ եր բռնել բարի մարդու ձեռքից, վոր կարծես մի հիսուն տարով ջանելացել եր:

Տեսնելով, վոր իսկապես ուրանալ չի կարող, վորովհետեւ ծերունին, ինչպես յերեսում եր, առայժմ իրեն միայն հայտնի մի նաստառ նշանով ճանաչել եր իր իսկական զողին, բարի մարդը վճռեց անկեղծորեն խոստովանվել ամեն բան, մանավանդ վոր ծերունին սպառնում եր զանգատ զնալ և ամբողջ աշխարհում խայտառակել իր բարի անունը: Բայց ամենից առաջ նա հրամայեց, վոր իրենց կլիմին հավաքված մարդիկ հեռանան, հետո, յերբ ինքն ու ծերունին մենակ մնացին, ասաց.

— Քո գողն իսկապես յես եմ, պապի: Բայց գիտես յես ով եմ և ինչու գողացա փողերդ: Յես նա յեմ, վոր իր գտած վոսկին հալալ փայ արավ քեզ հետ, բայց գու նրա փայն ել խլեցիր, հալամի լավ ել ծեծել տվիր փողոցի մարդկանց ձեռքով, այնպես ցույց տալով, թե յես եմ քեզ թալանողը և վոչ թե գու ինձ: Յես վճռեցի պատժել քեզ քո ապերախտության համար: Ու հենց նույն որը թաքուն մտա յետելիցդ քո տունը ու, յերբ որ գու քնեցիր, դատարկեցի քո փողերի գաղտնի պահարանը: Հիմա գու ասա, լավ արի, թե վատ:

Ծերունին չպատասխանեց:

— Իմ կարծիքով լավ արի, — շարունակեց բարի մարդը, — վորովհետեւ ապերախտությունը լավ բան չե և ապերախտ մարդը պետք ե պատժի: Բայց այս թողնենք: Հիմա գանք քեզ: Զարմանքուտանում ե, թե ինչպես իմացար, վոր գողդ յես եմ, քանի վոր, ինչպես ինքդ ել ասացիր, վոչ աչք ունես, վոր տեսնելիր, վոչ ել զարթուն եյիր, վոր իմանայիր: Այդ վոր ասես, պապի, քո բողոքողերը յետ կտամ քեզ առանց գանգատի, առանց դարմաղալի, հայլ մի բան ել ինքս կավելացնեմ:

Ծերունին յերկար մտածեց, մտածեց, հետո ասաց տիսուր ձայնով:

— Յերբ վոր գու անկեղծ կերպով խոստովանվեցիր, վորդի, յես ել կասեմ իմը: Ասացի, վոր յես շատ հարուստ եյի, բայց չասացի, վոր փողապաշտ եյի, ազան և ժլատ: Փողն իմ աստվածն եր: Փողդիզելու համար ինչ վատություն ասես՝ անում եյի. խարում եյի: սուտ յերգում ուտում, գողանում, կողոպտում, նույն իսկ չեյի քաշվում վորբերի բերնի հացը կարելու: Վոչ մի բանվոր չեր զիմանում ինձ մոտ, վորովհետեւ ամիսներով աշխատեցնում եյի և զառ ու դատարկ ճամբու զնում, շահագործում անվերջ. շատ ու շատ խեղճեր սե ու մութ են անցկացրել իրենց որը: Ամեն որ հաղարավոր բերաններ անեծքներ եյին ուղարկում ինձ: Որ ու գիշեր միայն այն եյի մտածում, թե ել ումը կարող եմ գովել, ումից կարող եմ զջել, վոր զանձարանս ել ավելի հարստացնեմ: Ու մի որ յեկա կուրացա: Գանձարանս արդեն զմփում եր վոսկով ու արծաթով: Բայց ի՞նչ ոգուտ: Ամեն անգամ, վոր փորձում եյի այդ գանձարանից մի կոպեկ հացի տալ, այդ հացը կուլ չեր զնում, մնում եր կոկորդումս և յես քիչ եր մնում, վոր խեղդվեյի, ինչպես վոր հիմի:

Ծերունու այս խոսքերի վրա բարի մարդը մատը կծեց:
— Ա՛, ուրեմն դրանով իմացար, — բացականչեց նա:
— Դրանով, բա, դրանով, վորդի, թե չե՛ ուրիշ ինչով կարող
ելի իմանալ, — ասաց ծերունին և շարունակեց. — Յերբ վոր այն առա-
վոր վեր կացա, տեսա գաղանի պահարանս դատարկել են, ասի՞
զուղե վյուղ, քաղաքե քաղաք, աշխարհե աշխարհ. Ուր նսում ելի,
փող չելի իմսդրում. ասում ելի՝ մի պատառ հաց տվեք ուտեմ: Թե
վոր տված հացը կուլ եր գնում, ասում ելի՝ սա իմ գողը չի: Քո
տված հացը տեսար, վոր մնաց բողազում: Դրանով իմացա, վոր
այստեղ խառն ե իմ դատած հարամ փողն ու հաստատ ել իմացա,
վոր դու յես իմ գողը:

— Լավ, հարամ դատած փողերդ վոր չելիր կարողանում ու-
տել, բաս ինչով ես ապրել մինչեւ հիմա, — հարցըց բարի մարդը:

— Մուրացկանությամբ, վորդի, սրանորա տված փողորմու-
թյունով, — պատասխանեց ծերունին: Հիմի, վոր դաշ գողիս, հան-
դյունով, պատասխանեց ծերունին: Գնա, վորդի, ինչքան վոր իմ հարամ դատած փո-
ղիստ կմեռնեմ: Գնա, վորդի, ինչքան վոր իմ հարամ դատած փո-
ղերը մի պատիժ գարձան ինձ, այնքան թող հալալ լինենք, քա-
նի վոր դու այդ փողերը չես պահում ինձ պես, այլ գործ ես ածում
խեղճ, անկար մարդկանց բարություն անելու համար: Թող այդ
փողերն ելի գնան նրանց, ումից վոր յես խլել եմ:

Ասաց ծերունին, ցուղն առավ և դուրս գնաց:

Նար-Գոս



Մենք գալիս ենք փոխարինելու մեր նեղափակական մարտիկ-
ներին:



ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ*)

Խոմը Հ. ՀԱՐԱԲԵՏՅԱՆԻ


Շիրամէ Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Կար-նան հու- առ սու այս ու- րաիս ո - րին
դուրս յե - լոր խումբ, խումբ, բան - վոր ըն - կեր - ներ,
եկ վող - զոյն տա - լով դաշտ ու չո - րե - րին
յեր - զեր յեր ա - կատ տո - նա - կան յեր - զեր
տո - նա - կան յեր - զեր :

Գոռջարձագանքը ձեր հաղթ յերգերի
թող սարսափ աղդի թշնամու սրտին,
թող ցնցի հողին բոնավորների,
Հանգիստը խլի ճնշող հարցումին:

Յեկ թող խլանա ձայնը բռնության
Ազմուկ չլովի գործարաններից.
Այսոր մեր տանն և վեհ զիաակցու-
թյան
թող պայմի աղան համաս զայրութից:

*) || volta-ն յերգել միայն յերգի վերջը:



ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՅԻՍԸ

Մի բնակուրուն մանկապարտեզի համար, խմբական առասանությունը լին լերգով:

Բեմը անտառ և ներկայացնում, գետինը և ծառերը ծածկված են ձյունով: Ավանոցինի վրա Զմեռ-Տառը դավազանը ձեռքին: Հեռվում մի խումբ տուլաշներ):*

Նրանց առաջնորդում և յերիտասարդ գեկավար-Ապրիլը: Տուլաշների հաղին մոխրագույն զգեստ, գլխին՝ սաղավարդ—թոշունի զլուխ: Ապրիլի հաղին բաց կանաչ, կամ յերկնագույն թիկնոց, ձեռքին սուր: Վարագույրը բարձրանալին տուլաշները հարձակվում են Զմեռ-Տառի վրա:

Տուլաչների խումբը (կարելի յե արտասանել նվազակցությամբ)

Գլնա, կորիր, անպետք Զմեռ,
Կյանքիդ վերջին ժամը խփեց...
Մեզ նոր կյանքը ազատաբեր
իր մոտ կանչեց ու ձայն տվեց:
Շղթաները ժանդով պատաճ
Մենք կը ջարդենք հզոր ձեռքով,
Յեվ նոր բախտին լայնատարած
Կը աիրանանք արի կամքով:
Դե, յեղբայրներ, առաջ քայլենք,
Գիշեր շըկա ել մեղ համար:
Բոկ գու, պառավ չար ու անպետք,
Գնա, կորիր ու թող անտառ:

(Ապրիլը առաջ գալով)

Յես Ապրիլն եմ ջահել ու հաղթ,
Փետրվարին, մարտին յեղբայր,
Յես նետում եմ կանչ և անվախ
Կորիր սկսում Զմռան հետ չար:

Տուլաչների խումբը—Դե, հեռացիր, պառավ Զմեռ,
Գլնա, կորիր ու թող անտառ:

Ապրիլը — Զյունից ազատ, ձամփով կանաչ,
Դեպի գետը այն սառուցապատ,



Յես քայլում եմ, անցնում առաջ:
Վոր շուտ ջարդեմ սառույցը հաստ:

Տուլաչների խումբը—(Հարձակվելով)

Դե, հեռացիր, գու չար Զմեռ,
Գլնա, կորիր ու թող անտառ:
Զմեռ—Վոչ, Ապրիլ իմ, վոչ սիրելիս,
Սիրունիկ իմ, մի քիչ սպասիր.
Դեռ մենք քեզ հետ կորիկ կը մղենք,
Միայն այնպես կը բաժանվենք:
Մահ և սպասում քեզ ահոելի,
Դե, գուրս արի...
Զմեռը հարձակվում է Ապրիլի վրա: Ապրիլը մահացու վիրակորված վայր
է ընկնում:

Տուլաչների խումբը—(շիռթված.)

Վայ մեզ, վայ մեզ, մենք ինչ անենք,
Պարագեց, սպանվեց Ապրիլը մեր...

Միթե նորից քամի, անձրե
Բուք ու բորան, ցուրտ մահաբեր:
Մի ձայն—(Տուլաշների հետեւի շաբակերից, բարձր)
Եյ, յեղբայրներ, ահա մի յելք—
Պիտի կանչել, շուտ հրավիրել
Բանվորական Մայիսը մեր:
Նա կը հաղթի չար պառավին,
Մահ կը բերի այդ անպետքին:

Տուլաչների խումբը—(հուզված և բարձր)

Մայիս, Մայիս, Եյ, ժիր բանվոր.
Յերեսում է Մայիսը: Նրա հաղին վարդագույն թիկնոց, ձեռքին յերկար վոս-
կեղոն գավազան, ծայրին կարմիր դրոշակ:

Մայիսը—(նվազակցությամբ)

Մայիս եմ յես
Կանաչազարդ,
Նուրբ տերեսով,
Աշխույժ, զվարթ,
Արի կամքով,
Անհնազանդ...
Շատապում եմ յես,

*) Տուլաշ ու ազուավ (բրաչ).

Քայլում առաջ,
Դեպի նոր կյանք՝
Յերգ ու շառաչ...

Գավազանով գիտչում և ծառերին, ծառերից թափվում են ձյունի փաթիւնը: Չմեռը, ձգելով իր գավազանը, փախչում ե: Բեմը լուսավորվում է կարմիր լույսով:

Մայիս (շաբունակում ե)

Մայիսն եմ յես
Բանվորական,
Ընկերը քաջ
Կարմիր գարնան.
Յես տոնն եմ մեծ
Աշխատանքի,
Ուրախության
Յեվ բերկրանքի:
Եյ, ընկերներ,
Կանչս լսեք
Կարմրաթե.
Յես բանքերն եմ
Ազատության,
Առոհանդակը
Խաղաղության,
Ինձ մոտ շտապեք
Ճամփով անշեղ:

Ամեն կողմից զալիս են և շրջապատում Մայիսին բանվորները կարմիր շապիկներով, ձեռքներին մուրճ, զյուղացիները՝ մանզաղներով: Մայիսը բարձրանում է պատվանդանի վրա: Նրա հետեւ իջնում ե մի գարագույր, գորի վրա նկարված են մուրճ, մանզաղ և տատզ: Յեկարները շրջապատելով Մայիսին ընդունում են գեղեցիկ դիրք ու յերգում խմբովին:

Խումբը յերգում է:

Խոսք—բարգմ. ՀԱ. ՊՈՂ. ԱՍՏԵՎՈՆԻ

Շիրած. Ա. ՏԵԳՐԱՆՅԱՆԻ

Խայլերց — 8 —

Piano

Օօրտով
Ortvi

Մար-ին-ներ են մենակամ-իով զա-ին
կար-ին ա-մեն զար-կոյ ին-կո

բա - կա - սում ե սա իս - վս - ըը բակ

վեր են պար - կը մեն մեր են - ան դաշ - կով



ՏԱՆԳ-ՀՈՆԳ ԳՅՈՒՂՈՒՄ

Ամբողջ յերկու տարի ծերունի Զանգ-Սին թափառում եր անզիական խոշոր կոնցեսիայի¹⁾ հողամասերում ընկած գյուղերում:

Ամեն մի գյուղացի, վոր մեջքը ծռած առավոտից մինչև իրիկուն աշխատում եր իր բրձնի արտում, ուրախությամբ եր մտածում այս ժամի մասին, յերբ իր մետաղե դրամը կը զբնդա Զանգ-Սի-ի թիթեղյա արկղում: Յեզ չեղավ մի դեպք, յերբ խղճուկ գյուղական խրճիթի տերը հանդիպի ծերունի Զանգ-Սի-ին և անձար կերպով ձեռքերը թափ տալով ասի նրան.

— Այս անգամ յես վոչինչ չունեմ, Զանգ-Սի:

Վոչ մի անգամ այդպիսի դեպք չպատահեց, թեև շատ հաճախ գյուղացին իր քաղցը հագեցնելու համար սե իական թուքն եր կուտալիս:

Այդպես յերկու տարվա ընթացքում ծերունի Զանգ-Սին կարողացավ հավաքել դպրոցի շինության համար հարկավոր գումարը: Նա պատվով կատարեց իրեն հանձնված գործը:

1) Կոնցեսիա.—Վոր և ե կառավարություն իր այս կամ այն հողամասը կամ հանքերը վորոշ պայմանով տալիս և մասնավոր մարդկանց կամ ընկերությունների ոպատգործելու նպատակով:

Եերբողական պետությունները, գլխավորապես Անգլիան, Ամերիկան և յապոնական պետությունը բազմաթիվ կոնցեսիաներ ունեն Զինաստանում: Նրանք ոգոտվելով Զինաստանի հետամնացությունից վոչ միայն շահագործում են իրենց տրված հողամասերը, այլ և հաստատել են այնտեղ իրենց սեփական կառավարությունը՝ վաստիկանություն, դատարան և այլն: Այդ կոնցեսիաներում կան բավական շինական գյուղեր և քաղաքներ, կոնցեսիաներում ապրող չինացիները շատ ավելի բազմաթիվ են, քան ոտարները: Բայց և այնպիս նրանք ել ոտիպված են յենթարկվելու հաճախ ոտարների որենքներին: Այդ և նման անհավասար պայմանների և անիրավությունների գեմ և կովում այժմ Զինաստանի ազգային-հեղափոխական (կանտոնի) կառավարությունը:

Ծանոթ. քարզմանչի

Յերբ յերկու տարի առաջ գյուղական ժողովը վորոշեց զպրոց շինել, բոլոր ծերունիներն եր, իբրև մի մարդ, գոչում ելին.

— Փողերը թող Զանդ-Մին հավաքի:

Հենց այդտեղ ե, վոր յերիտասարդներից մեկն ասաց հանաքով.

— Դե, ինչպես կարող ե այդպիսի ծերունին զլուխ բերել փողի հետ կապված այդտեսակ մի ծանր գործ:

Այդ ժամանակ ծերունի Զանդ-Մին կանգնեց և սկսեց խոսել հանգիստ, բայց քիչ դողդոջուն ձայնով.

— Դու ճիշտ ես առում, զավակս. յես ծեր եմ, և իմ բանը չի փողի հետ գործ ունենալը: Բայց յեթե իմ վոտքերն այնքան արագավագ լինեն, վարքան ջանել սփկվել վոտքերը, ելի յես չեյի վերցնի փողերը և փախչի: Մի բան եմ միայն յես ցանկանում—գոր մահը վրա չհասնի ինձ, մինչեւ գոր ավարտեմ իմ աշխատանքը: Վորովհետեւ յես չեմ ուզում, գոր իմ ժողովրդի յերեխաները բաղիքն այն դպրոցների փակ դաները, գոր շինել են զզիելի սպիտակ շներն^{*}) իրենց յերեխաների համար:

Յերիտասարդության ուրախությանը վերջ չկար այդ որը: Մինչ յերեկո նըանք խաղեր են սարքում, յերգում, պարում:

* * *

Դժվար է նկարագրել, թե ինչպիսի, այսպես առած, անմատչելի բերեր առնելուց հետո միայն հաջողվեց Տանդ-Հոնդ մեծ գյուղի հրապարակում կանգնեցնել մի հարկանի ցածրիկ տուն: Դժվար է թվել այն դժվարությունները, վորոնց ստիպված եյին հաղթահարել, մինչև վոր այս տան լուսամուտների դատարկ շրջանակները փայլեցին սպակիներով և տանիքը՝ ներկով

... Միստեր^{**)} Լաուրիսը,—գյուղի վոստիկանական պահակատեղի (պոստ) վերատեսուչը,—իր բնակարանի հովանոցում սիղար եր ծխում, յերբ առաջին անգամ նըա մոտ յեկան գյուղացիների պատգամավորները: Յերկար ժամանակ կանգնած եյին շինացի պատգամավորները հովանոցի առաջ՝ անվճական կերպով մի վոտից մյուսին անցնելով, սակայն միստեր Լաուրիսը նույն իսկ չեր ել

^{*)} Խոսքը վերաբերում է ստարներին—յելքուղացիներին և ամերակացիներին:

^{**)} Պաղորմած տեր — պարոն (կանանց առում են միստերիս (տիկին), որիորդներին՝ միստ):

Նայում նրանց. Նա ծխում եր սիդարը՝ մարսելով հենց նոր վերջացրած նախաճաշը:

Վերջապես Զանդ-Մին դիմեց մի վճռական հանդինության, վոր մինչ այդ վոչ տեսնված եր, վոչ լսված: Նա ծունկ չոքեց հովանոցի տոջի բսած խոսերի մեջ և ասաց ցածր և մեղմ ձայնով.

— Ներիր մեզ, վորոշմած տեր: Մենք յեկել ենք ինդրելու քեզ... Յույց տուր մեզ քո վոսկյա սրտի բարությունը...

— Ինչպես ես համարձակվում, կեղաստ խող, — գոռաց նըա վրա միստեր Լաուրիսը: Բայց և այսպես նա տեղից չշարժվեց, թեև խոստ զայրացել եր: Նա չուղեց կուշտ նախաճաշից հետո իր պարտացրած մարմնին վորեւ անհանգստություն պատճառել:

— Ներիր մեզ, աղաչում ենք քեզ... կրկնեց Զանդ-Մին, մենք յեկել ենք ինդրելու քեզ... Թուլ տուր չինական զպրոց շինենք... Զինական գպրոց... այստեղ, զյուղում, Զու-Խան-Ֆանի տան կողքին:

— Վոչ՝ասաց կտրուկ կերպով միստեր Լաուրիսը:

Դրանից հետո շատ անգամ ելի պատգամավորությունը յեկավ հովանոցի մոտ և միշտ ել լսեց միստեր Լաուրիսի կտրուկ «Վոչ» պատասխանը:

Յեզ ահա մի որ ել Զանդ-Մին մենակ յեկավ միստեր Լաուրիսի հովանոցի մոտ: Դարձյալ ծունկ չոքեց և մի քանի խոսք ասաց մեղմ ու ցած ձայնով: Այս անգամ միստեր Լաուրիսը վոչ միայն հրամայեց նըան կանգնել, այլ և կանչեց իր մոտ հովանոց: Յեզ յերբ Զանդ-Մին քառասուն նոր ու փայլուն գրամ հանեց իր այն քսակից, վորի մեջ պահում եր զպրոցի շինության համար ժողոված փողը, և հարդանքով մեկնեց միստեր Լաուրիսին, վերջինս ասաց հանգիստ ձայնով.

— Միայն թող հյուսները չաղմկեն առավոտայան:

Դա առաջին բերդն եր վոր նվաճեց Զանդ-Մին, բայց նըա հետեւ կար նաև յերկրորդը, յերրորդը... Յեզ Զանդ-Մին սարսափով եր դիտում, թե ինչպես իր այնքան ինսամքով հավաքած կոպեկները հալչում են որեցոր: Իսկ գյուղացիները ավելի և ավելի եյին զըրկում իրենց մի բուռ բրնձից և մի կտոր հացից՝ նոր ու նոր կոպեկներ հասցնելով Զանդ-Մին:

Դպրոցի շենքը, թեև գանդաղ, բայց և այսպես բարձրանում եր:

Յեզ կանայք շրջակա գյուղերից, հենց վոր աղաստ ժամանակ եյին գանում, գալիս եյին յերեխաների ձեռքից բոնած զպրոցի մոտ և առում նըանց:

— Այ, սա դպրոց ել լինելու, դու պետք ել այստեղ սովորես: Գալիս եյին և տղամարդիկ, նայում եյին շենքին, շոշափում գերաններն ու տախտակները, վորպեսզի տեսնեն լավ տեսակի նյութ ել ընտրված շինության համար, թե վոչ:

— Մեր դպրոցն, ասում եյին նրանք. — պետք ել յերկար տարիներ ապրի:

* *

Տոնակատարությունից դեռ շատ առաջ բոլոր գյուղերումն ել սկսվեցին պատրաստությունները: Աղջիկները ժապավեճներով զարդարում եյին իրենց մազերը: Կանայք յեռանդով մաքրում եյին իրենց ամուսինների կապույտ շորերը, իսկ յերեխանները մտածում եյին միմիայն մոտեցող տոնի մասին:

Յեվ ահա տոնի որը վաղ առավոտից սկսած գյուղերից դեպի մեծ ճանապարհն տանող բոլոր ճանապարհներն ու շավիդները բռնված եյին ճանապարհորդներով: Գյուղացիք եյին իրենց ընտանիքներով: Առաջից գնում եր նայրը, նրան հետևում եյին յերեխանները, իսկ ամենից վերջը մայրը՝ փոքրիկին առած շալակը: Յերեխանները խընդում եյին: Երանց մեծ ուրախություն եր պատճառում այդ որվա տոնը և անամպ պարզ յերկինքը: Տղամարդիկ զրուցում եյին, իսկ կանայք առաջ եյին գնում լուս, քիչ կուցած իրենց շալակի բեռների՝ յերեխանների ծանրության տակ:

Առավոտյան ժամի ինն եր: Տանդ-Հոնդ գյուղի հրամարտկն արդեն բռնված եր բազմությամբ, վոր ուրախ տրամադրությամբ զըժվժում եր ինչպես մեզուի փեթակը: Իսկ նոր և վառ գույնով ներկած դպրոցական շենքը զարդարված պլակատներով, հովհարներով և ծաղկե շղթաներով, սպասում եր իր բացման հանդեսին:

Դպրոցի շենքը տանող սանդուղքի վրա յերեաց մի յերիտասարդ, խոշոր յեղջուրե շրջանակներով ակնոցը քթին:

— Ուսուցիչը, ուսուցիչը, — լսվեց ամբոխի մեջ:
— Ուսուցիչն ե, կանանի ուսուցիչներից...
— Լոռություն, ճառ և տսելու, ձայներդ կարեք...
Բոլորը լոեցին:

— Այս, այս չները, — խոցեց հանկարծ լոռությունը մի կատաղի ձայն: Դպրոցի շենքի անկյունից յերեաց միստեր կառւրեսը սպիտակ ձիու վրա և մտավ ամբոխի մեջ:

— Կեղտոնա խոզեր, — գոռում եր նա կատաղած, — ով թույլ տվեց ձեզ հավաքվելու այստեղ:

Յեվ ողում հնչեց մարակի ձայրը:

Ցրվեցեք, — գոռում եր նա բարկությունից ընդհատվող ձայնով:

— Ինչու ցրվենք, — առարկեց նրան ուսուցիչը ցածր, բայց հաստատուն ձայնով, — մենք այստեղ վոչ մի վատ բան չենք անելու:

Միստեր կառւրեսի դեմքը սպրթնեց զայրույթից, բայց նա զընպեց իրեն և ասաց բերանը ծուած ժպտալով:

— Յեթե յես չարդելեմ ձեզ հեռանալ, ապա ձեզ կը քշեն:

— Մենք չենք հեռանա, գոչեց մեկը ամբոխի միջից:

— Մենք այստեղ կը մնանք, — գոչեց միաձայն հուզված ամբոխը:

Միստեր կառւրեսը ինչ վոր ձայնեց, և դպրոցական շենքի անկյունից յերեացին ուետինե ճիպոտներով զինված վոստիկանները, իսկ նրանց հետևից՝ զինվորները:

Վոստիկանները հարձակվեցին ամբոխի վրա և սկսեցին իրենց ուետինե ճիպոտներով ճարվածել հավաքվածների զլիսին, մեջքին, դեմքին, վորտեղ համառում եր:

Ամբոխը կատաղեց:

— Տվեք դրանց, — գոռում եյին գյուղացիները:

Յեվ ամբոխը հերեւով վոստիկաններին, նրանց հետնակ միստեր կառւրեսին, հասցրեց մինչև դպրոցի նոր ներկած պատը: Վոստիկանները անհայտացան դպրոցի շենքի հետևում:

Միստեր կառւրեսը մեկ ել ձոճեց մորակը և ինչ վոր անհանկանալի խոսքեր ասաց բարձր ձայնով: Զինվորները բարձրացրին հրացանները և ուղղեցին ամբոխին:

Ամբոխը լոեց վայրկենապես, և այդ լոռության մեջ լսվեց հրացանների խլացուցիչ համազարկը:

Ամբոխն սկսեց փախչել գյուղի նեղ փողոցներով ցածիկ խըրձիթների հետեւ. իսկ նրանց հետեւից լսվում եր հրացանների ձայնը, կարծես ընկույզ եյին շարպում:

Հրապարակը դատարկվեց: Դպրոցի առջև մնաց միայն մի փոքրիկ աղջկա զիակ, իսկ նրանից քիչ հեռու՝ ծերունի Զանդ-Մին եր ընկած՝ կնճռալից գեմքը խրած արդեն գեղնող խոտերի մեջ:

* *

Այդ գիշեր միստեր Լառուրեսը քնեց համգիստ և խոր քնով։ Նա չեր զգում, վոր հարբեցողությունից հետո նման փառավոր քունը մահվան նշան է։

Մնաղմուկ կերպով մոտենում եր միստեր Լառուրեսի մահը գիշերային լոռության մեջ, սողում եր մեծ ճանապարհով, թեքվում գյուղի նեղ փողոցներով և մտնում միստեր Լառուրեսի բնակարանը։

Մահաբերների առջեկց գնում եր մի բարձրահասակ կին՝ մի ձեռքով կրծքին սղմած փոքրիկ աղջկա անկենդան մարմինը, իսկ մյուս ձեռքով բոնած ծխացող ձյութե կերոնը։ Կերոնի թույլ լույսը լուսավորում եր շուրջը—մոայլ և վճռական դեմքերը և խաղում բարձրացրած մահակների, ցցերի և նիզակների վրա։

Շուտով բոցավառվեցին միստեր Լառուրեսի բնակարանի տակ դարսած բրնձի ծղուաները։ Մահակներն ու քարերը թռան դեպի լուսամուտները և փշելով ապակիները ընկան սենյակները։

— Վեր կաց, միստեր Լառուրես, — գոռում եյին կանայք—վեր կաց, անիծյալ շուն։

Միստեր Լառուրեսը դուրս թռավ պատշգամբ կավճից ավելի սպիտակած, գիշերային շորերով, հաստ, վորպես յեզան փուչիկ։ Յուրաքանչյուր ձեռքում բոնած ուներ նա մի բրառնինդ (ատրճանակ), բայց նրա ձեռները դողում եյին և նա կրակեց ողի մեջ։


Սակայն արձակված քարերը հասան իրենց նպատակին։ Թուչելով կրակով բանված պատշգամբից՝ քարերը կպան միստեր Լառուրենսի գանգին։

— Սատկիր, սատկիր, — գոռում եյին կանայք, — սա պահանջում ե, վոր սատկես—ասում եյին նրանք բարձր բոնած փոքրիկ աղջկա դիակը։

Այն ժատանակ ամբոխի միջից առաջ յեկավ մի յերիտասարդ։ Նա բարձրահասակ եր և ուժեղ։ Հեշտությամբ թռչկոտելով պատրշգամբի ճաղերի վրայով, ճոճեց իր հին ժանդատած նիզակը և միստեր Լառուրեսի հաստ մարմինը մեխեց պատին։

Ամբոխը հետ դարձավ գյուղը։ Շուտով բոցավառվեցին նաև փոստիկանական վարչությունը և ցածրիկ մոխրագույն զորանոցները։ Քնից արթնած մարդիկ դուրս եյին վազում զորանոցներից և աշխատում կյանքներն աղատել։ Ամբողջ ճանապարհը ծածկված եր զինվորների և գյուղացիների դիակներով։ Ամբողջ գիշերը վայրի պարեր բռնել բոցը, և քամին քշում և տարածում եր նրան շրջակա դաշտերն ու արտերը։

Թարգմանություն ոռւսերէնից. Զանգ-Բու (չին գրող)





ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

Ա. Փառով

Ավելի յերջանիկ որ չկա,
Ավելի յերջանիկ, քան հիմա—
Յերբ ամեն մեկը մեզնից
Խինդ ու յերգն ստացած մասսայից՝
Կենդանի հրճվանքով ե լցված...
Յերբ սրտերը—կարմիր ալ դրոշ
Զարկեցին մոտորի շաշյունով,
Յերբ չկան անուններ անորոշ,
Չես կոչվում զու ցեղիդ ծագումով:
Յերբ հաճախ տարբերել չես կարող
Քո ձայնը, քո յեղբոր իսկ ձայնից,
Կամ հուզող բարձրագոչ պլակատից...
Զահեններ—վառ հեղեղ արևի,
Չուլված են պրոլետար տարբերին:
Գարնան ողը լցված մեր ձայնով,
Արկի մեղմանույշ հնչյունով՝
Հորինած արորի սիրուն յերգ,
Հակիմել ե զեղ սիրուն Մայիս մեկ:

Թուու. թարգմ. Ա. Պ.



ՀՆԱՐԱԳԵՏԸ „ՔԵՌԻՆ“

Գործարանային դպրոցի արհեստանոցներում աշխատանքը յեռում եր:

Աշակերտ-աշակերտուհի դազգահի առաջ՝ վորը սղոցում, վարը խարացում, վորը հղկում, փայլեցնում եր իր պատվերը: Դարբնոցում տիրում եր հարվածների աղմուկ. շոգեմուրճն ու ձեռքի մուրճը մրցում ելին իրար հետ:

Ամենից հետաքրքիրը ձուլարանն ե. աղաները ավազի մեջ կըրթնած, կաղապարում են իրենց պատվերները:

Արհեստանոցի մեջտեղը կանգնած ե հսկա «վագրանկան» սիրառ կրակ՝ յեռում, բոց հեղուկ ե պատրաստում: Վարպետը սրածայր ունելիքով ծակում ե հսկայի կուրծքը: Բոցավառ հեղուկը թափում ե «տիգրները». աղաները առնում, տանում են լցնում իրենց պատրաստի կաղապարները:

Սուլում ե կոչնակը. գործիքները հավաքում, լվացվում, մաքրվում են, ու ամենքը շտապում են դասարան:

Տեխնոլոգիայի դաս ե. այդ առարկան նրանք շատ են սիրում:

Մինչև ուսուցչի գալը թրկում, աղմկում են: Ներս ե մտնում ուսուցիչը. բարձրահասակ, խոհուն ու խելացի դեմքով մի յերիտասարդ:

Նա մի ընդհանուր հայացք ե ձգում. բոլորը լուռմ, աչքերը հառում են նրան:

— Անցյալ դասին մենք կանգ առանք սայլակի անիվների գյուտի և նրանից առաջացած հետևանքների վրա, — խոսեց նա հանդարտ, շեշտելով յուրաքանչյուր բառը:

Ինչպես ասացի, դա առաջին և ամենամեծ գյուտն եր, զորմեր նախահայրերը տվել են մեզ:

Այդ յերկու հասարակ անիվները իրենց ունակով կազմում են բոլոր մեքենաների, նույն իսկ ամենաբարդ մեքենաների հիմքը:

Իհարկե մեր գյուղական սայլակի այդ պարզ անիվները ձևափոխվել բարդացել են. մի տեղ նրանք գարձել են ատամնավոր, մի տեղ թեավոր, մի այլ տեղ կոնաձե. սկսած փոքրիկ ժամացույցից մինչև հսկա շոգեմեքենաները այդ անիվների վրա յեն հիմնված:

Մեխանիկան որ որի վրա առաջ է գնում, ամեն մի արհեստին ափառապետող, խոհուն մեքենագետ աշխատում է իրեն ուժերի չափ վորեւ նորություն մացնել. գտնել ավելի կատարելագործված, ավելի հղկված ու նպատակահարմար միջոց:

— Դուք ուսման հետ գուզընթացաբար սովորում եք և արհեստներ: Զեզանից շատերը յերկաթագործ են, խառաս, դարբին, ձուլող, ատաղձագործ և այլն: Ամեն մեկը իր արհեստի վերաբերմամբ պետք է մտածե: Անհրաժեշտ չե անպատճառ թռչող սավառնակներ հնարել: Մի նոր ավելի հարմար գործիք, լավ ձեի կտրիչ, յերկաթ յեռացնելու հեշտ միջոց, կաղապարելու, ձուլելու և գրահետ ավ գյուտեր:

Ան չորրորդ տարին ե մենք միասին աշխատում ենք, բայց ձեզնից և զու մեկը մի փոքրիկ գյուտ չարեց...

— Յես... կմկմաց Մնացականյանը ու մատը բարձրացրեց:

— Բա՛, ելի «քեռին» մեջ ընկապ, — խոսեց մի աշակերտ:

Բնիկերները «քեռին» ելին անվանել նրան նրա ինքնավատան ու ծանր բնագործության համար:

— Ի՞նչ կանո, Մնացականյան, — սիրալիք նայեց նրան ուսուցիչը:

— Յես հնարել եմ «ինքնաշարժ» մեքենա:

Աշակերտները փոթկացին:

Ուսուցիչը իր խիստ հայացքով լոեցրեց նրանց, ապա շատ մտերմաբար գարձափ հնարագետին.

— Անցեք գրատախատելի մոտ:

— Դուք... յես... սկսեց Մնացականյանը, — են որվանից, վոր բացարեցիք ինքնաշարժ մեքենայի մասին, գիշերցերեկ քուն չունեցի, թեհ զուք շեշտեցիք, վոր դա անհնարին ե, բայց չեցի կարողանում հանգստանալ: Մի որ, ինքս ել չդիտեմ ինչպես, մեքենան կանգնեց աշքիս տառաջ, ու յես գլխի ընկա:

Աշակերտները ծիծաղեցին:

— Այ, ծիծաղում եք, այս բոպեյիս կրացատրեմ և դուք կը առեսնեք, վոր հնարագոր ե: Տանը յես մանգանա անեմ, զիշերները աշխատում եմ, առաջին փորձը համարյա վերջացած ե:

— Պատմիր առեսնեք, — գարձափ նրան ուսուցիչը:

— Գուցե քեռին իր գյուտը ուզում է գաղանի պահել, ինչու յեք ստիպում, — հեղնանքով խոսեց մի աշակերտ:

— Դա ինչ գյուտ ե, վոր գաղանի պահեմ. մի հասարակ անիվ, վոր ինքն իրան շարժվում ե, ուրիշ փոչինչ: Այ, յերբ վոր ինձ հաջողվի արեի ճառագայթներից ոգտիքի, յերբ կարողանամ

մի այնպիսի միջոց հնարել, վոր ամառվա են տաք շոգը ամբարեմ ու պահեմ ձմեռվա պետքերի համար, յերբ մի մեքենա հնարեմ, վոր ջուրը սարերի վլուխ բարձրացնի ու այնակեղի գաշտերը վոռոգե. այ, դրանք իսկապես մեծ գյուտեր են: Թե չե ինքնաշարժը՝ թող հա պտույտ գա, իրենից մեծ ույժ չի կարող ներկայացնել:

— Համա զոռ ե տակիս գլխին մեր քեռին հա, խոսեց նույն տղան:

— Մի սարսաղ բան կլի ելի, — խոսեց մի ուրիշը:

Ուսուցիչը լուս եր, նրան շատ եր գուր գալի քեռու վասահ ու հավատացած տոննը:

— Իզուր եք եղանակ խոսում, տղաներ, թող ձեզանից ամեն մեկը որինակ վերցնի Մնացականյանից:


Ճիշտ ե, յես միանդամայն հավատացած եմ, վոր այդ գյուտը նրան չի հաջողվի, բայց յես քաջալերում եմ նրա վարանումներ. ով փորոնում ե, նա միայն կարող ե գտնել... Այդ զուք պետք ե լով իմանաք:

Զեզանից ամեն մեկը կարող ե մի վորե և գյուտ անել. միք կարծիք, վոր գրա համար հանձար ե հարկավոր: Տոկուն աշխատանք, լուրջ վերաբերումունք — դա յե գլխավորը:

Քեռու աչքերը փայլեցին ու բախությունից, վողերգված սկսեց պատմել ու նկարել գրատախատակի վրա:

— Յես մտածեցի ունենալ մի մեծ անիվ իրեն սոնակով ամրացրած պատվանդանի վրա, տասներկու հատ խողովակ և այդքան ել արձիճի զնդակներ: Վորոշ կարգով խողովակները՝ գտասավորված են անիվի վրա: Յուրաքանչյուր խողովակի մեջ զցում ենք մի-մի զնդակ ու ծայրերը փակում: Ան մեքենան պատրաստ ե (նկ. 1), միայն հարկագոր ե տակը քաշել մի հորիզոնական գիծ — AB և ձեզ համար պարզ կինի:

Ինչպես նկարից տեսնում եք, խողովակները այնպես են զարգորված, վոր գնդակները միշտ հակած են ընկնել խողովակի



Նկար 1.

ձախ կողմը և իրենց ծանրությամբ անիվը շարժում են դեպի աջ:
Անիվի աջ կողմը գնդակները հավաքվում են կենտրոնին մոտ,
իսկ ձախ կողմը կենտրոնից հեռու: Յեվ լծակի որենքի համաձայն՝
ձնշումը աեղի յեւ ունենում ձախից աջ:

Ուսուցիչը, վոր լուրջ լսում ու հետեւում եր նկարին, հարցրեց.

— Փորձեր կատարել եք. անիվը շարժված եւ:

— Մի քանի պտույտ եւ անում ու կանգնում:

Յես դա բացատրում եմ նրանով, վոր իմ շինած անիվը շատ եւ¹
խորթ ու բորթ, գնդակները չարխած չեն, խողովակների մեջը հարթ
ու հավասար չե...

Յեթե նուրբ ու կանոնավոր շինվի. — Նա անպատճառ կպտտվի:
Այժմ սկսել եմ կոկել ու հարթել: Յեթե ուզում եք, գնամ բերեմ:

— Թող բերի, թող բերի մի տեսնենք, — խոսեցին տղաները:

— Կարեք չկա. յերեկոյան յես ինքս կանցնեմ նրա մոտ և
մենք միասին կաշխատենք, — ասաց ուսուցիչը:

Յերեկո յե: Քեռու ուրախությանը չափ չկա. Նա միանգամայն
համոզված եւ իր գյուտի հաջողության մեջ, և անհամբեր սպա-
սում եւ ուսուցչին:

Անիվը զրեց սեղանին, բոլոր մասերը մաքուր սրբեց ու շատ-
պեց խոհանոց, թեյ պատրաստեց, վազեց փողոց, վերջին կողեկ-
ներով գնեց սպիտոկ հաց, պանիր և կարագ: Բաժակները մաքրեց
և սենյակը հավաքեց:

Ինչպես եր սիրտը բարախում: Սա առաջին անգամն եր, վոր
ուսուցիչը գալիս եր իր մոտ:

Փոքրիկ լուսավոր սենյակ եր քեռու բնակարանը վերին հարկում,
գոները շուտ-շուտ բացուխում եր անում, վոր ընդառաջ վազի ու-
սուցչին, բայց նա չկար ու չկար:

Իր յերեք վոտանի, փոքրիկ հեշտայեւը մի քանի անգամ դուրս
եր տարել, ածուխ ավելացրել, նորից ներս բերել. հարեանի տանը
խփել եր ժամի ութը, իննը, բայց ուսուցիչը չեր գալի: Հուսահատ
մոտեցավ նա սեղանին, նայեց իր մեքենային, ուզեց վերցնել գնել
պահարան, ձեռքերը չգնացին. ուշքը ու միտքը ուսուցիչն եր — ինչու
չեկավ, խոսեց ինքն իրան: Բաժակները ուզում եր հավաքել, հան-
կարծ լսվեց վոտնաձայն. դուռը բացվեց. նա յեր:

Տղան հուզմունքից կարմրեց զլուխը տաքացավ, սիրտը սկսեց
խփել արագորեն:

Ուսուցիչը սիրալիր նայեց, մոտեցավ ձեռքը սեղմեց: Ուշա-
ցա... մոռացել եյի, վոր ժողով ունենք: Ամբողջ ուսուցչությունը
խոսում է քո գյուտի մասին. ապա մի տեսնենք

Քեռին ավելի հուզվեց. նայեց ուսուց-
չին, ապա անկյունի սեղանին դրված փոքրիկ
մողելին (նկ. 1):

Ուսուցիչը մոտեցավ, զննողաբար նայեց,
մի քանի շարժումներ արագ. անիվը մի յեր-
կու պտույտ արագ ու կանգնեց:
Նորից շարժեց, այս անգամ ավելի արագ. ա-
նիվը նորից կանգ առագ:

Քեռին լեզու յեղակ:

Գիտեք, սիմետրիա չկա. գնդակները շատ
են փոքր, խողովակները՝ կարճ, դե յես եմ շի-
նել ետքանն ել հազիվ: Յեթե խողովակների
թիվը 24 լիներ և գնտակները ավելի մեծ, են
ժամանակ թափը ավելի ուժեղ կլիներ ու ա-
նիվը կանգ չեր առնիլ, ինչպես այժմ: Խոսում եր քեռին ու անհամ-
բեր սպասում եր, թե ինչ պիտի ասի ուսուցիչը:

— Ենորհավորումնեմ, Մնացականյան, հենց այն ինչ վոր այժմ
կա սեղանի վրա, դա յել մեծ բան ե:

Յես անչափ գոհ եմ, վոր քո մեջ զարթնել և մի այդպիսի շնոր-
հալի միտք, անչափ գոհ եմ:

Քեռին քաջալերված, իսկույն լցրեց բաժակները և առաջար-
եց ուսուցչին:


— Ուրախությամբ, թեյ չեմ խմել:

Կարագ ել վերցրեք, այ հաց, պանիր, անվստահ ու ամոթխած
առաջարկեց քեռին:

— Ասացի անչափ գոհ եմ, վոր գյուտաղ մի դատարկ մեխա-
նիզմի վրա չի հիմնված:

Այս գիրքը բերել եմ հատուկ քեզ համար. վերնագիրը, ինչպես
տեսնում ես, «Ինքնաշարժ մեքենա»: Այստեղ ամեն ինչ ասված ե.
զու կտեսնես քանի քանիմն են ապարդյուն այդ գյուտով զբաղվել,
և ինչ դատարկ հիմքեր են ունեցել նրանք:

Քո սկզբունքը շատ հավանական ե, տեսրիալես նույնիսկ թվում
ե, վոր պիտի հաջողվի, բայց տեխնիկապես անհարին ե. միան-
գամայն հավատացած յեղիր, վոր դա չի հաջողվել, վորքան ել նուրբ
ու կանոնավոր լինի կառուցված:



Նկար 2.

Ինքնաշարժ մեքենա հնարելը անհնարին է, դա արդեն զիտության մեջ ապացուցված է: Առանց վորեե արտաքին ուժի վոչ մի մեքենա չի կարող գործել. հարյուրափոր մարդիկ, նույնիսկ մեծ զիտականներ զբաղվել են այդ գյուտով, բայց ապարդյուն:

Իմ միակ խորհուրդը, թող դա մնա իրեւ լավ հիշատակ. զբանից վոչինչ չեղուրս գալ, իդուր կ'կորչի թե ժամանակդ, թե աշխատանքդ:

Այ, ուռ ասացիր արեի ճառագայթներից ոգտվելու և ջրհան մեքենայի մասին. թերեւս դրանք հնարավոր լինին յերեկից գտնելու իսկ առայժմ զբաղվիր ավելի փոքրիկ, գյուտերով:

Ուսուցչի խոսքերը մեխերի պես ծակում եյին Մնացականյանի ուղեղը: Բայց նա լուս եր, հայացքը գցել եր հատակին ու հազիվ եր զպում իրան...

Վոչ մի կերպ չեր կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր այդ գյուտը անհնարին է:

Գույնը թռել, ձեռքերը դողում եին, ուզում եր խոսել, բայց չեր վստահանում. ուսուցչիցը շատ եր բարձր նրա աչքում:

— Իսկ յես այնքան հավատացած եյի, միթե իրավ անհնարին է, հազիվ լսելի արտասանեց նա, առանց նայելու ուսուչին:

— Այո, անհնարին է:

— Յերբեք. ուժեղ շեշտով գոչեց Մնացականյանը և կարծես իրա մեջ մի նոր ույժ զգաց.

— Յես իմ փորձերը կ'շարունակեմ մինչեւ վերջը:

Ուսուցիչը մոտեցավ, ձեռքը գրեց նրա ուսին և սկսեց մեղմ:

— Փորձեր կանես, և միշտ քեզ կթվա այս կամ այն մասը պակաս ե, այդ կ'լրացնես, մի ուրիշ գուրս կըգա և այդպես անվերջ...

Յանություն, Մնացականյան. գիրքը կարդա և լավ մտածիր:

Քեսին ամբողջ գիշեր չեր կարողանում քնել, հազար ու մի հիվանդու մտապատկերներ յեկել, ջապաշարել եյին նրան. Նո հիշեց դաստիարակ, ընկերների քրքիջը: Ինչ մեծ հույս ուներ, ինչպես եր հրձվում իր գյուտով, իսկ այժմ... ուսուցիչը խորտակեց ամեն ինչ...

Նո մտքով թռավ հայրենի գյուղը, իրանց տունը. ծերունի հոր մոռա. Այժմ նա մեջքը կորացած հերկում է հողը. մայլը փոքր քրոշ հետ հաց են տանում արտը, իսկ ինքը...

Հնչեց մեծ արհեստանոցների գուղոկը-զողանջը. խրոխտ ու հուժկու կանչում եր աշխատանքի ժրաշան բանվորներին:

Քեսին սթափվից:

— Վա՞ս, գոչեց նա բարձրածայն ու վեր թռավ տեղից:

Առավոտ եր, գեղեցիկ առավոտ: Արեգակի ձառագայթները թափվել եյին ներս, շոյում եյին նրա գանգուր մազերը: Դուրս վազեց պատշգամբ, նայեց յերկնքին, սայեց լայն ընդարձակ հորիզոնին, նայեց կանանչ լեռներին, ճաճանչափայլ արեկին, լայն ու ազատ շունչ քաշեց: Ու ինչ-վոր մի նոր ույժ, թարմություն զգաց իր մեջ: Գրքերը սեղմեց կուան տակ և շտապեց ուսումնարան:

Դպրոցի բակում նստեց նա իր սիրած ծառի տակ ու սկսեց կարգալ ուսուցչի տված գրքույկը:

Դպրոցում մարդ չկար. նրան վոչ վոք չեր խանգարում: Բայց դա յերկար չտևեց: Դասարանային ընկերները շրջապատեցին նրան ու սկսեցին զանազան հարցեր տալ, բայց քեռին վոչ մի ուշադրություն չեր դարձնում նրանց, ամբողջապես կլանված կարգում եր:

Վերջացրեց. նայեց շուրջը, մենակ եր: Յերբեք նա իրանայնքան յերջանիկ չի զգացել, քան այժմ:

Ուսուցչի գրքույկը վոչ միայն նրան լրել—հուսահատեցրել եր, այլ համոզել եր, վոր հարկավոր ե սովորել, սովորել ու սովորել:

Քեսին ավելի յեռանդով, ավելի մեծ թափով նվիրվեց իր փայփայած, իր սիրած արհեստին ու գիտության:

Մի տարուց հետո քեռին փայլուն կերպով ավարտեց զպրոցն ու անմիջապես ընդունվեց աշխատելու յերկաթուղու մեծ արհեստանոցներում:

Նրա առաջ բացվեց գործելու լայն ասպարեզ:

Մ. Պետրոսյան





ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ԿԱՆՉ

Վորպես կարմիր ալ դըրոշ պիտ ծածանենք դեպի վեր
Մեր այսորվա կանչը հուր ու խոսքերը ալ կըակ,
Վորպես հեղեղ ջրերի, պիտի վարարենք անվեհեր,
Փողոցները այս անծիր, պողոտաներն ել անհագ:
Մայիսմեկյան կանչն ե այս՝ լեցուն հուր ու կրակով,
Վոր կանչում ե ամենին դեպի պայքար հաղթության,
Ուր չին-կուլին ու հնդիկ, փայլուն, ուրախ դեմքերով
Չեռք կմեկնեն, կլուեն Միությունն վաղորդյան:
Յելեք, յելեք, յեղբայրներ, ով ճնշված ե լուծի տակ,
Ով խմել ե դառնության լի բաժակը մինչ հատակ,
Դե դուրս յելեք տոնին այս— Մայիսմեկին անվհատ:
Վորպես կարմիր ալ դըրոշ, պիտի ծածանենք դեպի վեր
Մեր այսորվա կանչը հուր ու խոսքերը անվեհեր,
Այս Մայիսյան վառ սրին, հուժկու քայլով աներեր:

ՄԱՐՏԻՆ



ԱՂՈՒՆ ՊԱՀՈՂ ԱՐՈՒԹԸ

(Պատմվածք)

Ամառվա շոգ որ եր: Արևն ենպես եր այրում, վոնց վոր թե
մի թեժ կրակի կտոր վերցնես ու դնես մարդու վզակոթին. Ողն
ենպես եր կանգ առել, վոր ծառի վրա տերև չեր շարժվում: Ամեն
բան պապանձվել եր, բացի մի ճպուռից, վորը ծառի կատարին
թառած անվերջ ճռացնում եր, վոր մինչև իրիկուն իր «յերգը»
վերջացնի:

Գյուղում ինչ վոր շունչ կենդանի կար, գլուխը կոխել եր վորեն
ստվերի տակ, վոր պաշտպանվի արևի կրակի ասեղներից, վորոնք
անխնա ծակծկում եյին, երում-խորովում:

Մենակ Արութն եր, վոր ամբողջ գյուղում մեն-մենակ մնացել
եր արևի տակ.

Գյուղում հունձը նոր եր սկսվում: Արութենց հացը հատել եր
ու Արութի հայրը գնացել եր հարևան թուրքի գյուղը, նրանց հա-
մար հունձ արել ու հնձավարձ ցորենը բերել, վոր յոլա գնան մին-
չև իրենցը հասնի:

Այ, հենց եղ ցորենն եր, վոր մեծ նանը լվացել եր, վուել
գոմի կտերը ու Արութին մոտը նստեցրել, վոր հավերից ու աներես
ճնձուկներից պահի, վորոնք ենպես համառորեն վրա եյին տալիս
փոած աղունին, վոր ուտեն:

Արութը սկզբում ուրախ եր, վոր իրեն հանդը չտարան հնձորի
համար ջուր կրելու: Նա ավելի ուրախացափ, մանավանդ, յերը մեծ
նանը նրա փեշն ածեց մի մեծ բուռը կեռաս, վոր իրենց «դոստ»
(բարեկամ) թուրքի կնիկը— Սոնա բաջին ուղարկել եր հայրիկի հետ,
և ճիպոտը ձեռին աղունի գլխովը պտույտ եր գալիս, հավերին «քիշ»

անում, ծտերին քար շպրտում: Նա կեռասից ընտրեց յերկար պոչավոր զույգեր, հաղցրեց ականջներին ու, զանգակների պես կախած, սկսեց և՛ թոչկոտել և՛ փեշի կեռասն ուտել:

Ի՞նչպես ուրախ եր Արութը... այ, թե մի իրենց հարևանի տղա Վանիկը կդա, տես վժնց կբարկացնի նրան, ցույց տալով իր ականջներից կախած կարմիր կեռասները... մտածում եր Արութը: Վանիկը վժնց կիսնդրի նրան, վոր իրեն տա են «ձիավոր» կեռասներից, բայց նա չի տա. են որը Վանիկի հայրը բազարից նրա համար փնջավոր կանֆես եր բերել, Արութն ինչքան խնդրեց, Վանիկը մի հատ ել ա չտվեց. բան...

Արութն ենպես ինքն իրեն մտածելով չնկատեց, թե ինչպես շուտով վերջացավ փեշի կեռասը. ու թեև նա հաստատ վորոշել եր ականջների վրայի «ձիավոր» կեռասները չուտել, բայց շուտ-շուտ ձեռք եր տալիս նրանց, խաղացնում, յերբեմն ցած առնում, նայում ու ելի նստեցնում իրենց տեղը:

Մնիծած շոգը գոռում եր Արութին, բերանն ել կարծես ցամաքել եր, լեզուն կպել քիմքին ու կատիկին. ի՞նչ կլիներ, վոր «ձիավորներից» մեկն ուտեր... Ու մի քիչ անց՝ Արութի ականջներից կախված մնացին միմիայն կեռասներից մնացած պոչերը, վորոնք քանի գնում, ենքան ավելի եյին անհանգստացնում նրան, քսմավելով նրա, առանց են ել, բրանած ականջակոթերին ու թշերին: Շուտով նա բարկացած դեն շպրտեց տրորելուց սեացած կեռասի «ձիավոր» պոչերը ու կոփի սկսեց փեշի ու շրթունքների վրա հավաքվող ճանձերի դեմ:

Արեն յեկել եր կանգնել թամամ Արութի զլիսավերել, պելացել ու կրակ եր թափում նրա զլիսին: Արութին թվաց, թե ինքը թունը մեջ է, վոր ալավն ես և իրեն լափելու յե, ու մտքով թուավ հնըձվորների մոտ: Ա՛խ... վայ մի նրանց մոտ ըլեմ, միտք արավ նա. Տիմի ին քոլի միջի աղբը կողքին, են սառը ջրի ու կաղնի ծառի տակին նստած կրկեյի... ես ի՞նչ ա, բերել են ես արեի տակին երում-խորովում... տրանջաց Արութն ու սկսեց վսդմագալ.

— Մեծ նան..., ը՛... ը՛... մեծ նան...

Մեծ նանն, ով դիտե ինչ բանի յեր, չլսեց:

— Քիշ, հրես դիմիդ ել կկոտորեմ, հա, ը՛... ը՛... լացակումած ու խստ բարկացած հարձակվեց Արութը թուխսի ու նրա յետեից վազվող ճուտերի վրա, վորոնք մոտ քսան հատ եյին:

Թուխսը ճուտերը հավաքելով մի քիչ յետ քաշվեց, բայց մյուս կողմից ճուտերը վրա տվին:

— Թըռնո՞... ձեր աներես... ը՛... ը՛... պայման եք կապել իրար հետ... ը՛... ը՛...

Բայց հենց յերեսը յետ թեքեց, թե չե, տեսավ, թե վժնց թուխսը ճուտերը քամակիցն արած մոտեցել ե փոած աղունի մյուս ծերին ու ճանկերով շաղ ե տալիս ցորենն ու կտցահարելով կանչում ճուտերին:

— կա, կա, կա, կա...

— Քիշ, գոչեց Արութն ու ձեռի ճիպոտը շպրտեց դեպի թուխսը: «Կա, կա», վժնց չե, քեզ համար են փոել ես աղունը, վոր «Կա, կա» անելով վրա յետ վազնւմ... վոր կա, քեզ ի՞նչ...

Թուխսը ճուտերով նորից յետ քաշվեց, իսկ Արութը են շոգի միջին կոացած՝ սկսեց հավաքել թխսի ու ճիպոտի շաղ տված ցորենի հատիկները:

Ես ավելորդ աշխատանքն Արութին ել ավելի զայրացրեց, իսկ անիծած արեն ենպես եր կծում, վոր կարծես շիկացած յերկաթով դաղում եյին Արութի մեջքը:

Արութը մի ձեռքը մեջքին եր դրել արեից պաշտպանվելու համար, իսկ մյուս ձեռքով հատիկներն եր հավաքում տրանջալով:

— Ես, ես տղամարդու բան ա, վոր ինձ են անել տալիս... ը, ը...

Ես միջոցին եր, վոր մեծ նանը ճշաց Արութի վրա.

— Ա տղա, տենում չես, որ ուտում են... Քիշ, քիշ, թըռնո՞,

ձեր տերը թաղեմ...

Ճիշտ վոր աղունի մյուս ծայրին թուխսը, ճուտերը, մի քանի հավ ու ծաներ հավաքված ուտում եյին աղունը:

Մեծ նանը վրա հասավ, բոլորին խռկեց, Արութին ել ուղարկեց, վոր աղբը մոտ յերեսը լվանա, սառը ջուր խմի ու յետ գա, իսկ ինքն սկսեց ձեռով աղունը շուտ ու մուռ տալ, վոր հատիկները տակն ու վրա լինեն, լավ չորանան:

Արութը հանգամանքից ոգավելով՝ աղբը մոտ ավելի ուշացավ, քան պետք եր, ու յերը վերադաշտավ, մեծ նանը նրան գուրզուրեց, ասելով.

— Քիչ ա մնացել, Արութ ջան, շատ քիչ, հրես կչորանա, նանը ցավդ տանի, լավ պահի աղունը, ես ցորնիցը հաց թխելիս քեզ հա-

մար մի նախշուն գաթա պտեմ թիսիլ, հենց արա գաթի փայը չուտեն.

Մեծ նանը գնայ, իսկ Արութը մի քիչ թարմացած, քիշ արեց մուտեցող թխսին ու սկսեց յերեակայել, թե մեծ նանի թխած գաթեն ինչքան մեծ է լինելու: Նա ուրախացած սկսեց փռած աղունի վրա կլոր-կլոր քծեր քաշել ձեռի ճիպոտով, և ամեն քաշելիս, կոր գիծն ավելի յեր մեծացնում, համարելով, վոր առաջին կոր շրջանը, վոր գաթայի մեծությունն եր ցույց տալիս, վոքը ե:

Ես հաճելի զբաղմունքը դարձյալ խանգարեց թուխսն իր ճուտերով: «Կա, կա, կը՝ տ, կը՝ տ» անելով անիծածը մեկ ես կողմից եր մոտենում աղունին, մեկ են կողմից:

Արութը մեկ քիշ արավ, հինգ, տասը... բայց անոգուտ. թուխսը նրան մարդատեղ չեր դնում:

Արութի փոքրիկ ու զայրացած ուղեղում զանազան մտքեր խառնվում եյին. Նա հնար եր մտածում թուխսից ու ճուտերից ազատվելու: Մեկ մտածեց թուխսի յետելից ընկնի, ճուտերին վոտնատակ տա, կոտորի, իրեն ել սպանի, մեկ ել վախեցավ մեծ նաև նից: Մտածեց գոմի մեջն անի, դուռը վրեն փակի, բայց ինչքան քշեց, չկարողացավ թուխսը գեպի գոմի դուռը քշել:

Եսպես թխսի ու ճուտերի յետելից ընկած պտույտ-պտույտ եր անում, յերբ մին ել վորտեղից-վորտեղ ճամբի վրա բուսավ Վանիկը:

— Ետ ինչ բանի յես, Արութ, ճայն տվեց Վանիկը:

— Չոռ ու ցավի բանի յեմ. բարկացած պատասխանեց Արութը, վորի թշերը կարմրած ու քրտնած եյին շատ վագելուց: Տեսում չեմ, ինչ բանի յեմ... Ես անտեր թուխսը հոգիս հանեց, կարում չեմ ձեռիցն ազատվեմ, արի քոմագ արա (ոգնի), բալքի գոմի անենք:

Վանիկը մոտեցավ, բայց բան դուրս չեկավ. թուխսը շրջանի մեջ չեր մտնում: Մին ել Վանիկը թե՝

— Արութ...

— Հը...

— Արի մի բան անենք:

— Ի՞նչ...

— Արի թուխսն ու ճուտերը բոնենք, կապոտենք, վոր ել տեղ-ներիցը ժամ:

Արութը կանգ առավ, միտք արավ, միտք ու հավանություն տվեց Վանիկի խորհրդին: Բայց ինչով կապեցին... Հնարը գտան:

Արութն ու Վանիկը կորեցին իրենց գուլպաների ծուպը, կա-պեցին իրարից, ստացվեց մի յերկար թել:

— Սրանով ճուտերին կկապենք իրարից, թուխսն ել հրես ես քամարովս, ասեց Արութն ու գործի անցան յերկուսով:

Արութն ու Վանիկը յերկուսով ենքան վագեցին թխսի յետելից, վոր նա հոգնած, ուժասպառ մտավ չափարի տակը, վորտեղ նրան բռնեցին ու գլուխը թակելով դուրս բերին, վոտները ամուր կապե-ցին Արութի կաշվե փոքրիկ ու նեղ գոտիով ու վեր գցեցին գետնին: Ապա վրա թռան ճուտերին, մեկ մեկ բռնեցին ու մեկ-մեկու վո-րից կապելով՝ յերկար շարանի պես վեր գցեցին հենց թխսի առջեր:

Խեղճ մայրը (թուխսը) ել ի՞նչ ձենով ասես չեր ճշում, ծկրլ-թռում, վոր իր բալերին չտանջեն, բայց լսողն ով եր...

— ԻԵ հիմի գնացեք ու կերեք իմ փայ գաթի ցորենը, քրտինքը սրբելով ու շունչը կտրված ասեց Արութն ու սկսեց ծիծաղել, վո-րին միացավ Վանիկը:

ՎՌԱՆ ԵՅԻՆ ՀՐԻՌՈՒՄ...

— ԻԵ, յես գնամ, ասեց Վանիկը, գործը վերջացրած մարդու պես:

— Ուր ես գնում, հարցրեց Արութը:

— Հրես, նանը մի կապեկ (կոպեկ) ա տվել, վոր դուքանիցը մաստակ (ծամոն) առնեմ, ծամենք:

— Եսսա հա պրծանք թխսիցն ու ճուտերիցը, ասեց Արութը. արի մտնենք մեր գոմը, հավի բնատեղը ման զանք, բալքի ճու-գտնենք ու վագ տալով գնանք գուքանը մի քանի կանֆետ առնենք, համ յես կուտեմ, համ դու: Զեռաց ել յետ կգանք, ոչով չի իմանալ:

— Բա վոր Ճուն ձեռներիս բռնեն... ծոր տվեց Վանիկը:

— Շաշ իի՞ յեն բռնում. Ճուն ձեռիս ինչ ունի, վոր բռնեն, հրես, կդնեմ գլխիք ու փափախս վրեն կծածկեմ. դու արի, արի, հալա շատ ես ջահել, խելքդ բան չի կտրում:

Ու Վանիկն ու Արութը ծտերին վերջին անգամ քար շպրտ-լով, թաքուն, զողի-զող, գես-զեն խլզկոտալով, վոր մարդ չտեսնի, մտան գոմը և դուռը վրաները փակեցին:

Արեից փախած հավերը, վոր գոմի մեջ ծփար եյին արել թառի վրա, թրթռացնելով ու կշկչալով դուրս թռան աղբածակից, իսկ Ա-րութն ու Վանիկը գոմի մթան մեջ ես ու են անին կպչելով, պա-տեպատ գալով սկսեցին ախոռն ու բնատեղերը ինտրել:

— Հրես գտել եմ, Վանիկ ջան, մի ձվի տեղ յերկուսն եմ գտել,

ուրախացած բացականչեց Արութը. հլա մի տես, ի՞նչ ել մեծ են և...

Արութը գտած ձվերը զլիսին դրեց ու փափախը ծածկեց: Գը-
լուխն ուղիղ բռնած, վոր ձվերը շշարժվեն ու ցած չթափվեն, նա
ու վանիկը զզուշությամբ յետ դարձան դեպի զոմի դուռը, բայց
հենց վոր բաց արին, մի մեծ աղմուկ շշմեցրեց նրանց:

Ամեն կողմից կին ու յերեխեք ձայն եյին տալիս ու ճշում.

— Տարանկ, տարանկ...

Արութն ու վանիկը մին ել են տեսան, վոր մի ուրուր իրենց
ձեռով կապած ձուտերի շարանը կտցիցը կախ, յերկնքի յերեսով
թռչում ե, վորի վրա կանայք ու յերեխաները քար ու փայտ են
շպրտում: Բայց վորի քարը կամ փետք կհասներ, կդիպչեր...

Վանիկն Արութին թողեց ու ձորովը փախավ, իսկ Արութը շը-
փոթված չգիտեր վոր կողմը փախչի, յերբ դիմացից մի կին դար-
ձավ դեպի Արութի մեծ նանը, զոչելով.

— Ա՛ քիր, ա՛ քիր, հրետ գոմի դռանը, հրետ ձեր գոմի դռանը...

Արութը դեռ ուշքն իրեն չեր հավաքել, յերբ մին ել մեծ նա-
նի բռունցքն իջավ նրա զլիսին:

— Փուչ փչանաս դու, փուչ փչանաս, ետ ուր ես կորել, ես
ի՞նչ ես արել... ու Արութի ձեռիցը բռնած քաշ տվեց դեպի աղունը:

Մեծ նանը կատաղած՝ հավերին քիշ արավ, թխսի կապն ար-
ձակեց, ու սկսեց խսունել աղունը, վորի վրա Արութը «գաթաներ
եր նկարել», իսկ Արութը տեղը կանգնած լաց եր լինում, վորի քթի
ծայրից արցունքներն եյին կաթում, իսկ ականջների մոտից—կոտ-
րած ձվերի սպիտակ ու դեղին միջուկը:

Մեծ նանը շատ եր բարկացած. նա անիծում եր Արութին, ու
յերբ մոտեցավ, թե մի-յերկու ել «հասցնի» զլիսին, զարմացած ու
վախեցած կանգ առավ, տեսնելով Արութի զլիսից ծորող սպիտակ
ու դեղին թանձր հեղուկը:

— Վույ, քոռանամ յես, ճշաց խեղճ կինը, յերեխիս զլուխը
կոտրել եմ. այ չորանար ձեռս...

Մեծ նանը շտապ մոտեցավ, վերցրեց Արութի փափախը և
զարմացած, բերանը բաց մնաց կանգնած, տեսնելով կոտրած ձվերի
կծեպները: Նա չեր կարողանում հասկանալ, թե վորտեղից են բու-
սել Արութի զլիսին ձվերը...

— Ել անիլ չեմ, նանի ջան, ել անիլ չեմ, թակես վոչ, աղի-
ողորմ լաց եր լինում Արութը:


Իսկ մեծ նանը զլիսավերել կանգնած, ել չկարողացավ զսպել
իր ծիծածը, տեսնելով Արութի նախշուն զլուխը, վոր սև մազերի
վրայից ներկված եր սպիտակով ու դեղինով:

— Ես դայդի ել ոյին եք տեհել, ա խալխ, գարձավ ծիծաղելով
մեծ նանը հարեան կանանց ու յերեխաներին, վորոնք հավաքվել եյին
թամաշայի:

— Ա՛, փուչ կենդանի, ես ի՞նչ բան ա, հարցրեց մեծ նան,
ծիծաղը հազիվ զսպելով:

— Են վանիկը... հը՛... թնթնկոտալով սկսեց պատմել Արութը,
մեղքը զցելով խեղճ վանիկի վրա:

Մ. Դարբինյան



Պրոլետարական ոգևորյուն յեվ յեղայրական վողջույն Արե-
վելիի յեվ Արեվմուտի մեր յեղայրներին:



ՄԵՐ ՆԱՎԸ

(Նորաբողբոջ պիոներներին)

Խոռվահույզ, փոթորկալի
Ալիքներն են մոնչում,
Խելառ թափով նավին տալի
Ու կատաղած շառաչում...

Բայց մեր նավը՝ հսկա ուժեղ,
Մարտնչելով ալյաց դեմ,
Ափ ե գիմում՝ ուղիղ, անշեղ,
Որորվելով դես ու դեն:

Հույսն ու սերը մեր աշերին
Լույս, ուժ տալով խավարում,
Խիզախ նավը մութ գիշերին
Գոռ սահում ե ովկյանում:

Բաթում

Գ. Գրիգորյան



ՄԱՅԻՍ

Խոսք՝ Խ. ՄԱՍԻՆՅԱՆԻ


Յերածության՝ Վ. ՌԵՄՐԵՆԴԻ

Ժա - ղիկ նե - րիդ զառ մա - լիս, ին - լու չե - յիր շուտ գա - լիս,
մա - նով - նե - րիս մո - ռա - յել, ին - լու ե - յիր հե - ռա - յել:

Ծաղիկներիդ եղ հոտին,
Ալ վարդերիդ կարոտին,
Ինչու թողիր մեղ տրառում,
Խիստ ձմեռի սառ գրկում:

Գիժ մարտն ել հետեից,
Հեշ պակաս չեր ձմեռից,
Բուք ու բորան շատ արեց,
Մեղ տներում պինդ փակեց:

Թեկուզ ուշ ես մեզ յեկել,
Բայց բարով ես դու յեկել
Գեղ ներում ենք այս անգամ,
Վոր շատ վառ ես դու այդքան:



ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

(Պատմական ակնարկ)

Այսոր Խորհրդային Մեծ Միության ամեն մի անկյունում առատ կերպով տոնվում է Մայիսի մեկը:

Բայց այդպես չեր 1917 թվից առաջ նախկին Ռուսաստանի ընդարձակ պետության մեջ, այդպես չեղեռ այսոր ել շատ յերկըրներում:

Մայիսի մեկի անցած ճանապարհը շատ ե փշալից:

Շատ անգամ ե հաղթանակել նա, շատ անգամ ել պարտվել Շատ հաղթանակներ ել կունենա նա, մինչեւ ամբողջ մարդկությունը հասցնի վերջնական նպատակին—սոցիալիզմին:

Մայիսի մեկը մենակ մեզ չե պատկանում, նա սեփականություն ե նաև այն բոլոր յերկրների բանվորության, վորտեղ կանչում, շահագործում և վորտեղ կապիտալին ե իշխում, վորտեղ գեռ աղքությունները ճնշվում ու հյուծվում են բոնակալական բանաերում ու շունչը փշում մարտակի հարվածների տակ:

Մայիսի մեկը միջազգային պրոլետարիատի խոշորագույն տոնն ե, Մայիսի մեկը այդ նույն պրոլետարիատի ճակատային կոփման կապիտալիստական կարգերի և բուրժուազիայի դեմ, Մայիսի մեկը համայն աշխարհի աշխատավորության համերաշխության տոնն ե, Մայիսի մեկը յերկրագնդի ամբողջ բանվոր դասակարգի ուժերի ցուցադրման որն ե:

Մեր նպատակն ե ցույց տալ այստեղ այն ճանապարհը, վորով անցել ե բանվոր դասակարգը իր Մայիսի մեկին՝ վերջին 40 տարվա ընթացքում և կանգ տոնել այն դերի վրա, վոր Մայիսի մեկն ունեցել ե աշխատանքի աղատագրման մարտակովում:

Ամեն մի Մայիսի մեկը մի նոր դիրք ե յեղել բուրժուազիայի դեմ, ամեն մի Մայիսի մեկը այն «դիրքից դիրք» կոփման յեղել, վոր վարել ե աշխատավորությունը իրեն շահագործող դասակարգի դեմ:

Բայց Մայիսի մեկի, կամ պրոլետարիատի պայքարի մասին խոսելիս մենք անկարող ենք մոռացության յենթարկել այն շտաբը, վորտեղ միանում են բոլոր յերկրների բանվորները և վորտեղ

դարբնվում ե մարդկության ապագան—սոցիալիզմը: Այդ շտաբը բանվոր դասակարգի Միջազգային Ընկերությունն ե, կամ, յեթե ոտար լեզվով արտահայտելու լինենք—ինտերնացիոնալը:

Մայիսի մեկը առանց այդ ինտերնացիոնալի հասկանալ չենք կարող, վորովհետև անկարելի յե միջազգային մասշտաբով պայքար մղել զատ-զատ, անջատ կերպով, առանց կանխապես իրար հետ խորհրդակցելու, առանց միմյանց աջակցելու:

Մեր նյութը դասավորում ենք այսպես:

Նախ կտանք Առաջին ինտերնացիոնալի համառոտ պատմությունը, հետո Յերկրորդի, ապա Յերրորդի և ապա կանցնենք Մայիսի մեկի տախտակին:

Առաջին ինտերնացիոնալը

(1864—1873)

Կապիտալը իր հունձն եր անում ամբողջ Յեկարպայում և Ամերիկայում:

Բանվոր դասակարգը արյունաքամ եր լինում կապիտալի լծի տակ:

Բուրժուազիան իր «բանվորին քամիր» նշանաբանով միահեծան տեր եր դասնում վոչ միայն «իր հայրենիքում», այլ և ոտար, զարդության յերկրներում:

Բանվորությունը զգում եր, վոր ինքը ընկել ե կապիտալի ձիրանները և իր ոճիքը ազատելու չե առանց բողոքի, առանց պայքարի:

Բանվորի ու բուրժուազիայի շահերը հակադրվել ելին իրար բոլոր յերկրներում, ստեղծվել եր շահագործվողների, շահագործող տերերի ու սարուկների բանակներ:

Շահերի այս հակադրությանը պետք ե բնականորեն հետեւ գոչ միայն տրտունջ, բողոք, այլ և պայքար—դասակարգային կոփ:

Ամեն մի յերկրի բանվորությունն առանձին-առանձին զդում եր, վոր մենակ ինքը չե, վոր հյուծվում ե իր տիրոջ ձեռքին, այլ վոր այդպես են բոլոր յերկրների աշխատավորները: Զգում եր նաև, վոր այս այսպես չի անցնելու, վոր վաղ թե ուշ բանվորությունը պետք ե սափազի ուժեղ կոփվ հայտարարել իրեն շահագործողներին:

Սրա հետ նա գիտակցում եր, վոր իր հաղթանակը կարող և ապահովել միմիայն այն գեպքում, յեթե ինքը միանա ուրիշ յերկրների բանվորության հետ, կազմի նրա հետ մի միություն:

Յեվ ահա 1864 թ. Լոնդոնում հավաքվեցին յեվրոպական խոշոր պետությունների պրոլետարիատի ներկայացուցիչները և առաջին անգամ հիմք դրեցին այն մեծ միությանը, վոր հետո կոչվեց բանվոր դասակարգի Միջազգային Ընկերություն, կամ այլ խոսքով՝ Ինտերնացիոնալ:

Սա Առաջին Ինտերնացիոնալն էր:

Այսուեղ միջազգային պրոլետարիատը պետք է և սովորելու, և մարզիկ ապագա մեծ պայքարի համար: Բայց Առաջին Ինտերնացիոնալը հաղիկ 9 տարի ապրեց: Առաջին Ինտերնացիոնալի անկման պատճառները շատ ելին: Խոշորագույնը պետք է համարել ինչպես Պարիզյան Կոմմունայի անկումը (1871), այնպես ել այն տարածայնությունները, վոր բուն դասն Ի-ին Ինտերնացիոնալի մեջ, շնորհիկ տարբեր հոսանքների, շնորհիկ տարբեր հասկացողությունների:

Ի-ին Ինտերնացիոնալը 9 տարի ապրելուց հետո լուծվեց 1873 թ. ի ցնծություն բուրժուազիայի և Ինտերնացիոնալի թշնամիների:

Առաջ Ինտերնացիոնալի

(1873 – 1899)

Սակայն յերկար չտեղ բուրժուազիայի ուրախությունը:

Ուղիղ և Ինտերնացիոնալը ընկալվ, բայց տարբեր յերկրներում սկիզբ առան բանվորական միություններն ու կուսակցությունները, վորոնք իրենց յերկրներում տնտեսական և քաղաքական պայքար ելին մղում «հարազատ» բուրժուազիայի դեմ:

Ինտերնացիոնալը չկար, բայց բանվորական կոմիսար (ձիւ և զատկատ, տարբեր յերկրներում առանձին-առանձին) հետզհետե սաստկանում էր:

Այս դրությունը տեղ մինչև 1880 թ. (ուրեմն 7 տարի):

Ամենքը զգում ելին Ինտերնացիոնալի վերականգման անհրաժեշտությունը:

Մարքսի «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» լոգունը այդքան յերկար լոել չեր կարող:

Յեվ ահա 1880 թվին բելգիական բանվորական կուսակցությունը հասուկ կոչով գիմեց բոլոր յերկրների բանվորներին և հիշեցրեց, թե ինչպես այդ 7 տարվա ընթացքում բանվորական շար-

ժումը մեծանում էր ու ծավալվում «Խաղաղ ովկիանոսից մինչև Վոլգայի ափերը, բրիտանական կղզիներից մինչև Բալկանները»:

Բայց հարկավոր եր ամբողջ 9 տարի հա սպասել, վոր բելգիական բանվորության իղձը իրականացր (1889 թ.):

Յերերորդ Ինտերնացիոնալը

(1889)

Ամբողջ 16 տարի տարբեր յերկրների բանվորությունը առանց ինտերնացիոնալի կոմիսար մղեց իրենց շահագործողների դեմ:

1889 թվին Պարիզում նշանակված եր ֆրանսիական սոցիոլուստների համագումարը: Համագումարը վորոշեց հրավիրել յեվուսական բոլոր յերկրների բանվորների ներկայացուցիչներին և այդպիսով վերականգնել այն կազը, վոր խզվել եր 1873 թվից:

Համագումարին մասնակցեցին Անգլիայի, Գերմանիայի, Բելգիայի, Ավստրո-Հունգարիայի, Սկանդինավիայի, Իտալիայի, Հոլլանդիայի, Ռումինիայի և Շվեյցարիայի ներկայացուցիչները: Ներկա ելին առաջին անգամ նաև Ռուսաստանի և Անդամանի ներկայացուցիչները: Առաջին Ինտերնացիոնալում ներկայացած ներկայացուցիչները չուներ, քանի վոր բանվորական շարժումը դեռ նոր եր սկսվում Ռուսաստանում:

Այսպիսով հիմք դրվեց Յերկրորդ Ինտերնացիոնալին (1889 թ.):

Յերկրորդ Ինտերնացիոնալի հենց առաջին համագումարին վարությունը տարին մի անգամ, վորոշյալ ամսին և որը, բոլոր յերկրների և բոլոր քաղաքների բանվորները գործադուլ անեն, ցույցեր կազմակերպեն ու այդպիսով ցուցադրեն բանվորության միջազգային ույժը և համերաշխությունը: Այդ որը, ինչպես մենք կտեսնենք համապատասխան տեղում («Մայիսի մեկի տարիակ» զինում) Մայիսի մեկն եր, վոր դեռ 1888 թվին ընդունել ելին ամերիկյան բանվորները:

Վորպեսզի մենք ավարած լինենք մեր խոսքը Յերկրորդ Ինտերնացիոնալի մասին՝ կավելացնենք մի քանի խոսք ևս: Յերկրորդ Ինտերնացիոնալի հետզհետե գնալով նետքեց բուրժուազիայի զիրեր և 1914 թվից (յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը) ամբողջ պատերազմի ընթացքում ձայն չհանեց վոչ կամփառվիզմի և վոչ եւ իմպերիալիստական պատերազմի դեմ: Իսկ յերբ պատերազմը թու-

լացավ, Յերկրորդ ինտերնացիոնալն ել զլուխ բարձրացը և մինչև
այսոր շարունակում է իր կոփվը կոմմունիստական ինտերնացիո-
նալի դեմ:

ՅԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

(1919)

Յերրորդ ինտերնացիոնալը ծնվեց 1919 թվին և մինչև այսոր
ել գործում է կոմինտերն անունով: Կոմինտերնը իր մեջ համա-
խմբում է բոլոր յերկրների կոմմունիստական կուսակցություննե-
րին և ուժեղ պայքար է մղում հին աշխարհի հականեղափոխության
դեմ—կոմմունիստական կարգեր հաստատելու համար: Կոմինտերնի
աշխատանքի հետ, նրա հեղափոխական թափին ծանոթ ենք ամենքս,
ամեն որ ականատես ենք լինում նրա դեպի կոմմունիզմը արած
նորանոր քայլերի հետ:

Ստորև բերված տախտակը Մայիսի 1-ի որացույցն է, վորտեղ
կդանեք այն նվաճումները, վոր արել ե բանվոր դասակարգը իր մեծ
տռնին, իր պայքարի ընթացքում:

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻ ՏԱԽՏԱԿԸ

1886.—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Զիկագո քաղաքում
տեղի ունեցավ ընդհանուր գործադուլ:

Պրոլետարական կես միլիոնանոց բանակը իր ույժերը ցուցադրեց
Զիկագոյի փողոցներում:

Մայիսյան ցույցը անաբեկեց բուրժուազիային:

Ի պատահան մայիսյան ցույց-գործադուլի, բուրժուազիան 8
մարդ գիմատեց:

Առաջին Զիկագոյի բանվորությունն եր, վորի մեջ Մայիսը տնելու միտք
հղողակալ:

1888.—Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիան իր դեկտեմբերյան համա-
գումարին՝ Սան-Լուիսում, վորոշեց բանվորական ցույց կազմակերպել
Մայիսի 1-ին:

Այսպիսով ամերիկյան բանվորաւրյունն եր առաջինը, վոր վորուեց, ինչ
զնով ել լինի, գործադուլ անել յեվ բանվորական ույժերը ցուցադրել Մայիսի
մեջին:

1889.—Միջազգային Սոցիալիստական Յերկրորդ ինտերնացիոնալի առաջին
համագումարը Պարիսում:

Համագումարն ընդունեց Ամերիկայի բանվորության վորոշումը
(Սան-Լուիսում, 1888 թ., ինչպես քիչ առաջ տեսանք) և Մայիսի 1-ը
հայտարեց միջազգային բանվորության տռն: Այդ որը զանազան
յերկրների բանվորությունը պետք է 8-ժամյա բանվորական որք սահ-

մանելու պահանջը ներկայացներ ի նշան պրոլետարիատի միջազգային
համերաշխության՝ «բոլոր յերրկների և քաղաքների բանվորություններ»
գործադուլ և ցույց կազմակերպել:

Այս բվականից Մայիսի մեկը յեվ 8-ժամյա բանվորական որի պահանջը
դառնում է միջազգային բանվորության սեփականություն: Մայիսի մեկն ու
8-ժամյա բանվորական որև սահնում են միջազգային նշանակություն:

1890.—Առաջին անգամ թէ Յերկրոպայում և թէ Ամերիկայում տռնվեց Մա-
յիսի 1-ը: Ռուսաստանում առաջին փորձն արեց Վարշավայի (այժմ
Լեհաստանի մայրաքաղաք) բանվորությունը: Վարշավայի ցույցին մաս-
նակցեցին 10,000-ի շափ բանվորություն:

Մայիսի 1-ի մասին վորուումը առաջին անգամ իրականացավ միջազգային
մասշտաբով: Առաջին անգամ բոլոր յերկերի բանվորությունը վարույալ որը
փողոց դուրս յեկալ յեվ իր ույժերը ցուցադրեց, իր պահանջները ներկայացրեց
բուրժուազիային:

1891.—Ցույցեր բոլոր յերկրներում: Գործադուլներ նաև Ռուսաստանում
(Պետերբուրգ—200 բանվոր, Վարշավա 20,000): Լույս են տեսնում բրույուրները ու թուուցիկները:

Բոլոր յերկրներում այդ որը պլակատների վրա «8-ժամյա աշխա-
տանքի որվա» կողքին կարդում ենք նաև «միջազգային իազաղու-
թյուն» բառերը:

Այդ տարին միջազգային բանվորությանը բացի իր 8-ժամյա բանվորական
որվանից—կոչեր անում բանվորության ավելի խացնել իր սարքերը միջազգային
խաղաղությունը ապահովելու համար: Այսպիսով բանվորական սարմումը տրն-
եսական խնդիրների հետ առաջարկում է նայել բարեկալուն խնդիրներ:

1892.—Որը կիրակի յեր: Գործադուլները և հապարակային ցույցերը տեղի
չունեցան, բայց «մայովկաներ» (գաղտնի հավաքություններ, զասախո-
սություններ, բացողյա միտինգներ և այլն) կատարվեցին շատ տեղե-
րում՝ Վարշավա, Պետերբուրգ, Մոսկվա, Տուլա, Կիևնա, և այլն:

Մայիսի 3, 4 և 5-ին խոշոր գործադուլներ լուծում (այժմ Լե-
հաստան):

Միջազգային պրայեսարիատը ի գեմս կոձի բանվորության պահանջնեց վոչ
միայն 8-ժամյա բանվորական որվանից:

1893.—Միջազգային Սոցիալիստական Համագումարը Ցյուրիխում: Գործա-
դուլի թափը թույլ և ամեն տեղ:

Պլակատները հարստանում են նոր լոգունգներով: «Բացի 8-ժամյա
բանվորական որվանից, արտահայտում ենք կուռ կամքը և հույսը
ունենք, վոր մոտ և սոցիալական հեղաշրջումն ու միջազգային իազ-
գությունը:»

Այսպիսով բանվորությունը սրբազնում է ապագա սոցիալիստական կոր-
գերի վողին:

1894.—Վուտիկանության ձեռք առած միջոցներով (ձերբակալություններ և
այլն) Ռուսաստանում գործադուլը թույլ և անցնում: Տեղ-տեղ բավա-
կանանում են միայն պրոֆմիությունների գաղտնի ժողովներով:

Ժընեվում (Շվեյցարիա) և Մյունիսենում (Գերմանիա) աեղի յին
ունենում խոշոր ցույցեր:

Որվան նշանաբանը նույնին եր ամեն տեղ, ինչ վար նախարաց տարիներում:
 1895.—Մայիսին ցույցերը տեղի յեն ունենում նաև Ռուսաստանի մի շաբթ
քաղաքներում: Ճաների փողին արգեն զուտ մարդսիստական-հեղափո-
խական ե: Աչքի յի ընկնում գ. ի. Աւլիանով-Լինինի շուրջը համա-
խմբած մարդսիստական խմբակը:

Եսրումը ուժիղանում է Ռուսաստանում յեվ տարվում մարքսիստական
վոլով: Տեսևական յեվ նախական կավի հաջողության նախար փառավում է
ուժեղ աշխատանքներ տանել նայել Ռուսաստանի այլ հաղաների բանվորության
մեջ՝ միջոզգային պրոլետարիատի հաղբանակի ավելի արագացնելու համար:
 1896.—Գործադուլներ ու ցույցեր ամեն տեղ: Աչքի յի ընկնում Բելգիայի
և մասամբ Ֆրանսիայի բանվորությունը:

Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում (Մոսկվա, Պետերբուրգ
և այլն) գործադուլներ չեն հաջողվում կազմակերպել շնորհիվ վոստի-
կանության ձեռք առած խիստ միջոցներին (թագավորություն եր նշա-
կական), բայց Սարսատի, Նիժնի-Նովգորոդի, Մինսկի և այլ քա-
ղաքների բանվորությունը ակտիվ մասնակցում են մայիսյան տոնին:
 Լենինի մայիսյան առաջին թուուցիկը մեծ ազգեցություն և թող-
նում բանվորական շարքերի վրա:

«Բանվար դասակարգի ազատագրության Միուրյան» բուուցիկի մեջ էնթինը
մատևանեում է այն հաղբանակեների վրա, վար աւելցավ բանվորությունը վեցին
տարիներում, յեվ կոչ է ամում՝ «քանիվություր յեւկրենի, միացե՛ք»:

1897.—Գործադուլներ ամեն տեղ (արտասահման): Պետերբուրգում, Կիևում
և այլ քաղաքներում լույս են տեսնում թուուցիկներ, բրոշյուրներ, կազ-
մակերպվում «մայովկաներ»:

Նոր լոգունիներ՝ «խոսի» յեվ մամուլի ազատություն են պահանջում:

1898.—Մայիսը տոնվում է ամեն տեղ:
 Ռուսաստանում շարժումը զեկագարում է արգեն Ռուսաստանի
Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը (կազմակերպ-
ություն կուսակցություն կազմակերպում «մայովկա»-ներ, լույս տեսնում թուուցավ առաջին հա-
վագումարը):

Մի շաբթ խոշոր կենտրոններում տեղի յեն ունենում գաղանի ժո-
ղովներ, կազմակերպվում «մայովկա»-ներ, լույս տեսնում թուուցիկներ
և այլն:

Մեզ մոտ Թիֆլիսում տեղի յեն ունենում խոշոր միտինդ քաղաքից
զուրս (նախընթաց տարբների նման):

Ռուսաստանի բուուցիկներում տեսևական խոնդիրներից զատ, պարզ ու վո-
րություն էն նայել նախական պահանջներ՝ զածառությունի, դաշտանիքի,
ուս դրվում էն նայել նախական պահանջներ՝ զածառությունի, ազգերի հավասարություն յեվ
խոսի, միուրյունների, ժողովների ազատությունի, ազգերի հավասարություն յեվ
առաջին անգամ՝ «ընդհանուր, նախատ, ուղբուկի» լինություններով պարլա-
մենտի գումարում:

1899.—Գործադուլներ ու ցույցեր ավելի լոյն չափերով և ավելի շատ տե-
ղերում, չսայած վոստիկանության ձեռք առած միջոցների:

Ռուսաստանի պրոլետարիատը ակտիվ կերպով ցուցադրում է իր կամքն ու
ույժը:

1900.—Միջազգային Սոցիալիստական Համագումարը Պարիզում:

Ամեն տեղ ավելի ուժեղ գործադուլներ և ցույցեր:

Կարմիր դրոշակներն ու պլականները ծածանվում են նաև Թիֆ-
լիսի փողոցներում:

Վոստիկանությունը ուժեղացնում է իր խստությունները գործա-
դուլապունների դեմ: Միայն Պետերբուրգում ձերբակալվում են մոտ
600 մարդ:

Այս տարի Պետերբուրգի բանվորությունը իր լոգունիներին ամելացրեց՝
«Կորչի միավետուրյունը, կեցցե՛ ազատությունը» բառերը:

1901.—Գործադուլներ Ռուսաստանի բոլոր քաղաքներում: Կառավարությունը
չբավականանալով վոստիկանության «յեւանդով», գործի յեւ կանչում
նաև մինչև ատամները զինված կողակներին ու զորքին: Հրամայված
եր կրակել ցուցարարների վրա:

Աչքի ընկնող գործադուլներ կոձում, Վարշավայում, Թիֆլիսում,
Պետերբուրգում և այլն: Զերբակալվում և աքսորվում են շատերը:

Այս տարվա ցույցերը ապացուցեցին, վար բանվորությունը ավելի յի մարզ-
վել յեվ ավելի ակտիվ դարձել: Մաս նես բանվորությունը հասկցավ, վար կա-
ռավարությունը կոչ միջոցի առաջ կանգ չեւ առնում յեվ նույնիսկ զեմի և
զործ զնում: Բանվորությանը մնում եր այդ ուղղությամբ ել աշխատել—զինվել:

1902.—Ռուս. Սոց.-Դեմ. Բանվ. Կուսակցության համագումարը Բելոստոկում:
«Կորչի միավետությունը» լոգունզը դառնում է բոլոր քաղաքների
բանվորության լոգունզներից մեկը:

Գործադուլները լայն չափերի յեւ հասնում մի շաբթ քաղաքներում:
Տեղի յեն ունենում ընդհարումներ բանվորների և վոստիկանության
մեջ:

Ռուսաստանի բանվորական տարմություն այնպիսի է մեծանում, վար նույնիսկ
րուցիկներ են ցրվում Սիբիրի յեվ Ռւրաֆի խոլ անկյուններում:

1903.—Տպվում ե 1 միլիոնից ավելի հատ թուուցիկ (Ռուսաստան):

Վոստիկանությունը սպանում է բանվորներին հրեական ջարդեր
կազմակերպել յեթե Մայիսի 1-ին ցույցեր տեղի ունենան, այս պատ-
ճառով ամեն տեղ չի առնվում Մայիսի 1-ը:

Բագվում, Թիֆլիսում, Բաթումում և Քութայիսում խոշոր ու կաղ-
մակերպված ցույցեր:

Որվան նշանաբանը՝ «Կորչի միավետությունը, կեցցե՛ ժողովրդական իշ-
խանությունը, կեցցե՛ բանվորական պատգամավորները ապագա Ռուսաստանի
պարլամենտում»:

1904.—Մայիսի 1-ի 15-դ տարվա հոբելյանը:

Ամստերդամի համագումարը վորոշում է ավելի ուժեղ կերպով
պահանջել 8-ժամյա բանվորական որը:

Ծնորհիվ սուս-յապոնական պատերազմի և կառավարության հայ-

տարարած խիստ միջոցների, չի հաջողվում ամեն տեղ կազմակերպել գործադուներ և ցույցեր:

Այս տարվա ցույցերը նշանավոր ելին եռամսվ, վոր զինված բանվորական խմբերը ուղեկցում ելին ցույցերին: Զենք՝ զենքի դեմ:

1905. — Մայիսյան տոնն անցնում է հեղափոխական մարտի նշանաբանով:

Գործադու Ռուսաստանի 126 քաղաքներում:

Տեղի յեն ունենում զինված ընդհարությունը (վոչ ամեն տեղ) վոստիկանության հետ:

Այս տարի աշբի ընկան մենաւիկեների յեվ բոլեւիկեների մեջ յեղած տարածական ուրբաթները, այն ժամանակ, յերբ բոլեւիկեները կոչ ելին անում բանվորների՝ ակտիվ մասնակցել ցույցերին յեվ գործադուկին, մենաւիկեները գրու ելին՝ «Ռուս աշխատավորությունը գործադուկի վուս չունի»:

1906. — Արդեն պարտված եր 1905 թ. հեղափոխությունը: Ուժեղանում է ռեակցիան, բայց չնայած այս բանին, գործադուլի ալիքը լայն չափով է անցնում Ռուսաստանում և Մայիսի 1-ի տոնին մասնակցում են նույնիսկ գյուղացիները: Միայն Պետերբուրգում գործադուլ արին մոտ 500 ձեռնարկությունների 100.000 բանվոր:

Այսպիսով բանվորությունն ապացուցեց, վոր 1905 թ. նեղափոխությունը պարտվելով վերջ չսվեց բանվորական շարժումին:

1907. — Ստոլիպինյան (Ստոլիպինը ներքին գործերի նախարար եր և զազան գեպի հեղափոխականները. Ստոլիպինը սպանվեց հեղափոխականի ռումբով) ռեակցիան ազգում է գործադուլի թափի վրա, բայց չնայած սրան, Պետերբուրգում և Մոսկվայում համարյա ընդհանուր գործադուլ է տեղի ունենում:

Պարիգում գործադուլավորները զինված ընդհարում են ունենում գոստիկանության դեմ:

Միջազգային բուրժուազիան համեզգում է, վոր մի տեղ ամսելով՝ նեղափոխական շարժումը մի այլ տեղ է յերեվան գալիս նա ավելի մեծ չափերով:

1908, 1909, 1910, 1911. — Ռեակցիան իշխում է, բայց տեղ-տեղ հաջողվում է գործադուլ հայտարարել:

Գոստիկանությունը ամենախիստ միջոցներ է ձեռք առնում գործադուլի դեմ:

Խոշոր բուրժուազիան խնդրում է ցարին ազատել իրեն Մայիսի 1-ի վտանգից:

Չերքակալում և (1910 թ.) 12.000 մարդ: Ռեակցիան այնքան է ուժեղանում, վոր Նիկոլայ II-ը և Մայիսի 1-ին զբոսանքի յե ցուրս գալիս Պետերբուրգի փողոցներում: Բանվորությունը չի ընկճվում. նա թուցիկներ է ցրում և միհնույն ժամանակ փերաստուգում իր ույժերը:

Բանվորությունը նամոզգում է, վոր նայրական բուրժուազիան չգիտե խրայի նախառակրեդիտի: Մրա հետ նա նամոզը ում է, վոր աշխատավորի զինադա-

դար թեվավարում և բուրժուազիային յեվ ավելի մեծ զաներ խլում բանվորական շարժերից:

1912. — Լույս է տեսնում «Պրավդա»-ի ազիտացիոն համարը:

Տեղի յե ունենում է նայացի գեղքերը:

Զայրացած բանվորությունը գործադուներով է պատասխանում այդ գնդակահարության:

Պակատներ՝ «Կորչեն Լենայի բանվորության դահիճները»:

Բանվորությունը սրափիլում է յեվ իր գործադուների նոր բափով ապացում, վոր «ամեն ինչը չի վերջացել, նեղափոխությունը չի մեռել»: Մրա հետ միասին մայիսան պլակատները հարսանում են նոր լոգունով՝ «Ազատություն յեվ իրավունքներ ուս բանվորին»:

1913. — Խոշոր գործադուներ:

Դետերբուրգում գործադուլ են հայտարարում 250.000 բանվոր, միգայում 40.000, Մոսկվայում 40.000, Անդրկովկասում՝ 86.000:

Պրոլետարիատն ապացուցեց իր շարժերի ուժի լիները յեվ առաջարեց նոր նորցեր ապագա անելիքի վերաբերյալ:

1914. — գործադուլավորների թիվը հասնում է 500.000-ի. տեղի յեն ունենում ուժեղ ձերբակալություններ:

Մի քանի ամիս հետո սկսվում է համաշխարհային պատերազմը:

1915. — Ցերկորդ հստերնացիոնալը զենքը վայր է դնում հենց պատերազմի տառաջին որերին:

Ամեն ինչ տարգում է «պատերազմական որենքներով», չնայած տեղ-տեղ հաջողգում է գործադուլ կազմակերպել:

Բոլեւիլյան լոգունությունը՝ «կորչի պատերազմի», «քավ է մեր յեղբայթներին մրան մեջ խեղիքի», «կորչի միավետքությունը», «կեցցե նեղափոխական պրոլետարիատի նոր ինտերնացիոնալը»:

1916. — Կառավարությունը խիստ միջոցներ է ձեռք առնում վոր գործադուներ տեղի չունենան, բայց գործադուլավորներին հաջողվում է նույնիսկ ցույցեր կազմակերպել Ռուսաստանի զանագան անկյուններում:

Լողունգներ՝ «կորչի պատերազմը, կեցցե հստերնացիոնալն ու բանվորի պայքարը»:

Բանվորությունը ուժեղ պայքարում է յեղբայրապան պատերազմի դեմ յեվ միջազգային խաղաղությունը: Վայրի պատերազմի պահանջում:

1917. — Առաջին ազատ Մայիսի 1-ը Ռուսաստանում:

Պատերազմը շարունակում է «մինչև վերջնական հաղթանակ» լոգունով: Ժամանակավոր կառավարությունը նոր ու նոր զաներ է ուղարկում դեպի պատերազմի դաշտը:

Բանվորությունը հաջողվում է, վոր ժամանակավոր կառավարությունը տրամադրի չե վերջ տալ յեղբայրապան պատերազմին:


Բոլեւիլյան լոգունությունն ին՝ «կորչի պատերազմի», «կորչի կապիտալիստները», «Պատերազմ» պատերազմի դեմ»:

1918. — Հոկտեմբերից 6 ամիս հետո: Լենինը Ռուսաստանումն է: Մայիսի 1-ը տոնվում է պրոլետարիատի հաղթանակով սուս և ոսար իմպերիալիստ-ների վատնձգությունների դեմ:
- Լոգունիքներ՝ «Ամեն ինչ խաղաքական կուլի համար»:
1919. — Արդեն հիմնված է Յերրորդ Խոստերնացիոնալը — Կոմիտերնը:
- Կոմիտերնի Գործադիր Կոմիտեի կոչը բոլոր յերկրների բանվորության՝ «Մայիսի 1-ը գարձնել բանվորական հեղափոխության որը Յելլուպայում»:
- Խոս պրոլետարիատը իր ամբողջ յեռանդն ու ուշիք տրամադրում է կոմմանիզմի համար վարած պայմանին:
1920. — Կորիվը ֆրոնտներում:
- Յերկրի վերաշինության համար խոշոր աշխատանքներ:
- Հիմնվում են շաբաթորյակներ:
1921. — Մայիսի 1-ն անցնում է պրոլետարական խոկական ազատության դրոշի տակ:
- Առանձին ուշագրությունն է զարձնվում Կարմիր Բանակի և աշխատանքի ֆրոնտի հերոսների վրա:
- 1922, 1923. — Հիմնական լոգունգներ են՝ «Ապահովել Խորհրդային Հանրապետության մեծությունը», «Սերտ կապ հաստատել բանվորի ու գյուղացու մեջ», «Ուժություն Մերձ-Վոլգայի շրջանի սովորականերին», «Կորչանգիրագիտությունը», «Ամեն ինչ սոցիալխոստական նոր կարգերի համար»...
1924. — Խորհրդային Մայիսի 1-ը առանց Լենինի: Յերդում Լենինի սկսած գործը շարունակելու համար:
- 1925, 1926. — Հերոսական աշխատանքներ յերկիրը վերաշինելու, խորհրդային կարգերը ամրապնդելու և հաշվետվություններ անցյալ աշխատանքների ու նվաճումների մասին:

ՈՐԴԱՀՈ



Փառք Մայիսի մեկին — կապանների խորտակման յեվ աշխատանիքի մեծ տնիք: Փառք Մայիս մեկին — ազատության, գարնան ու ծաղիկների մեծ տնիք:



ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մայիսի մեկը բոլոր յերկրների աշխատավորության խոշորագույն տոններից մեկն է:

Յերկրագնդի բոլոր անկյուններում ամենքը սպասում են այդ տոնին մեծ անհամբերությամբ:

Մանավանդ յերեխաները շատ են սիրում այդ տոնը. սրանց համար Մայիսի 1-ը վոչ միայն հեղափոխական տոն է, այլ և գարնան և ուրախության տոն:

Վորպեսպի ավելի հաջող և կազմակերպված ձևով տոնվի այդ որը, մեր գպրոցները՝ գյուղի թե քաղաքի, պետք և առաջնուց մշակեն Մայիսի 1-ը տոններու կոնկրետ ծրագրեր և գրանից հետո միայն անցնեն աշխատանքի բաժանմանը: Այս աշխատանքներին պետք և լծվի բոլոր աշակերտությունը:

Ծրագրով պետք և նախատեսնելի հետեւալը.

1. Ինչպիսի հնարավորություններ կան ավելացնել վայրում և ինչ նախապատրաստական աշխատանքներ պետք և կատարվեն այդ որպահ համար:

2. Յույցի նախապատրաստությունները (գրոշակներ, լողունգներ, պլակատներ, յերգեր, խաղեր և այլն):

3. Յերեկոյի, ցուցահանդեսի համար նախապատրաստություններ:

Ծրագրի բոլոր թեմաները, նյութը և աշխատանքի ձևերը պետք ե շախկապվեն գպրոցական ծրագրի նյութի հետ (հասարակագիտության, գրականության, գեղարվեստի՝ նկարչության, յերգեցողության և ֆիզկուլտուրայի):

Նախապատրաստական շրջանում պետք ե տեղ գտնեն բավ մըշակված գրույցներ հետեւալ թեմաներով.

1. Կրոնական և հեղափոխական տոններ (հակագրություններ և համեմատություններ):

2. Մայիսի 1-ի պատմությունը (յերք սկսվեց և ինչու յենք մենք տոնում):

3. Մայիսի 1-ը Հոկտեմբերից առաջ և հետո (Հոկտեմբերի նրանցումները) և այլն:

Գալով լոգունգներին, մենք անհրաժեշտ ենք համարում մատնանշել հետևյալների վրա.

1. Միջազգային համերաժողովայի գործումը յեվ սարացումը:
Այս լոգունգը անհրաժեշտ ենցույց տալու համար, վոր այդ որը բոլոր յերկրների աշխատավորությունը միանում է, կազմում մի ընդհանուր ընտանիք և իրենց կուռ ույժերը ցուցադրում կապիտալիստական կարգերի առաջ: Խորհրդային Միության բանվորությունը մյուս յերկրների աշխատավորության հետ միասին իր մարտական ույժերն են հանդես բերում և այսպիսով նա իր պատրաստականությունն ենցագում՝ բոլոր յերկրների ճնշվածների և շահագործողների հետ միասին կոիվ մղել կապիտալիզմի գեմ:

2. Գյուղի յեվ խաղաքի կապը: Ինչքան մեր յերկրում բանվորի ու գյուղացու կապը ավելի յեւ ամրանում, այնքան Մայիսի 1-ի տոնը դառնում է վոչ միայն քաղաքի, այլ և գյուղի սեփականություն: Տարե-ցտարի ավելի ու ավելի մեծ չափով գյուղական մասսաները կապվում են մայիսյան տոնի հետ. այդ որը գյուղը մասնակից եւ դառնում պրոլետարական մեծ շարժմանը: Այդ տոնը մի նոր յեռանդ եւ մտցնում գյուղում:

3. Լենինի պատվերը յերիտասարդության՝ «Սովորել, սովորել սովորել»: Ինչքան մեր յերիտասարդությունը ավելի զինված լինի դիասությամբ, այնքան նա ավելի հեշտ և լավ կկարողանա ոգնել բանվորության և գյուղացիությանը նոր կյանքի շինարարության գործում:

Դանք ցույցին:

Մայիսի 1-ին դպրոցները սովորաբար մասնակցում են ընդհանուր ցույցին: Յերեխաններն իրենց գրոշակներով և լոգունգներով նույն համապատասխան մարշուտով, վորից հետո տոնը կաշարում են կամ դպրոցներում կամ բաց յերկնքի տակ (քաղաքից և գյուղից դուրս):

Յերբեք չպետք եւ մոռանալ, վոր այդ տոնակատարությանը մասնակցելու համար դպրոցները պետք եւ գրավեն և շրջապատող հասունականությանը: Պետք եւ այդ տոնը մուռք գործի մեր հին ընտանիքը բակությանը: Պետք եւ այդ տոնը մուռք գործի մեջ հիմք ձգի: Վորպեսզի այս ները և այստեղ ևս նոր կենցաղի խոր հիմք ձգի: Վորպեսզի այս տոնը կարողանա հետք թողնել մեր կյանքում, անհրաժեշտ եւ վոր տոնը կարողանա հետք թողնել մեր կյանքում, անհրաժեշտ եւ վոր անընդանեն ընթանա նաև հասարակական-ոգտակար գործը, աշխատանքը:

Այդ որը դպրոցներում պետք եւ կազմակերպված լինեն վոչ միայն ներկայացումներ կամ դասախոսություններ, այլ և ցուցահանդեսներ (գիտադրանքներ նկարներով, նկարներ, զարդանկարներ, պատի թերթեր, ամսագիրներ և առհասարակ իրենց անցյալ աշխատանքի բոլոր արդյունքը):

Յերեկույթը կարող եւ կազմված լինել հետեւյալ ծրագրով:

1. Շատ կարճ, բայց հետաքրքիր ձեռվ կազմված զեկուցումներ հետեւյալ թեմաներով՝

ա) Մայիսի 1-ը մինչև 1917 թ.

բ) Նույնը 1917 թվից հետո:

Առաջին թեմայով ցույց կարվի այն կոիվը, վոր մղել եւ բանվորությունը իրեն ազատագրման համար, իսկ յերկրորդով ցույց կտրվի արդեն վորպես Խորհրդային Միության աշխատավորության տոնը—նոր բովանդակությամբ ու նոր բնույթով: Կարևոր եւ, վոր զեկուցումները տարվեն անպատճառ հասկանալի և պարզ լեզվով:

2. Պիեսաներ և բեմադրություններ:

3. Արտասանություններ:

4. Յերգեր:

5. Խմբական խաղեր և այլն:

Այս բոլոր նյութերի խոշորագույն մասը զեկավարում են հասարակագիտության և լեզվի, ինչպես և յերգի ու նկարչության ուսուցիչները:

Տոնի ամենազլիավոր նպատակը պետք եւ համարել և այն, վոր նախապատրաստական շրջանում պետք եւ շատ մեծ հետաքրքրություն հարուցել յերեխանների մեջ և զգալ տալ, վոր խսկապես իրենց տոնն եւ մոռենում:

Բնական եւ, վոր պիտույքները պետք եւ լինեն այս գործում թե ամենաակտիվ մասնակիցներ և թե հասարակության ակտիվության դրվիչները:

Ահա այն կարճ ու հիմնական ցուցմունքները, վոր մենք կարող ենք առաջարկել մեր դպրոցներին:

Ա. ՄԱՅԻՍԻ ՅԱՆ



ՄԱՅԻՍՍԵԿՑԱՆ ԽԱՂԵՐ

1. «Փաղովուրդը նուզիմ ե»

Խաղին մասնակցողները նուում են շարքով՝ մեջք-առջելի. Յուրաքանչյուրը նրանցից կոչում ե իրեն Միջազգային Բանվորական Շարժման կոմիտային տոնակատարության պատմության հետ կապված՝ քաղաքական կան կուսակցության, զեկավարի, քաղաքական հիմնարկության, պատմական գեղքի կամ իրողության անունով. Հեկավարը՝ պատմում ե բոլորի շուրջը և մի սահում պատմվածքով Մայիսի մեկի կամ Ինտերնացիոնալի մասին հիշում ե այն բաները, վորոնցով անվանել են իրենց խաղին մասնակցուները. Նա, վորի անունը հիշվում է պատմելու ժամանակ, խոկույն վեր և հենում տեղից և սկսում շրջել զեկավարի յատեից. Բոլորի անունները տարւց վերջացնելուց հետո, զեկավարը ձայն ե տալիս. «Փաղովուրդը հուզվում ե»:

Խաղացողները արագ կերպով նուում են աթուների վրա. Խոկ ան տեղ մասցողը գտնուում է զեկավար:

Ավելի հեշտ, քան այս խաղի միջոցով, չի կարելի սուխոկ աշխաւյժ և խաղալու շատ տրամադրեր յերեխաներին լսել մինչեւ վերջ մի սահուն քաղաքական պատմվածք:

Նայած յերեխաների ընտրած անուններին, կարելի յեւ գաղափար կազմել՝ թե ինչ են ըմբռնել նրանք այն նյութից, վոր ավել և նրանց պիոներական կազմակերպությունը կամ դպրոցը:

2. «Քաղնոււշաւուր»

Խաղացողները կանոնում են շարքով և նրանցից մեկը գնդուկը կամ թաշկինակը նետում ե մի ուրիշին, հուշելով առաջին տառը, խոկ նա, ուժ նետված և գնդակը, պիտք և առանց մասնելու պատասխան մայիսմնիյան տոնակատարության կամ Ինտերնացիոնալի պատմության հետ կապված քաղաքական գործչի, կուսակցության, քաղաքական գեղքի այդ տառով սկսվող անունը. Որինակ, գնդակ նետողը անվանում է «Փ» տառը Գնդակ ձանկողը լրացնում է «Փարիզի կոնգրես», «Լ» Լիբերալիստ, «Մ» Մարքս և այլն:

«Քաղնոււշարար» կարելի յեւ խաղալ և մի քիչ այլ տեսակ. Միջազգային Բանվորական Շարժումը բաժանվում է 3 շրջանների - I, II և III Ինտերնացիոնալներ. Գնդակ նետողը հուշում է այդ շրջաններից մեկը. խոկ գընդուկը ճանկողը պիտք և առանց մասնելու տան ասված Ինտերնացիոնալի կյանքի նշանավոր գեղքերից մեկը:

3. «Քաղըուկա»

Խաղացողներից մի քանիսը, վոր պիտի գուշակեն, նաև անում են: Մուացողները մտածում են մի վորեւ և նախարարություն Մայիսի մեկի կոմ ինտերնացիոնալի վերաբերյալ, բաժանում են իրար մեջ նախազառության բոլոր բառերը և գուշակողներին ներս կանչում: Վերջիններին մտածնալու ժամանակ, բոլորը միասն սկսում են բարձր ձայնով կանչել - «Քամառել» յուրաքանչյուրը իր բառը: Գնացածները պիտք և տեհն գուշակեն մտածված նախազառությունը:

4. «Քաղպատմում»

Խաղացողներից մեկը կրկնում է Մայիսի մեկի կամ Ինտերնացիոնալի մասին ցեղած զեկուցումներից մեկը: Յուրաքանչյուր կրկնուղ հանելործ ընդհանում է յուր պատմությունը, նարեխնը պիտք և ճանկի նրա միոքը և շարունակե պատմությունը: Անուշագիր լսողը, վոր չի կարգանում խոկույն շարունակիլ ընդհանութած պատմությունը, յենթարկվում է տուզանքի:

Փոխ. ուռակենցի *



1



ՀՀ Ազգային գրադարան

NL0383200

238